

www.ընտան.am

ԺԱՄԱՆԱԿԱԿԻց ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՐԱԿՈՒՅԹԻ ՇԱՅԵՐԳՈՂԻ ՀԱՅԱՐ





Խնբագիրներ՝
Վիոլետ Գրիգորյան
Վահրամ Մարտիրոսյան

ԲՆԱԳԻՐ 7-ի հրապարակումը հովանավորել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժինը:
Ծնորհակալություն ՓՌԻՆԹԻՆՖՈ-ին աջակցության համար

Սամվել Յավրյան
Ես երքևում եմ, ես կողըն
եմ,
Ես ամենաեզրում եմ:



Գագիկ Կիլիկյան և Մհեր Բեյլերյան

Մհեր. – Մոտենում, ասում ենք՝ կյանք, տեղեկանքի համար ու ն պիտի դիմենք: Գագիկ. – Տռուսիկը բացում է, մթով՝ որն ուզում եք, համեր:

Մհեր. – Լավ քչփորում ենք, բայց մեր ուզածը չենք գտնում:

Գագիկ. – Դու չես գտնում, ես ին գտնում եմ:




Գոհար Նիկողոսյան

Տղե՞ր, տղե՞ր ու տղե՞րք: Ասես - երկնքից են մաղվում: Թափվում են, տեղ-տեղ: Եղբան շատ տղա կար աշխարհիս մեջ, ու ես չգիտե՞մ...



Հարեթ Մուրադյան

Հիմա ո՞ւ լու տանեմ ինձ, այս հոտած լեշս ո՞ւ քարշ տամ, ո՞ւ մ տամ, ո՞ւ մ նվիրեն ժանտախտի այս բույնը, լրվող մանկան ո՞ւ մ դրանը թողնեն, սարսափելի այս պարզմին ո՞վ է արժանի, ո՞ւ մ բախսն է, որ չպիտի բերի...



Նարեկ Նիկողոսյան

Սերը հասկացավ, որ ինքը հիդ է. նա պիտի ծներ վերջապես...

Կարինե Գասպարյան
Ոչինչ, այդպես էլ է այստահում:


Գ. Գրիգորի

Ինչևէ, Արմենն իմն համար մնաց Որպես մի Շահաջան թօթէօ:



Սամվել Մկրտչյան

Թող բոլորը երգեն՝ ստամբուլն արյան ծով է ու փոթկան: ոգու սով է:



Վահան Իշխանյան

Էղպես բաներ էլ չնտածն: Միրուն չի: քո մանան ա: Էն էլ ռորիկ հոպարը:




Գրիգոր Խաչատրյան

Եվ ծերունին լուռ չարչարանքով բերում է ճիշտ եզրահանգման. մեր գրողներից ոչ մեկն իրեն որպես հուլք չկարողացավ օգտագործել դրական կերպարի մարմնավլորման գործընթացում, այդպիսինը չիմերու պատճառով, որ իրենց բացի ուրիշ զոհ չին:

Կահրամ Մարտիրոսյան

Վիրավորի տեսքը, արյան մուռ հետքերը, որ նա թողնում էր գետմին, հիշեցրեցին գործադիրին, որ արդեն մի քանի օր է, ինչ արյուն չի ծծել:



Արծուի

«Ապե, հայ ե՞ս... բա ես ի՞նչ ավիճակդ»...

Ֆորում

PS. o la la, inch nrbankat jurnalist es. verjin hachvov jurnalistnere misht el etevitz en asum.

anna

Սարյանը 10 թվին «Երկնագոյն Վարդ» խմբի մեջ էր, բայց հետո եր երեան եկավ վշացավ իր ազգայնականության պատճառով:

Հարութ Միջնորդանա

Իրա համար էլ հայաստանը բանտ է: ուղեների ու նորի բանտ: ի՞նչ է մնում անել գրողին. կամ(1.) պիտի մտքիր ազատություն չտաս, մտքով չանցկացնես, կամ(2.) մտքով անցկացնես, բայց չգենս, կամ(3.) մտքով անցկացնես գրես, բայց չտպես, կամ(4w.) մտքով անցկացնես տպես ու հալածանքի տակ ընկճվես ու վախենաս կամ(4p) պայքարես, կամ(5.) զնաս հայաստանից ու ինչ ուզում ես մտքով անցկացնես, ինչ ուզում ես գրես, ինչ ուզում ես տպես:

Վահան Իշխանյան

ՍամՎել Յավոյան

* * *

Դե, եկեք փոխարինենք միմյանց
Հայացքներով, կոնֆետներով, ծաղկեփնջերով,
Հնացած հարցերով ու պատասխաններով,
Օգտակար խորհուրդներով,
Սեղմված ուսերով,
Թափանցիկ բառերով,
Դոդացող ծնկներով,
Ալարկոտ մատներով,
Թանկ բաժակաճառերով,
Երկիմաստ շարժումներով,
Մինչև չեն եկել իսկական տերերը
Այս տարածքների,
Վառված կրակով
Այստեղ ապրողների:

* * *

Հոգերուժարանում
Նկարչին երազ եկավ,
Որ արյունոտ մարմինները
Սպանված գազանների
Վերափոխվում էին հսկայական մրգերի,
Նրանք հանգիստ ճոճվում էին
Եվ կամացուկ զրնգում:

* * *

Տրոլեյբուսում թե տրամվայում
Գնում էր հասարակ մի մարդ:
Նա բոլորովին հասարակ մարդ էր:
Դին կոշիկներով,
Դին բաճկոնով,
Եվ իին նոխրագույն դեմքով:
Նրա ձեռքում թղթեն կամ ցելոֆանե կապոց կար,
Կոնֆետներ էին կապոցի մեջ,
Թե կարտոֆիլ,
Բայց ավելի ծիշտ նարինջներ էին:
Ես այդ ժամանակ տոնս վաճառողն էի
Տրոլեյբուսի թե տրամվայի...
Ես հարցրեցի. ու՞՞ եք գնում.
– Իրականության սահման, – պատասխանեց նա:
– Ահա ձեր տոնսը, ու՞՞ եք գնում:
Նա հանգիստ ապատասխանեց.
– Իրականության սահման...
– Իրականության սահման...

* * *

Երբ քուն կառնեմ հանգիստ ծառի տակ,
Երբ կսփովեն մտքերս և փետուրներս,
Պետք չէ ինձ տեղաշարժ անել
Թաց կարմիր ծեռքերով,
Նույնիսկ եթե ձեր ձեռքերը թաց չեն և կարմիր,
Միևնույն է,
Պետք չէ ինձ տեղաշարժ անել...

* * *

Վերջին ժամանակներս
Զգում եմ նրան իմ ետևում:
Շնչում է գանգիս, դողում է ողնաշարս,
Եվ հանկարծ հարված՝
Ընկում եմ խոտերի մեջ, փակում ձեռքերով դեմքս...
Ծիծաղում է ...
Նայում եմ, մենակ եմ:
Դանդաղ կանգնում եմ, նայում,
Շարունակում ճանապարհս:
Նրանք սրտիս տակ են,
Որտեղ մութ-մութ է:
Բռունցքով պատին՝
Կքարանաս...
Դատարկ է...
Մի-քիչ կքաշվես...
Նորից բարակ թելն է կոկորդիդ:

* * *

Ամբողջ ճանապարհին, մինչև տուն,
Տեղում դադար չնստեց:
Ինչ-որ բան աչքն էր ընկնում,
Իսկ տանը
Դանկարծ սառեց:
Արորին նստած
Մտածում էր,
Նայում սկավառակներին,
Պատերի նկարներին,
Դետո շունչ քաշեց
Ու ծիծաղեց:

* * *

Երբ ես մահացա
Չկար ոչ մեկը,
Որ կարողանար ասել...

4

Ուղղակի որսորդը ոչ մի անգամ չի վրիպել,
Ուղղակի թռչունը թռչել չի սովորել,
Ուղղակի ծեռքերը հոգմել են զենք բռնելուց,
Իսկ խնորդ չորացավ շատ արագ:
Ողղակի տրամվայը վերցրեց ու գնաց,
Ուղղակի պարանը անհետացավ,
Ուղղակի ամեն ինչ եղել է...
Ուղղակի մահացած մարդը
Սուտ չի խոսում:
Ինչ-որ տեղ կորցրեցին, ինչ-որ տեղ գցեցին,
Ինչ-որ տեղ չկերան, ինչ-որ տեղ չխմեցին,
Գնում էր ուրախ տարին պատերազմի:

Բառ՝ իմ նիհար ու տկար,
Ծնվեցիր դու այստեղ,
Ոչ սրանից, ոչ նրանից,
Իբրևս հինգերորդ ոտքը կաղ շան,
Նիհարկե հասկանալի է ինչից,
Միևնույնն է՝ աբսուրդ է:
Եթե ոչ ինձ, ապա ուրիշներին՝
Կաղերին:
Դանգստացիր, ես լոռում եմ,
Ես ներքւում եմ, կողքը,
Ես եզրում եմ, որտեղ լռում եմ,
Ես ամենաեզրում եմ...
Ինչ-որ տեղ եզր է, ինչ-որ տեղ դրախտ,
Ինչ-որ տեղ դժոխք, ինչ-որ տեղ չկա,
Որտեղ եզրն է, այստեղ դժոխք է:
Գլխով պատին, դուռը փակիր, մի նայիր,
Ներքև կը նկնես, եթե քամին ներսում է,
Եթե՝ ոչ, կլինես քար սարի տակ պառկած:
Ես չգիտեմ, կը նկնեմ, կթռչեմ:
Թռչելու ուժ չունեմ, իսկ պառկել չեմ ուզում:
Կլինի գիշեր, կգոռան, կշրջվեմ, կճոճվեմ,
Կշարդվեմ՝ միևնույն է,
Մինչ առավոտ կծեծեմ բոլոր դռները,
Կքայլեմ այն վայրերում, որտեղ մենք չկանք:
Դեմ այնպես, միզուցե հանդիպեմ մեկնումեկին,
Կխոնարհվեմ մինչև հատակ:
Ծանր է այստեղ պառկած,
Եթե լինել մի քիչ ուժ այստեղից գնալու,
Կամ էլ եզրից մի քիչ հեռանալու,
Գոնե մեկ մետր, կնստեի, կծխեի,
Միզուցե հոգին թռողնեմ...
Դանգստացիր, միշտ չէ, որ ինձ հետ հեշտ է:
Ես այն մարդը չեմ, որ ես կամ...

Ես դեռ հեռու եմ...

Ես ներքւում եմ, ես կողքն եմ,
Ես ամենաեզրում եմ:

Կլինես դու լույս՝
Ծնված մթության մեջ:
Կամ էլ մթություն՝ ծնած լույս:
Կլինես կապույտ անձրև՝
Ծնկած ծյան վրա,
Կամ էլ ամպերից մեկը:
Կլինես պինդ օղակ՝
Ոսկե շղթայում:
Կլինես դու հող հեռավոր երկրի,
Կամ էլ նա, ով այդտեղ քայլում է:
Կլինես փետուր արծվի թևին,
Կամ էլ հենց արծիվ...
Կլինես կաթիլ գինու կարասում,
Կամ էլ...

Ես վաղուց չեմ լացել,
Ես լացում ու երգում էի:
Դեսոր սկսեցի լսել,
Պարզվեց՝ տանը շատ ժամացույցներ կան,
Եվ ոչինչ չի լսվում:
Ես զարմացա:
Սիրտս բարախում է առաջվա պես:

Լոռության մեջ
Ղեմքով ամուր սեղմված
Գիշերային պատուհանին
Ես շնչառությունս պահած
Բռնում եմ բառերը,
Ասված ցերեկը, որոնք օրորվելով թափվում են
Տաք հողին:

Գոհար Նիկողոսյան

Պտուղը հորինված տղերքի ու անհորին անձրևի ժամփին

Խնձո՞ր: Ի՞նչ խնձոր: Խսկը - արգելված: Ինչի՞... ուրիշ տեսակի է՞ լ լինում:

Տղերքից մեկն ինձ թերթից կանչեց: Անբավարարվածի մեկն էի՝ Յավատքի ճամփին չոչ անող մի զը՞ռ էօ: Վեր կացա, պայուսակու հազա: Մեջը՝ աչքի ուղարկութիւն տեղակ մի ընկուզաչափ խնձոր: Աչքս ինձ չկաչի: Գնացի: Ինացա: Որ

Ամուսնանալու

Համար

Պետք է հայտարարություն տամ – հայտարարություն վերցմնեն: Ալամ աշխարհով մեկ խայտառակ լինեմ-մնամ:

«Սիրո ստրատեգիաս ու տակտիկաս այդ ոճից չոլախ են, ժողովուրդ, չոփ-չոլախ: Ես կնգա սիրահարվող և գլուխը այգաբացներին զարկող տեսակն են: Յավանու՞ն են»:

–Դու... սիրահարվել ես, – ասացի եսուես, ինձ ու ինձ: Միշտ պինգվին աշխատիր Սիրո չոլերում, ընդմիշտ հուսա... Սառուցյալ օվկիանոսից փախած ո՞վ թռչնակ:

Ու, ճարահատ, անձրև հորինեցի, մինչև մենությունս լոխ թրջվեցի: Վեր կացա (ինձ նստած չի սագում), թերթեցի լրագիր կոչվածը, ապա լուսանկարով տուժած տղուն նվիրելիք պատմվածքիս անդրադարձա, որ նախքան գրվելն ինձ խարխրում էր, իբր, հերիաք է:

Իսկ: Յամածայն հերիաթօրենքի՝ ես արքայադուստր եմ: Եղ դեպքում էլ... ինչի՞ են պսակվում որ... Գումարած - գերեզանիկ ամուսնություն, եթե վերջացող հերիաք է, երեք խնձորն էլ՝ վրեմ, հանկարծ վերևսից ընկնելիս վնաս-մնաս չտան...

Ուրեմն: Լրագրից պատմվածք տեղափոխվելիս պատմվածք չստացվեց, այլ՝ նման մի բան: Այրացա-զայրացա: Սեփական պատմվածքից մի հսկյայական տողատակ քաշեցի ու ճիպոտ անվանեցի: Ճիպոտ անվանեցի և դա քաղեցի: Դա քաղեցի և ճիպոտը գրիչ անվանեցի: Գրիչ անվանեցի – քաշվեցի, քաշվեցի – ծանր նստեցի, ծանր նստեցի ու թեթև գրեցի:

–Երկու երեխա՝ հերախսառը կես-ճամփիդ թողել, կանգնել ես հորինված անձրևի ու լավ տղերքի ճամփին ու չես էլ իմանում, որ անձրևը հորինված չի լինում, տղերըն էլ լավ ու վատ չեն ջոկում: Փոխարեն ինձ սիրահարվեն, սիրահարվում են «ճըշտին»*:

«ճըստ». մատնեմատովս քունքիս... սպառնացի:

–Ուշքի արի, Պեծյա, որ նորից ուշաթափվես: Յենց որ... ինձ սիրահարվողների պտուտահողմը բռնկվի, ես «ճըստ» հավատացյալ կամ գրող կդառնամ: Եվ կամ՝ 2-ը միաժամանակ: Քանզի այս կյանքից լավ հոտ չի՞ փչում, թե խելք դնեն անբավարարված-դժգոհ էլ կմեռնեն: Ինձ... հարցնում են, ինչի՞ երեխաներիդ հորը չես վերադառնում: Չես ամուսնանում – ինչի՞: Ծնութ: Նորից, նույն մարդու հետ:

Պատասխանում եմ.

–Երեխաներիս կողմից բարեկամ է, ո՞նց ամուսնանամ: Են էլ՝ եղքան ակնանձրւից էս կողմ, էն էլ՝ նույն մարդու հետ: Ես...

ճըստ...

Այսուհետև այնպես եմ գրելու, որ ինձանից մրսեն իրենց ամառանոցաբնակ կարծողները: Ու սպառնացի՝ թերթեցի տղուն.

–Ես քեզ... ես քեզ մի այնպիսի՝ նամակ կգրեմ, որ ինձանից մրսես ճշտախառը: Դու... կծիծաղես, իսկ ես – կարտասվեմ հոնգուր-հոնգուր, լոք-լոք, գրամ-գրամ, որովհետև, արի ու տես, ես 100 կաթ արցունքից քամեցի այս խոսքը, որ երեկ առավոտ քո լուսանկարված-տանջված դեմքին մի ամրող ծիծաղ ուրվագծեց:

Ինձ այդպես թվաց: Ի՞նչ արած: Դու՞ր ես գալիս՝ ինձ: Ի՞նձ՝ ի՞նչ: Գրիչս քո ծիծաղի մեջ թաթախում և քեզանից վերջնականապես ազատագրվելու... դարդից քեզ նամակ են գրում: Թե չէ... առհասարակ, թե իսկական լինեիր, իենց՝ ծոցիս մեջ, ինչո՞ւ էիր փոխվելու, հը՞: Էլի՛ ինքնաթալանում, կողմնակի, թալանչիություն - եկամուտս չհաշված:

Դե՛, անշարժ պահանվիր քո Լույս-նկարում, մինչև ավարտեմ, պաշտելու տեղակ, քեզ սիրահարվելու այս մենամարտը՝ լիովին: Կենսամարտը՝ դիցուք. այս տժուժագին:

Գրիչս... թաթախում ծիծաղիդ մեջ, վերջնականապես քեզանից ազատագրվելու դարդից թեզ նամակ են գրում,

6

արի ու տես: Եթե իմ մեջ հաստատվես, կրծքավանդակս ամբողջովին կգրավես: Այնտեղ խնձորենի կա: Բետոնին
արնատ ձգելու գործի վրա է: Դեռ – չի՝ ծաղկել, պտուղ չի տվել, ճիպոտ կսարքես, սիրտս կձաղկես:

Հորինված խնձորս թաթախում եմ հորինված անձրևում, այն ցամաքեցնում եմ քո հայացքով, վերջակետից
վերջակետ:

Սե՞ր իմ, պտուղն, ավաղ, քո ներսում անհետացավ... Տու՞ր ինձ իմ խնձորը և կամ էլ՝ կե՞ր:

–Ես սիրահարվել եմ, – ասացի ես ու ես, ինձուինձ:

... Վեր կացա, իրական փողոցի մեջտեղում թթվեցի ու... ի՞նչ տեսնեմ... Կաթիլ-կաթիլ, փաթիլ-փաթիլ, թելիկ-մելիկ
հայացքներ, ժպիտներ, բառեր են թաթում այս լույս աշխարհում: Իրական-իսկական-շոշափելի տղա՝ ինչքան
ուզես: Տղե՞րք:

Մողերը ու տղերը: Ասես - երկնքից են մաղվում: Թափվում են, տեղ-տեղ: Էղքան շատ տղա կար աշխարհին
մեջ, ու ես չգիտեի՞...

Բա... ինչի՞ եմ մենակ մնացել: Առաջին անգամ եմ տեսնում-իմանում, որ գոյություն ունեն: Անխտիր են՝
հաստատ: «Բայց»-ով են սկսվում:

Իսկ Դու

թափանցիկ ես:

Թափանցիկ ես այնպես...

Միրտս... քեզ կպավ: Կպել քո հայացքին ու պոկ չեմ գալիս: Փակել միակ-հորինյալ խնձորս, փակվել ես նրանով:
Տու՞ր ինձ՝ վերադարձրու: Ու կամ էլ՝ կեր: Կարող է՝ ռոմանտիկ եմ: Այս քեզ դժբախտություն: Անգին է այն, ոչիմաց
չարժե: Ինձ տուր անգին խնձորս կամ էլ – մի՞ տուր:

Ես քեզ թերթից հանեցի: Մկրատս լավճ է: Յանեցի-գրկեցի, կրծքիս պահեցի, սրտիս մեջ պահեցի, փոշմանեցի,
էլի հանեցի, վալս պարեցի, վերջում համբուրեցի, ամենավերջում ծոցս դրեցի, նորից հանեցի ամենա-ամենա-
ամենավերջում խելագարության լոգանք էլ ընդունեցի:

Խելագարության լոգանք

«Ինչու՞ ծանոթանանք: Եթե ծանոթանանք, իրար, ի վերջո, կկորցնենք: Ի պատասխան քաշեցիր, ինձ ջիշիլ
գցեցիր քո՝ լուսանկարված սիրտը:

–Մի հատ է, իմն է – ասացիր: – Չեմ կարող քեզ տալ:

Յանեցի...

Միրտս:

–Վերցրու, ասացի: – Ուրիշ մեկն էլ ունեմ, որ... հենց՝ քո մեջ է: Ախր... Դու՛, ամենք, հատ-հատ, պարտավոր էիք
ինձ սիրահարվել, է՞...

Յենց այդ ասացի,

Դե լավ, թե որ այդպես է, իմ սիրտը քեզ՝ փեշքեց: Վերցրու: - Ամաշեցի՞ր... Քո սիրտն իմ սրտով ծածկեցի: Մեջը
սեր չկար, որ թաղեի: Յիմարություն: Թե չէ՝ իրականությունն իմաստու՞ն է, հա՞: Տե՛ս՝ գալիս է իսկական, անհորին,
երկնառաք անձրև: Ընկել - զգայական քունջերում, խոռոչներում, ծակերում ենք փնտրում սերը: Ինչի՞ է, էղքան
պստի՞կ է, հա՞:

Սերը

հայացքներում,

ոտնածայններում,

հառաչներում,

Բառերուն է պետք գտնել, փնտրելու պահերը՝ չիաշված: Փնտրեցի: Երկու սիրտ՝ իրարով փակված, ու մեջն էլ՝
սեր, չգտա՞:

Ես՝ հսկա,

Ես - անսի՞րտ աշխարհում:

Յիմի... հասկացա՞... Պտուղը՝ արգելվածը, ի՞ն սիրտն էր: Իմը... խնձորի չեր նման, քոնն էլ՝ տանձի, ոչ բանի էր
նման ու ոչ - բանանի, այլ չրթած սերմի սոսկ՝ մեկ երեսակին:

Խելագարության լոգանքն ավարտված է: Օճառի վրա անձրևս ցամաքեց: Ե...հե՞յ... կսկծու՞ են գրում.
Խելագարության լոգանքում էլ եք նույնը, երագում էլ, կյանքում էլ, լուսանկարում էլ:

www.բնագիր.am

Ե՞ր եք փչացնում մեզ: Ով՝ կույս՝ կուսությունից եք զրկում, ով էլ՝ զրկված՝ զրկում եք ձեզանից՝ երբեմն-երբեմն:
Փուշ աշխարհ: Քեզ դեռ կլցնե՞նք սիրով, առանց փակելու – թաղելու՝ առանց: Մենք դեռ կզանք քու հախից:

Այս ինքնաբուիս անձրևը վկա, որ մաղվելիս արցունք է թվում, շխրտալիս՝ ծիծաղ, իսկ ցեխաջուր դառնալիս էլ

էն՝ մի ջուրն է, որ կա:

Պիղծ շաղա՞ն ենք,

Թե՝

Սրբազն թլիֆ, տեսնես...

1997 թ.

7

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍԵԼԻՍ

Ես շատ կուզեի քեզ ատել
ու ես ինքս ինձ չեմ ներում
քո որդոց դու վաղուց քառատել՝
բայց կանչում ես տանջում ու գերում

Ես շատ կուզեի քեզ լքել
հեռանալ մոռանալ - թարսի պես՝
քո որդոց դու սովոր ես լլկել
հնամաշ վավաշոտ հարսի պես

Ես շատ կուզեի քեզ պահել
սրտիս մեջ անրիծ ու սիրուն
այլ ոչ թե մնալ մի ջահել
որն անհույս՝ մի բողի է սիրում

ՇԵՇՏԱՆԱՐԺ ՏՈՂԵՐ

մի թող ինձ անավարտ, թող՝ անչափելի
մատնացուց մի արա հանց 9 մմ տրամաչափ
առանց այդ էլ, իմ չընադ Անաբել Լի,
ինձ երես են տվել աղջիկները լաչառ
երես են թեքել ընկերներու քաչալ

մի թող ինձ անպարփակ, թող՝ չհասկացված
մի ասա թե քանի գույն ունի ծիածանը
նոր հանելով մոգոնիր, Տեր իմ Աստված,
ես գիտեմ՝ ինչ-որ տեղ վերջանում է կածանը
մի օր կրակում է պարապ հրացանը

մի թող ինձ անտերունչ, թող ինձ չափավոր
ես հասկացել են արդեն թե մատնիչը ով է
թե ուր է գնում անմեռել մի թափոր
թող բոլորը երգեն՝ ստամբուլն արյան ծով է
ու փոթկան: ոգու սով է:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

14-րդ փողոցը
ան(որովհետեւ արցունքներս լի են աչքերով)հետանում է
Որովհետեւ միայն ծշմարիտ բաներն են միշտ
ծշմարիտ որովհետեւ չեն կարող լինել ծշմարիտ
է.է. քամինզս

չտեսանք, եղաք Պո, սթափ երկինքը,
չտեսանք Գաղաաղը էն սուրբ
կարդացինք ուշադիր միակ Գիրքը-
բույնը մնաց նույնը՝ մսուրք:

ու մեր բույնը մնաց նույնը՝ բարդակ
ճակատի մեր խարանը՝ գնչու
վարժվեցինք մենք գրել ու կարդա-
շինացանք թե ինչու

չտեսանք, չինացանք թե որտեղ
Չարենցին խցկեցին հողի մեջ
(Եզրա Փառւնդը գտել էր մի դեղ
որը սուս էր ու հեչ):

իսկ լալկան պոետները հերթով
երազում են մի զիլ շիրմաքար-
«աստ հանգչի հանճարեղ մի քերթող»-
(կամ գինու մի տակառ):

լացեցի ես մի սուս
սուեցի ես մի լաց
ապրեցի սուտմեռուկ
ու մեռա ես ձեռաց
հենց ձեռաց ապրեցի
շնչելով հենց էնաբս
հենց ապրած պարպվեցի
անիմաստ, – ՊԱՐՉԱՊԵՍ:-
պարտվեցի անիմաստ
հաղթեցի ձեռի հետ
չքոնեց ոչ մի մաստ
չմնաց ոչ մի հետք
լրեցի ես մի ցակ
ցավացի լրություն
բռնացա ես անցավ
ցավալով բռնություն
ես իջա բարձունքներ
բարձրացա ես ներքեւ
քրքացի արցունքներ
վայելեցի վերքեր
ես ընկա բարձր կյանք
բարձրացա ես՝ ընկած-
մենք ողջ ենք, դեռ կանք-
շիրմաքար իմ շան քած

IN MEMORIAM 2003

ՄԻ ԱՆԳԱՄ, ԵՐԲ ՄՈՒԹ ՑԵՐԵԿ ԷՐ գլուխ 1

մի անգամ, երբ մութ ցերեկ էր (ոնց հիշում եմ՝ հենց երեկ էր),
մեկ էլ՝ դուռս թակեց մեկը, մեղմ թակեց նա դուռն իմ տան
իմ Ագրավն է, – եկավ միտքս, – ախ կառնեմ նրան ես զիրկս
կպատճեմ ես անելիքս, որ հիշի ինձ հավիտյան
կրացեմ նրան ես սիրտս՝ հոն հրդեհ կա ոչ մատյան-
ընդամենը այդքան բան

գլուխ 2

բացեցի ես իմ տան դուռը, որ անցնի սրտիս մրմուռը
մեկ էլ՝ ասես երկնքից էր - մի Յրեշտակ խուժեց ներս
մոռացած պատշաճ ողջունը՝ նա կարծես մտավ իր տունը
ու էս խենթ խանդոտ խաթունը բազմեց խեղճիս առերես
ես խենթուկ խանդոտ խաթունը բազմեց խեղճիս առերես -
«մի քիչ գինի կրերե՞ս»

գլուխ 3

այդուհետ սույն Յրեշտակը արեց են նույն առաջարկը
(սիրուն դեմքը սպիտակ էր, տեսքն այնպես հանդիսավոր).
«արի տուն գնանք, – ասաց նա, – Յոր մոտ բարձրանանք, – ասաց նա, –
երկնքում է քո ծիշտ տեղը, դարձիր աստղ գիսավոր
երկնքում է բուժիչ դեղը, դառնանք աստղ գիսավոր»
ու էնքա՞ն հանդիսավոր

գլուխ 400

«ինչ որ է՛ քո սուրբ անունը, ետ դարձիր դեա քո անհունը
ետ դարձիր դեա քո անդունդը՝ քո դրախտը ահավոր
չթողնես ծերնակ թեւերդ, ուտիճներդ ու դևերդ
մի խախտիր իմ մենությունը, թող իմ տունը մենավոր
քո ժանիքն հանիր սրտիցս, թող իմ բույնը մենավոր-
Յրեշտակը թե՝ EVERMORE:

10

Վահրամ Մարտիրոսյան

Գրելու արվեստը

«...Գործադիրին տեսնելով՝ երկու անտուն հարբեցողները, որ մեկնված էին շքամուտքի առաջ, դեպի պատը քաշվեցին, որպեսզի նրան տեղ տան՝ անցնի: Գործադիրն իրեն ստիպեց ժպտալ նրանց: Անտունները չտեսան ժպիտը, որի հայտնվելը նույնիսկ օրը ցերեկով էր դժվար նկատել գործադիրի ներս ընկած ու ծուռ շրթունքների պատճառով, ուր մնաց՝ այն խավարում, որ տիրում է մեր շքամուտքերում: «Կարո՞ղ ա մի հատ պապիրոս տաս», – ասաց անտուններից մեկը՝ համեմատաբար երիտասարդը, որի բերանում միայն վերևի կտրիչ ատամներն էին մնացել, ինչը դժվարամատչելի էր դարձնում նրա խոսքը զրուցակիցների հսմար: Գործադիրն ուզում էր չլսելու տալ և անցնել, սակայն այնուհետև չքացանեց, որ միզուցե իրեն հայինեցին: «Ի՞նչ ասիր, արա, կարգին խոսա՞ իմանանք»: Անտունները չհասկացան գործադիրին, որը բառերն արտասանում էր սեղմած ատամների արանքից, ընդ որում, ոչ միայն վեճի բռնվելիս, զայրացած վիճակում, այլև՝ ամենասովորական տրամադրության մեջ ևս, պարզապես խոսվածքն էր այդպիսին: «Կամ տուր, կամ էլ մի տուր. ի՞նչ ես բլրում, է՞», – դժգոհեց երկրորդ անտունը, որը համարյա վաթուն տարեկան էր և առհասարակ ատամներ չուներ: Գործադիրն ավելի կոպիտ հնչերանգով կրկնեց իր խոսքերը, որոնց իմաստը հարբեցողները դարձյալ չըմբռնեցին: Այսուհանդերձ, նրանք այլևս չպատասխանեցին՝ խուսափելով գլուխ դնել տարօրինակ անձանորի հետ, որը կպչուն մարդ դուրս եկավ, քանի որ երրորդ անգամ ևս նրանց ուղղեց նույն հարցը: Կտրիչ ատամներով անտունը, ջանալով հատ-հատ արտաքերել բառերը, երկրորդեց ծխախոտի խնդրանքը: Գործադիրն այս անգամ հասկացավ ասվածը, և տեսնելով, որ իրեն մեծ պահանջ չեն ներկայացնում, սկզբնական շրջանում ցանկանում էր այն բավարարել, ապա սրավիկեց՝ կռահելով, որ իրեն ապացույց կթողնի դեպքի վայրում. իր սիզարետից միայն նախագահի մտերիմ ընկերն ու պաշտպանության նախարարն էին ծխում ամբողջ Հայաստանում, և այդ փաստը լայնորեն հայտնի էր հանրությանը: «Զեզ համար առեք-ծխեք, ես պարտավոր չեմ բոլորի սիզարետով ապահովել», – քթի տակ ասաց նա: Անտունները նրա քրքմնջոցից առավել ևս չկարողացան ոչ մի բառ ընկալել, և սոսկ բնագոյն նրանց հուշեց, որ կտրուկ մերժում են ստացել:

Գործադիրը մտածեց, որ մինչև չորրորդ հարկ բարձրանալը, այնտեղ գործն ավարտին հասցնելու ու վերադառնալը հարկավոր կիմի կշռախատել և որևէ լուծում գտնել այս անտունների խնդրին: Անմեղ մի հանդիպում էր թվում, որը հնարավոր չէր որևէ կերպ կանխատեսել, բայց սրանք անպատեհ վկաներ էին, որոնք կարող էին վտանգել ամբողջ ձեռնարկի հրականացումը: Անշուշտ, դրական մի հանգամանք կար. մթության շնորհիկ իր դիմագծերը պետք է որ տարբերակած չլինեն: Բացի այդ՝ այս ուշ ժամին սրանք միշտ հարբած են՝ նույնիսկ մի քանի մետք հեռավորությունից էժանագին խմիչքի հոտը դիպավ գործադիրի ունգերին: Մյուս կողմից պետք չէր մոռանալ, որ թերևս շրջնոլիկների աչքերը թափառական կյանքի երկար տարիների ընթացքում սովորում են տեսնել մթության մեջ կատունների աչքերի նման... Վատագույն դեպքում մի ելք մնում էր. զենքը հետո էր, քանի որ երբեք չէր բաժանվում իր իսկ իրամանով իրեն շնորհած անվանական ատրճանակից, սակայն այն գործադիրներ իրի էր անկանխատեսելի հետևանքներով. բրագիլական արտադրության հրագենը ևս հազվագյուտ մակնիշի էր:

Այդպես էլ որևէ եզրակացության չհանգելով՝ գործադիրը վանեց գլխից բոլոր ավելորդ մտքերը, երբ հայտնվեց առևտորի նախարարի դռան առջև, որին նա կենտրոնացած, խնամքով ամրացրեց պայթուցիկը: Դրսից մերթափանցող աղոտ լուսի տակ երևում էր, որ դուռը աչք ծակող շքեղություն չունի, ընդամենը գորգ-մանրահատակ էր պատկերում, ինչը նորածն էր տասնինգ-քսան տարի առաջ, և հավանաբար խորհրդանշում էր, որ տուն եկողները կարող են նույնիսկ քայլել տանտերերի դռան վրայով: Աստիճանահարթակում այլևս անելիք չունենալով՝ գործադիրը պատրաստվում էր իջնել սամորություններով, երբ ներքևից անմարդկային աղաղակներ եկան: Առանց դույզն իսկ վարանելու նա վագեց վերև, դեպի տանիք, որի դռնակն իր բախտից բաց էր: Այստեղ փոքր-ինչ շունչը տեղը բերելուց հետո նա օդանցքներից մեկով դուրս եկավ կանգնեց տանիքի թիթեղների վրա, ապա տոտեսուտ առաջացավ մինչև երկաթ ցածր բազրիքը և նայեց ներքը: Դիմացի խաչմերուկի անկյունադարձից թեքվելով, ձեռքերով փորը բռնած մոտակա այգու կողմն էր փախչում անտուններից մեկը, կարծես թե՝ ավելի երիտասարդը: Նրա հետևակից, խոհանոցի մեջ դանակը շողացնելով, վազում էր երկարահասակ, խոշոր անդամներով մի կին, հանձին որի գործադիրը ճանաչեց իր սոցիալական ապահովության նախարարին:

Վիրավորի տեսքը, արյան մուգ հետքերը, որ նա բողոնում էր գետնին, հիշեցրեցին գործադիրին, որ արդեն մի

քանի օր է, ինչ արյուն չի ծծել: Կասկածելով հանդերձ, որ այդ անտում-անտիրական հարթեցողի արյունը ժողովրդի արյան սովորական քաղցրությունը կունենա, նա հանկարծակի հիշեց, որ արտասահմանում կերել է ընտիր ճաշատեսակներ, որոնք ոգելից խմիչքների մեջ էին եփված: Մտածեց, որ վիրավոր թշվառականի դեպքում էլ միգուցե ալկոհոլը նույն ազդեցությունը գործած լինի: Չկարողանալով անսպասելի ծագած ծարավի վրա բռնանալ, նա տանիքի վրայով գնաց մինչև հաջորդ օդանցքը, որպեսզի այնտեղից իշնի նյուու նուտքը և հետապնդի անտումին: Սակայն անմիջապես էլ ստիպված եղավ իր մտադրությունից հրաժարվել, երբ տեսավ, որ դիմացի հինգիարկանի շենքում լույսեր վարվեցին, և պատուհաններին մարդիկ մոտեցան: Ավելին, նրանցից երկուսը՝ վարդագույն գիշերանոցով հիսուն-հիսունինգ տարեկան մեծակուրքը մի կին՝ հինգերորդ հարկից, և քառասուհինցին մուտ մի թափանագ տղամարդ՝ չորրորդից, կարծես ոչ թե փողոցի ուղղությամբ էին նայում, այլ՝ հենց գործադիրի: Վերջինս պազեց և դադարեց շարժվել, որպեսզի ուշադրություն չգրավի, և այդպես մնաց երկար, մինչև որ սկսեցին մարել գիշերային լրության մեջ տարածվող «վախ, վախ, մամա ջան» կանչերը, և վերևի հարկերի պատուհաններում լույսերը հանգըրին:

Գործադիրը, շարունակելով պազած մնալ, զգուշորեն արեց այն մի քանի քայլը, որ իրեն բաժանում էր օդանցքից: Բնովելով անտաշ, փշփշոտ շրջանակից՝ նա չկարողացավ անմիջապես կողմնորոշվել. ներքև ցատկի՝ այդպիսով իրեն ենթարկելով որևէ տեղը վնասելու վտանգին (ի վերջո բավականին ծանրաքաշ էր), թե պառկի տանիքին ու, ցած կախվելով, ուժեղը հասցնի վերջին հարկի առաստաղները ծածկող խճին: Այս դեպքում թանկարժեք կոստյումը կժանգուվեր: Ընտրելով երկրորդ՝ նա իջավ: Բարեհաջող վայրէջք էր կատարել տանիքի տակ, երբ լսեցին ոստիկանական ավտոմեքենաների ազդանշանները, ապա և շենքի առաջ արգելակելու ճռչոցները: «Դժմա հանգուցյալներն էլ տեղմերից վեր կթռչեն», – վշտացավ գործադիրը և քարացավ տեղում: Եթե ուժեղի տակ գտնվող բնակարանի բնակիչները մինչև այս պահը չէին էլ արթնացել, ապա այժմ խուճապահը կլինեն, և հենց որ խճի վրա քայլեր, անպայման կիմանային, որ տանիքում մարդ կա: Գործադիրը, որ «տանիք» էր շատերի համար, բազմաթիվ ուրիշներ էլ երազում էին, որ այդ բախտին արժանանային, հիմա դատապարտված էր ինքը՝ ապաստաննելու սովորական մի հինգիարկանի շենքի տանիքում:

Ամեն ակնթարթը մի ամբողջ հավերժություն էր թվում: Այդպես անցավ տասը-տասնինց րոպե:

Դրսում գիշերային անդորրի ժամերին ոչ հարիր ժխոր էր: Ոստիկանները հարցաքննում էին մարդկանց, սակայն կարծես թե տարեց թափառաշրջիկի խռպոտ ձայնը այդպես էլ բնակիչների ձայններին չխառնվեց: Ըստ ամենայնի, նա կամ սպանված էր, կամ վախեցել-փախել էր մինչև ոստիկանության ժամանելը: Գործադիրը մտածեց սոցիալական ապահովության նախարարի նախին: Ի՞նչ էր նշանակում այս ամենը. պատահարար անցնելիս է եղել, շրջողիկները փորձել են պայուսակը կիւել, և նա ինքնապաշտպանությա՞ն է դիմել: Բայց՝ փողոցում, այսքան տարածամ, մեծակ... ի՞նչ գործ ուներ կիմը, այն էլ կիմ-նախարարը: Խսկ միգուցե, այս աղքատ երկրում հատկապես անողոք քննադատությունների թիրախ հանդիսանալով, որոշել էր մուրացկանների ու անտումների սպանելու միջոց՝ վ կրծատել նրանց քանակը... Գործադիրի մտքերի թելը կտրեց հզոր պայթյունը, որն, ըստ նախնական ծրագրի, պետք է հնչեր վաղ առավոտյան:

«Մեկ միլիոն», – թերևացած հոգոց քաշեց նա և իրեն ժամկետ տվեց մի ամսում գլուխ բերել նոր նախարարի նշանակումը... «Ի՞նչ բան է մարդկային ազահությունը», – սա էր նրա հաջորդ խորիրդածությունը, երբ հիշեց երկրի ամենահարուստ գործարարներից մեկին: Նրան այնպես էր քունուղադարձ գրկել առևտուի նախարարի պաշտոնը, որը շուկայական հարաբերությունների պայմաններում դեռ մինչև վերջերս պելորդ էր թվում, որ մեկ միլիոն կաշառը համարյա բացահայտ առաջարկեց: Մինչեւ այժմ արդեն նախկին նախարարից, ճիշտ է՝ իր կուսակցից և ամենահավանական թեկնածուից, գործադիրը այդ տեղը հատկացնելու համար այդ գումարի ընդամենը մեկ քառորդն էր վերցրել, այն էլ՝ մի մասն անշարժ գույքի ու ծառայությունների տեսքով:

... Այ թե աղմուկ կրածրանա՞մ, միգուցե նաև ցույցեր կազմակերպվեն իրենց շենքի առաջ: Մի տարում երրորդ նախարարն է սպանվում... Ոչ մի բացահայտում: Ոչ էլ նույնիսկ կասկածյալի անուն կամ լուրջ վարկած է հրապարակվել նախորդ դեպքերում: Կպահանջեն նախագահի, իր՝ Վարդգես Զարգարյանի ու ներքին գործերի նախարարի հրաժարականը: Նախագահ իրենից չի հրաժարվի. գործադիրը չգիտե, լիիվ չի հասկանում, թե՝ ինչու, բայց վստահ է... ինքն էլ՝ ՆԳ նախարարից չի հրաժարվի, որովհետև սրա նմանն հետո որտեղից գտնի: Եթե ավելի խելոք եղավ, մեկ էլ տեսար՝ կասկածեց... կամ ջրի երես որւլս բերեց ամեն ինչ... Հիմար եղավ, կսկսի շամտաժ անել:

Այս միլիոնը շատ էր պետք գործադիրին: Առաջ էր, որ նա չէր հասկանում, թե լավ ուտել-խմելուց ավելի փողն

1
12

ինչին է պետք, հիմա դժվարությամբ էր պատկերացնում, թե ինչպես էր բավարարելու իր և ընտանիքի պահանջները, եթե այս գործարքը չլիներ: Դանկարծ գործադիրին շամփուր այն միտքը, թե միգուցե առևտրի նախարարն անձանք չի բացել դուռը, այլ իր երկու տղաներից մեկը կամ կինը... Կամ... գուցե նա առհասարակ այստեղ չի գիշերում, այլ՝ ուրիշ կնոջ մոտ: Եվ միայն օրինավորության պատրանք ստեղծելու համար է, որ խնդրել էր գործադիրին ընտանեկան հրավերքի՝ տղաների մկրտության առթիվ այս հասարակ բնակարանը պատվել իր ներկայությամբ:

Գործադիրի մտապատկերում հայտնվեց մեկ միջինով լեցուն պայուսակը, որը դեպի հորիզոնի կապույտ գիծն էր ճախրում՝ նուրբ թօնային թևիկները թափահարելով. նման մի բան կարծես թե ինչ-որ մուլտիպլիկացիոն կինոնկարում էր տեսել: Վարդգես Զարգարյանը ոտքից գոլիս ողողված էր սառը քրտինքով, երբ տանիքի անցքից, որն իջնում էր առևտրի նախարարի մուտք, խոսակցություն լսվեց:

—Ներքին ծայս ինձ հուշում է, որ եթե այստեղ լավ լուսավորենք ու խուզարկենք, — ասաց բարակ ծայնով ինչ-որ մեկը, — ահաբեկիչին գտնենք:

—Առավոտ լուս աչքով կնայենք, — պատասխանեց մյուսը, — ի՞ն ապու՞շ չի ռումբ դնողը, որ կրիշում պահ մտնի, — ով որայա, ահագին փող ա առել՝ նախարար ա սպանել. պրոֆեսիոնալ կը լինի մարդը: Պատահական հետք թողած ըլնի՝ ուրիշ:

—Ի՞նչ ինմանաս՝ պրոֆեսիոնալն ինչ կմտածի, գուցե մեզ շփոթեցնելու համար ճիշտ հակառակը անի:

—Ես մութ տեղը որ լուսը գցենք, ինքը՝ մի գերանի հետև կանգնած, լավ գենքը՝ ձեռքը, երկուսիս էլ կգյուլլի... Թող լուսը բացվի, կերևա՝ ինչ ենք անում, էլի: Մեր գլխին դեկավորություն ունենք, չէ՞ ոնց ասեն, ընենց էլ կանենք: Բոմժերից մեկը կենդանի է, կամաց-կամաց ամեն ինչ դուրս կրաշենք:

Ոստիկանները հեռացան, սակայն դեռ բավականին շատ ժամանակ պահանջվեց, մինչև գործադիրը ցած կախեց ատրճանակը բարձրացրած ձեռքն ու սկսեց ազատ շնչել, որի ընթացքում փնչոցի նման ծայն էր արձակում: Իսկ կանգնած տեղից շարժվեց միայն լուսարացից հետո: Աշխատելով այնպես քայլել, որ ոտքերը բնակարանների հիմնապատերին դնի, առևտրի նախարարի մուտքից հաշված երրորդով նա իջավ ներքև ու առանց ոստիկաններին կամ հավաքված ժողովորդին նայելու գնաց Մաշտոցի պողոտայի կողմը: Հուրախություն իրեն, ոչ ոք ուշադրություն չդարձրեց վրան ոչ միայն այստեղ, այլև՝ մարդաշատ փողոցում: Կոստյումն էլ չէր մատնում գիշերային արկածախնդրության մասին, քանի որ մուգ ժամգագույն էր: Ահա թե երբ է պետք գալիս աչքի ընկնող արտաքին չունենալը. պինդ կազմվածքով, կլորիկ փորով միջահասակ ծաղատ մարդիկ այնքան հաճախ են պատահում, որ ամբողջ կառավարությունն էլ առանց թիկնապահների լցվեր փողոց, ոչ ոք չէր նկատի... Թեև ինչ-որ վիրավորվածություն էլ զգաց. կարծես ամեն օր այդ ժամին գործադիրը մենակ գրունում էր ոտքով... Ոչ ոք չդիմեց օգնության, բնակարանի, աշխատանքի, ամենահասարակ արդարության խնդրանքով, և միայն ուսանողություն տեսքով մի աղջիկ, որը Տերյանի ու Թումանյանի անկյունում ասաց՝ բարև, ժորա ծյածյա:

Կառավարության նիստին գործադիրն աչքի պոչով անընդհատ հետևում էր սոցապ նախարարին: Կինը շատ անհանգիստ էր, առանց այն էլ անտաշ նրա շարժումներն ավելի կոպիտ էին թվում: Բոլորին հայտնի էր, որ նա ու առևտրի նախարարը չին սիրում իրար: Վերջինս դժգոհում էր, թե մինչ մայութաղաքի խանությունը օրեցօր գեղեցկանում ու ճոխանում են՝ երկիր հրապուրելով ավելի շատ սփյուռքահայերի ու զբոսաշրջիկների, զուգահեռաբար աճում է անտունների ու մուրացկանների թիվը, որոնք հակառակ ազդեցությունն են գործում բոլորի վրա: Սոցապ նախարարի փաստարկներին, թե բյութեով նախատեսված փողը բավական չէ աղքատության մակարդակը քիչ թե շատ նվազեցնելու համար, առևտրի նախարարը պատասխանում էր, որ իրենց նշանակել են, որ լավացնեն վիճակը՝ անկախ բյութեի հնարավորություններից, օգտագործելով ընկերական շրջապատճ ու կապերը: Մեկ րոպե լրությամբ նիստի սկզբին հանգուցյալի հիշատակը հարգելուց հետո, մի քանիսը առևտրի նախարարի հենց այդ խոսքերը հիշեցին՝ որպես մարդկային ու կազմակերպչական շնորհքի և անձնվիրության արտահայտություն: Գործադիրն ինքը հանգուցյալի հասցեին գովեստներից ավելի կշտամբեց ՆԳ նախարարին, որի վատ աշխատանքի պատճառով կառավարության անդամները հայտնվել են մահապարտների վիճակում և միայն ժողովորդի ճակատագրի հանդեպ պատասխանատվությունն է ստիպում նրանց չլքել իրենց դիրքերը: ՆԳ նախարարը սովորականի պես ասաց, որ կառուցվածքային փոփոխություններ է պատրաստվում կատարել, որից հետո ոստիկանությունն ավելի արդյունավետ կգործի: Նա նույնիսկ պնդեց, որ եթե դրանց համար բյութեով ժամանակին փող նախատեսված լիներ, այսօրվա ողբերգությունը տեղի չէր ունենա:

Նույն պահին բարակ ծայնով, կարճահասակ, ոստոստում քայլվածքով երիտասարդ, խոստումնալից քննիչ

Բակումցը, առանց իր վերադասին զգուշացնելու, վերադարձել էր սպանության վայրը, բարձրացել տանիք և ուսումնասիրում էր հետքերը, որ թողել էր գործադիրը»:

Դակորը լսում էր՝ արմունկները ծնկներին հենած, ձեռքերով դեմքը փակած: Երբ Դիանան վերջացրեց կարդալը, նա իրարից աննշան հեռացրեց մատները, որ տեսնի իմ վերաբերմունքը: Ես գլուխս կամաց վարուվեր արեցի: Նա առանց շտապելու ուղղվեց ու հջեցրեց ձեռքերը.

—Դիանա Գևորգյանի «Ժողովրդից կտրվածները» վեպի սկիզբը խոստումնալից է: Ծիշտ է, զգացվում է, որ հեղինակը լրագրող է, — իր կողմից ավելացրեց նա՝ չճշտելով, թե ինչից է զգացվում Դիանայի մասնագիտությունը: Ապա ավելի հեռուն գնաց՝ ինձ զարմացնելով: — Իհարկե, այն, որ առաջին իսկ էջերից իմանում ենք, թե ովքեր են մարդասպանները, կարող է պակասեցնել ընթերցողի հետաքրքրասիրությունը... Բայց ես իմ դիտողություններն ամբողջությամբ կարտահայտեմ, երբ դուք, որպես Դիանայի դասընկերներ, ձեր կարծիքներն ասեք...:

(Դատված վեպից)

14

Գ. Գրիգորի

Ես ռուսական կրթությամբ եմ, ռուսախոս ընտանիքից, հայրս էլ կես ռուս է: Բայց ես իմ բանաստեղծությունները գրում եմ հայերեն, քանի որ գրում եմ իմ մասին և մեր հայ իրականության մասին: Ու չնայած ռուսերեն գրելն ինձ համար ավելի հեշտ է, բայց շատ արհեստական ու զրբային է ստացվում, երբ ես նույն բաների մասին գրում եմ ռուսաց լեզվով: Ես պրետենզիաներ չունեմ հայ բանաստեղծների շարքը մտնելու, բայց ես սիրում եմ պոեզիա, շատ եմ կարդում մեր հայ բանաստեղծներին և, թեև տառասխալներով ու ռուսաբանություններով, մեկ-մեկ գրում եմ ռուսականեր:

Տղամարդ շինել

Մեծ եղբայրս ասում էր.

«Կգնաս բանակ, տղամարդ կդառնաս:

Քեզ տղամարդ կշինեն ընդեղ»:

Եղբորս ի՞նչ կա:

Ինքը մամայի կողմին է քաշել՝ սև ու մազոտ:

Նա ծառայեց սովետական ալ ու ալվան բանակում,

Ռուսական ստեպներում,

Որտեղ ամեն օր տափա կար,

Ու ինքն էլ չգիտի քանի չուվ է բարեկա արել:

Իսկ ես պապայի կողմին եմ քաշել՝ ճելակ և պատասխան:

Ու ես ծառայեցի մեր ազգային բանակում,

Հայրենի լեռնաշխարհի չոլերում,

Շրջապատում իգական սեռի ոչ մի մարդ կամ անասուն չկար,

Ու ես համով պատառ էի մեր սեբսասոված, սեբսածարավ ոհմակի համար

Իմ կարմիր շրթունքներով

Ու չորս անմազ թուշերովս:

Եվ շինեցին, եղբայր ջան, տղամարդ շինեցին ինձ:

Տղա էի, դարձա տղամարդ:

Դու շատ ճիշտ էիր:

Ինձ(նից) շինեցին տղամարդ մեր բանակում:

Երազ և իրականություն

Իմ պատամեկության երազներում

Իմ կրքերի օբյեկտները դեմք չունեին:

Ինձ շատ էր դուր գալիս Յուրիկ Վարդանյանը:

Բայց նա ազգային փառք էր,

Եվ ես չէի համարձակվում նրան կոնկրետ պատկերացնել

Իմ բաց և անամոր երազներում:

Բայց աշխարհի չեմպին Դավիթ Համբարձումյանը,

Որ նույնպես ազգային փառք էր,

Իմ անուրջների ամենամեծ օբյեկտն էր,

Ու իմ շունչը կտրվում էր նրան նայելիս,

Ես մի ծեռում պահում էի նրա նկարը՝

Կտրված «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթից,

Իսկ մյուս ծեռով երազում էի նրա նասին:

Երբ տարիներ անց նա նահացավ,

Կյանքումս առաջին անգամ բարձրածայն լաց եղա

Իսկական, խոշոր կաթիլ արցունքներով:
Իսկ երազներից դուրս քուչի ու դպրոցի անկապ տպերն էին,
Լոշտ, Գոնչ, Պոնչ ու նման ածականներով,
Որոնք շատ էլ լավ կուզեին ինձ հետ անել այն,
Ինչը որ ես երազում էի անել ին երազների առարկաների հետ:
Եվ երբ մի կիրակի գիշեր ես անցա Ռուբիկոնը,
Ինձ մնաց մենակ ամենախոր հիասքափություն
Եվ հոգեկան ու ֆիզիկական ցավեր:
Ինչքան տարբեր էր իրականությունն ին երազից:

Բոքսի հայաք

Աշխարհի ուրիշ ոչ մի բակում
Չեիր տեսնի եղան սիրուն տղա,
Պարապմունքի գնացող, պարապմունքից էկող,
Ավոտ լվացող, պուլպուլակից ջուր լցնող,
Տենց-ընենց վեր ընկած,
Քեզնից անկապ տեղը ժամ հարցնող,
Քեզ աչքերով իշմար տվող,
Քեզ կապել ուզող...
Աշխարհի ուրիշ ո՞ր մասում ես կգտնեմ
Էսպիսի մեկը մեկից լավ արմեններ, կարեններ, խչոններ...
Երևանի սիրուն տղաներ,
Չեր պատճառով է, որ չեմ թքում ամեն ինչի վրա
Ու շառս քաշում հայրենի քաղաքից:
Չնայած որ չեմ սիրում ծեզ պես թիսետկում նստել ու բլոտ խաղալ:
Ու չեմ պատկերացնում ոնց կարելի է տղաներով գնալ սառւնա:
Ու չեմ կարող ծեզ պես հանգիստ նստել կիսամերկ սիրուն տղայի դիմաց ու գրուցել քաղաքականությունից:
Ու տանել չեմ կարող, երբ տղերով գնում եք բոզի:
Ու չեմ դիմանում, երբ խոսում եք ծեր սեքսուալ արկածներից:
Ու զզում եմ, երբ կատակում եք նասկինների թեմաներով:
Ու չեմ ուզում լսել, երբ ասում եք «վայ մերը ք...»:
Ու նման շատ բաներ:
Բայց ինչքան էլ ներքնապես ու արտաքնապես տարբեր լինեմ ծեզանից՝
Դուք իմն եք, ես էլ ծերը:
Ապրում ենք, կապրենք էսպես:

Փնթինթան բանաստեղծություն

Շատ վատ է, որ ծնվել եմ Հայաստանում:
Շատ լավ է, որ չեմ ծնվել Թուրքմենստանում
Կամ Աֆղանստանում:
Չեմ ասում, թե ծնված լինեի Հոլանդիայում:
Ինձ բավական կլիներ Պարագվայը,
Եթե ոչ Ուրուգվայը:
Իմ կյանքով հանգիստ կապրեի ինձ համար,
Առանց թաքցնելով՝ թե ում ինչն եմ սիրում էս կյանքում:
Մի ծովախնյա պիցցայանոցում
Պիցցա կթխեի, սալսա կպարեի ու գեյ ակունքում
Օրը մեկ պարտնյորներիս կփոխեի:
Բայց ես Հայաստանին բաժին ընկա,

1
Ը

Ու խելոք դեմքով ժողովներ եմ վարում

Ու մեծ-մեծ հարցերից խոսում:

Յա, էստեղ էլ շատ վատ չեմ զգում ինձ,

Պաշտոն ունեմ, ավտո ունեմ, սուսակ (ինչպիսի քաղքենիություն),

Առանձին բնակարան էլ ունեմ, որտեղ ժամանակ առ ժամանակ

Տանում եմ սիրելականներիս ու երկու սեռի սիրուիհներիս:

Երկի մի օր էլ ամուսնանամ, չլսելու համար ազգուտակիս քարոզը՝

«Քա քեզ նման սիրուն տղեն էրեխեք չունենա», որև հո գյո՞թ չես»:

Բայց ո՞նց բացատրեմ ես իմ բոլոր բարի կամեցողներին՝

Յա, սիրելիներս, գյոր եմ, գյոր եմ, գյոր եմ...

Հոգմել եմ էս խաղը խաղալուց:

Կրկնակի մորալ

Յայ տղաներ ջան,

Զեզ էլ չեմ հասկանում:

Մի կողմից տալիս-սպանում եք գալություներին,

Մյուս կողմից ձեզ պահում եք նրանց նման,

Յանդիպելիս մի լավ զասվում եք իրար հետ,

Լավ տղայի մասին ասում եք «պլորը ուտելու տղա»,

Տեղն էկած տեղն էլ՝ բանակում կամ բանտում,

Լավ էլ ապրում եք էդ կյանքով,

Ու որ մեկիդ կենսագրությունը քչփորենք՝

Պարզվում է՝ գրեթե բոլորդ էլ էդ գործում շատ թե քիչ եղել եք:

Դրա համար է որ էրբան հեշտ Յոլանդիա եք գնում ու ասում,

Թե՛ մենք գալություն ենք, Յայաստանում մեզ ճնշում են:

Թքել եմ ծեր էդ կրկնակի մորալի վրա:

Ոտանավոր Արմենի մասին

Արմենը ստվորական, շարքային մի Արմեն է:

Ինչպես երևանցի բոլոր Արմենները,

Որ ծնվում են երևանում,

Որի համար ողջ ազգուտակը խելագարվում է,

Որին նկարում են մորթիների վրա տկլոր պառկած,

Որն ավարտում է որևէ ռուսական դպրոց,

Որ զբաղվում է ինչ-որ սպորտով,

Որ սիրուն է, բոյով, մազոտ և մի քիչ լիքոտ:

Միայն թե այս Արմենը, ի տարբերություն շատ արմենների,

Սիրում է

Տղաների հետ են բանից անել:

Ես Արմենին երեք անգամ են տեսել,

Ինտերնետով նա գտավ ինձ,

Երկար-բարակ գրեցինք իրար,

Յետո հանդիպեցինք, նատեցինք կաֆեներում:

Ես իրեն շատ հավանեցի, նա ինձ՝ քիչ,

Բայց և չբացառեց ինձ հետ թեկուզ մի անգամ

Են բանից անելը:

Մեր երկրորդ հանդիպումից 16 օր հետո

Մենք առանձնացանք Մոսկվայում ապրող

Իր մորաքրոջ թե հորաքրոջ
Երևանի կենտրոնի բարձրահարկերից մեկում գտնվող բնակարանում:
Ինձ նա լրիվ դզեց, ես իրեն՝ ոչ,
Եվ պատճական հանդիպումից վեց օր անց ինձ գրեց.
«Վ չիա՞յ, +ծի լաշա՞յ իալէ իէ+աձի իա լիշա՞ձ անծու...
Իա լոծաձայ, յ լա չալոյօթէձայ յօլոյ...
Իօլոյայ...»:
Թե ինչ էր նա հատուկ սպասում՝ ես չիասկացա,
Գուցե դա մի պատրվակ էր,
Գուցե նա բոլորի հետ էր այդպես վարվում,
Կամ ինչպես Շերն է ասում,
Maybe I was too cool for him:
Ինչսէ, Արմենն ինձ համար մնաց
Որպես մի օճորազօվայ ապրուց:
Նա ինձ մոռացել է,
Ես էլ երևի թե մոռանայի իրան,
Թե այս ոտանավորը չգործի...»

18

Գագիկ Կիլիկյան և Մհեր Բեյլերյան

Փառըլում է

Մհեր - Ինչացո՞ւ է:

Գագիկ - Բարդ հարց է:

Մ.- Ինչո՞ւ է փնտրվում: Իրեն ի՞նչ է եղե՞լ որ:

Գ.- Ամեն կորած փնտրում է:

Մ.- Տրամվայից չի իջե՞լ:

Գ.- Չգիտեմ ինչու մի ֆիլմ հիշեցի. «Ուժասպառ ձիերին սպանում են...»

Մ.- Մեղա, մեղա: Ուժասպառ ձիերն ի՞նչ կապ ունեն:

Գ.- Մի ժամանակ ձիերն էին տրամվայ քաշում:

Մ.- Փնտրվողը ձի է՞:

Գ.- Իսկ ինչո՞ւ՝ ոչ:

Մ.- Լավ, զո՞նե անուն ունի՞:

Գ.- Ասենք՝ Քերոբ:

Մ.- Դա ավելի շուտ գողական տիտղոս է:

Գ.- Ուրեմն՝ Մերոբ... բայց հաջող չի:

Մ.- Ենախի անուն է պետք, որ մարդիկ հավատան:

Գ.- Արմեն Խաչատրյան:

Մ.- Ո՞ր մեղքի համար:

Գ.- Արմեն Մահիտեսյան:

Մ.- Իսկ մարդը չի կարող մարդավարի անուն ունենալ:

Գ.- Ճակոբ Ճակոբյան:

Մ.- Ճո Ասսալայի դեկավարը չի՞:

Գ.- Արմեն Շնավոնյան. ընկերոջս անունն է:

Մ.- Չի նեղանա՞:

Գ.- Բա ի՞նչ կանի: Վիլիկ Շնավոնյան:

Մ.- Այդ դեպքում հայրանուն էլ պիտի ունենա:

Գ.- Վիլիկ Ռաֆիկի Շնավոնյան:

Մ.- Իսկ ինչո՞ւ ոչ Արմենի:

Գ.- Մերնդային իմաստով սխալ կլինի:

Մ.- Վիլիկ Ռաֆիկի Շնավոնյանը՝ ծնված... ծնվել է, չէ՞:

Գ.- Բա ո՞նց:

Մ.- Եդ ե՞րբ:

Գ.- Ճիսունութ թվին:

Մ.- Թո ծննդյան թիվն անպայման պիտի մեջտեղ գցեիր: Որտե՞ղ:

Գ.- Երևանում:

Մ.- Ինչի ուրիշ տեղ չկա՞:

Գ.- Բաթումի:

Մ.- Ո՞նց է կորել:

Գ.- Տանից դուրս է եկել և չի վերադարձել, Խաչատրյալ Արովյանի պես...

Մ.- Ասենք՝ սույն թվի ապրիլի 13-ի առավոտյան:

Գ.- 13-ը լավ թիվ չի:

Մ.- Ապրիլի 11-ին, ինն անց երեսունյոթ րոպե...

Գ.- Ինն անց երեսունի սահմաններում:

Մ.- Վերջին անգամ տեսել են...

Գ.- Մի րոպե: Նախ պետք է ճշտել, թե ի՞նչ սոցիալական կարգավիճակ ուներ տուժողը:

Մ.- Ի՞ նչ կապ ունի:

Գ.- Ճենց էնտեղ էլ կորել է:

Մ.- Մարդը չի կարո՞ղ հենց էնպես կորել:

Գ.- Փորձը ցույց է տալիս, որ ոչ: Սոցիալական տարբեր խավեր անհետանում են համապատասխան վայրերում:

Մ.- Եղ ո՞նց:

Գ.- Շատ պարզ: Յարուստը Պօռշյանի վրա, մտավորականը՝ կինո Նաիրի, մնացածը՝ Գում:

Մ.- Զի ասվի: Մարդ կարող է էնպիսի տեղում կորի, որ ինքն էլ չէր սպասում ու էնպիսի տեղում գտնվի, որ...

Գ.- Երևանցիները կորում են վերոհիշյալ երեք վայրերում:

Մ.- Ենթադրենք՝ մտել է Բարեկամության անցումն ու մյուս կողմից դուրս չի եկել:

Գ.- Բարեկամությունը կոմունիստական է, թող Երիտասարդականի անցումը լինի:

Մ.- Թող լինի, չնայած դա էլ կոմերիտական է: Իսկ ո՞վ է ճրան տեսել:

Գ.- Նա, ում վրա ամենից շատ կասկած կա: Սիրուհու ամուսինը:

Մ.- Ո՞նց, Վիլիկն ամուսնացել է:

Գ.- Համ էլ բաժանվել է:

Մ.- Բա երեխե՞քը:

Գ.- 58 թվի տղեն կամ ամուսնացած պիտի լինի, կամ...

Մ.- Գրում ենք՝ ամուսնալուծված:

Գ.- Վերջին անգամ իրեն տեսել են Երիտասարդականի անցման և Գումի մոտ միաժամանակ:

Մ.- Նույն օրը, նույն ժամի՞ն:

Գ.- Բա ո՞նց:

Մ.- Կայ թե չհավատան: Վերջը շուն, թե գել քաղաքի տղա է...

Գ.- Եղ հլա հարց ա: Մնաց մասնագիտությունը: Կորելու տեղը դրանից է կախված:

Մ.- Ժեկի աշխատող:

Գ.- Յո չափիր:

Մ.- Լույսի մարդ:

Գ.- Էլեկտրիկն էլ մի բան չի, տեղամասի պետը զզվելի է: Վարսավիրանոցի տնօրեն:

Մ.- Հանճարեղ է: Քանի՞ աշխատող ունի:

Գ.- Երեք կին:

Մ.- Երեքին էլ անու՞ն է:

Գ.- Ինչու՞ ոչ:

Մ.- Վարսավիրանոցում գոնե մի տղա չի լինի՞:

Գ.- Տղային անի՞:

Մ.- Երկու տղա, մի կին:

Գ.- Երկու կին, մի տղա:

Մ.- Լավ, բա երկու տեղ ո՞նց են տեսել:

Գ.- Մի տեղ սիրուիին է տեսել, մի տեղ՝ սիրուհու ամուսինը:

Մ.- Այսինքն մեկը սուս է ասում:

Գ.- Երկուսն էլ:

Մ.- Կայ թե՞ գլուխը կերած լինեն:

Գ.- Ես երկում ըստե՞նց բաներ են կատարվում:

Մ.- Ոչ յարին է պետք, ո՞չ կնոջը՝ բա հայտարարությունն ո՞վ է տալիս:

Գ.- Տղան:

Մ.- Ո՞ւմ է պետք եղափսի հայրը:

Գ.- Աղջկան:

Մ.- Աղջկա՞ն չի լրել:

Գ.- Աշխատանքը կորցրել է, կինն էլ բաժանվել է՝ մեղ դնելու չի:

Մ.- Թող վարսավիրանոցի կոլեկտիվը հայտարարություն տա:

Գ.- Յայ ազգի մեջ հայտարարությունը պիտի հարազատը տա:

Մ.- Ուրեմն՝ սիրուիին:

20

Գ.- Սիրուհին էլ թասիր ունի: Յայտարարությունը աղջկն է տալիս, բայց սիրուհու թելադրանքով:

Մ.- Արտաքինը նկարագրում ե՞նք:

Գ.- Ոչ ցայտուն արտաքինով:

Մ.- Ի՞ն չասիր, թող հայի քթով լինի:

Գ.- Քիթը փիլիսոփայական կատեգորիա չէ, համ էլ Սիրանո դը Բերժըրակը հայ չի:

Մ.- Պետք էլ չի: Գտնողն ո՞ւր զանգի:

Գ.- Ըստ պատկանելիության:

Մ.- Կոնկրետ:

Գ.- Զհանդամի գյոռը:

Մ.- Քաղմաս: Գումարի հարցը ո՞նց է:

Գ.- Քաղմասը փող տա՞:

Մ.- Չրի ոչ ոք չի հայտնի:

Գ.- Ինչն է շատ՝ հայտնողը:

Մ.- Վերջում գտնվո՞ւմ է:

Գ.- Չի ասվի: Կարող է գտնեն, բայց պարզվի՝ ինքը չի:

Մ.- Կամ միանգամից մի քանի հոգի գտնեն:

Գ.- Ու ոչ մեկը վարսավիր չլինի:

Մ.- Կամ վարսավիր լինի, բայց տղա չլինի: Անունն ի՞նչ է:

Գ.- Եթե վարսավիր է ու կին, ուրեմն Ստելա: Սանթրոսյան Ստելա Յաբեթնակի:

Մ.- Տարիքը...

Գ.- 28-ի կողմերը, որ համ շատ ջահել չլինի, համ էլ հլա դնօքելու ապրանք լինի:

Մ.- Մեծ կրծքերո՞վ:

Գ.- Չե, երկար ոտքերով:

Մ.- Կրծքերը մեծ ե՞ն:

Գ.- Յարնարին:

Մ.- Չեն իիշի: Անուսնացա՞ծ է:

Գ.- Անուսնացած կինը հասարակության համար կորած է:

Մ.- Տուն չի վերադարձե՞լ:

Գ.- Իսկի գործի էլ չի ներկայացել:

Մ.- Շեֆի հետ պոկվել են Լու կամ էլ Տագանրոգի կողմերը...

Գ.- Օարձրիր հնդկական կինո: Կարող է սեպտեմբերի 11-ին սխալ ինքնաթիռ են նստել: Մի երկու հայ չի լինի՝ եղքան զոհի մեջ:

Մ.- Բրագիլական սերիալ: Որ չմեռնեն, չի լինի՞:

Գ.- Թե կորել են՝ չպիտի գտնվեն:

Մ.- Երկուսից մեկը թող ողջ մնա...

Գ.- Թե կին ու տղամարդ են, ուրեմն՝ Ռոմեն և Զուլիետ: Երկուսն էլ պիտի մեռնեն:

Մ.- Ստելայից ի՞նչ Զուլիետ:

Գ.- Գոնե Տրիստան և Իզոլդա:

Մ.- Օրինակ, ես չեմ կարդացել:

Գ.- Ես կարդացել եմ, չեմ իիշում: Ծայրահեղ դեպքում՝ Լեյլի և Մեջնուն:

Մ.- Մեջնունը՝ հեչ: Խեղճ Ստելայից ինչու են խփում:

Գ.- Զեղի հետ: Կարևորը մեռնեն, թե ոնց՝ հետոն կերևա:

Մ.- Բեր պսակենք քիլերի հետ:

Գ.- Յնդկական կինո...

Մ.- Բրագիլական սերիալ...

Տեղեկանք առ այս...

21

ԳԱԳԻԿ - Ուրեմն հանդիպում ենք ժեկ-ի մուտքի դիմաց:

ՄՐԵՐ - Պարզվում է՝ երկուսս էլ նույն տեղեկանքի համար ենք եկել:

Գ. - Լավ, դեսից-դենից խոսեցինք, մտանք դրանց անլվա միջանցքը:

Մ. - Դուքը բացեցինք ու ի՞նչ տեսնենք:

Գ. - Ի՞նչ:

Մ. - Են-քոլ կրօքերով տիկին, ժեկի կլասիկ աշխատող:

Մ. - Ի՞նչ է անում:

Գ. - «Պետքիվ»: Մածունով-բանով:

Մ. - Սուրճ է եփում:

Գ. - ճաքած բաժակով:

Մ. - Ասում ենք՝ տեղեկանք տուր:

Գ. - Ասում ա՝ մի պաշկա կոֆե բերեք, կտամ:

Մ. - Որտեղից:

Գ. - Դիմացի սենյակից: Դուքը բացում ենք ու հայտնվում չնթրլիկ բուտկայում, որտեղ հիմնականում «պաչկով կոֆե» են վաճառում:

Մ. - Փողի փոխարեն վերցնում են միայն տեղեկանքներ:

Գ. - Մոտս մի հատ կա, առ այն, որ երկրորդ խմբի հաշմանդամ եմ: Կոֆեով հետ ենք գալիս, բացում ենք առաջին դուռը ու մտնում ենք: Ստրիպտիզ կլուք է:

Մ. - Հակիչն ասում է՝ ՞Վ եք: Վախից ասում ենք՝ կոֆեն ենք բերել:

Գ. - Մի քիչ մտածում, ասում է՝ տարեք Գուգոյին:

Մ. - Գուգոյին ենք հարցնում:

Գ. - Բա ստրիպտիզորշա՞ն:

Մ. - Իրա համար տրուբա ա ծռում:

Գ. - Ճավաքվածներն էլ տրուսիկի մեջ տեղեկանքներ են խոթում:

Մ. - Մոտենում, ասում ենք՝ կյանք, տեղեկանքի համար ու՞ն պիտի դիմենք:

Գ. - Տռուսիկը բացում է, մթով՝ որն ուզում եք, հանեք:

Մ. - Լավ քչիորում ենք, բայց մեր ուզածը չենք գտնում:

Գ. - Դու չես գտնում, ես հո գտնում եմ:

Մ. - Լավ, շատ չխորանանք:

Գ. - Բա ի՞նչ անենք:

Մ. - Գնանք մեր տեղեկանքի հետևից:

Գ. - Մի րոպեով գուգարան մտնեմ՝ նոր, դուռը բացում ենք ու հայտնվում ենք վիրահատարանում:

Մ. - Բժիշկը արյունոտ լանցետը ձեռքին մեզ է նայում:

Գ. - Ասում է՝ սրանց ո՞վ է մերս թողել, ստեղիլ չեն:

Մ. - Մանրոյից ասում ենք՝ տեղեկանքի համար ենք եկել:

Գ. - Բժիշկը հիվանդին թողնում է սեղանին ու սկսում է ոգևորված բացատրել, թե որ տեղեկանքի համար ուր պիտի դիմենք. ինչքան պիտի տամք:

Մ. - Ասում ա՝ կողքի սենյակում սպասեք, վիրահատույթումս վերջացնեմ՝ միասին կգնանք տեղեկանքի հարցերը կլուծենք:

Գ. - Են էլ հենց դուրս ենք գալիս, մեզանից զոռով արյուն են վերցնում, ասում են՝ փող տվեք, որ առողջի տեղեկանք տանք: Թե չէ կգրենք՝ սպիտ եք:

Մ. - Ճանում հարյուրնոց ենք տալիս, ասում են՝ չենջը դիմացի սենյակում ա, խուրդվեք՝ էկեք:

Գ. - Չենջում էլ գժի թրթերը սպիտի տեղեկանքների հետ են փոխում:

Մ. - Զգույշ մնա արանք-արանք կեղծ տեղեկանքներ են սաղացնում:

Գ. - Եդ ո՞նց:

22

Ա.- Ասենք խանութում գնածդ զուգարանի թղթի կտրոնի փոխարեն կոյուղու վճարումների կեղծ տեղեկանք են տալիս:

Գ.- Ճենց չենջից դուրս ենք գալիս, միջանցքում մենքերը բռնում են: Պարզվում է մեր ժեկ մտնելու պահից մեզ հետևել են:

Մ.- Քննիչը բոլոր լուսանկարները դնում է մեր դիմաց: Մենք՝ ստրիպտիզ բարում, չենջում, լեն-բոլ կրօքերով աշխատակցուին հետ խոսելիս: Ասում է՝ ստորագրեք, թե չէ կփտեք:

Գ.- Ասում ենք՝ ի՞նչը, ասում է՝ տեղեկանքը:

Մ.- Բայց մենք չենք ստորագրում.

Գ.- Ճամա ասիր: Մեզ դիմացի սենյակն են տանում, որը քննչական մեկուսարանն է...

Մ.- Մեջը՝ լիքը գող: Ասում են՝ հեսա ձեր վլոր քսիֆ ա գալու, որ էս կյանքում ձեր ով ըլնելը ջոկենք ... Էդ քսիֆ ասածն է, մի հատ տեղեկանք է, առ այն, թե մենք ով ենք ըլե դսով...

Գ.- Են էլ մինչև քսիֆի գալը, «պարեգ» ա ըլնում, մենք էլ, դե մենք էլ իրենց հետևից դուրս ենք գալիս միջանցք, մտնում ենք առաջին պատահած սենյակը...

Մ.- Ու՞մ եք ուզում, - հարցնում է լեն-բոլ կրօքերով տիկինը և ճաքած բաժակով սուրճ է ֆոթացնում....

Գ.- Մեզ տեղեկանք է պետք...

Մ.- Դե սպանեցիք ձեր տեղեկանքով: Զեռներդ տնօած գոռում էիք...

Գ.- Երկիրը քանդեցիք: Գնացեք ձեր ընտրած դեպուտատներին ասեք...

Մ.- Տեղից հելում թե չէ՝ փախսնում ենք, մտնում ենք դիմացի սենյակը, ինչ տեսնենք...

Գ.- Գերազույն խորհրդում ենք: Քննարկվում է տեղեկանքների մասին օրենքը...

Մ.- Մի երկու դեպուտատի հետ խոսում ենք՝ ասում են քվեարկության ժամանակ էն կնոպկեքը սեղմեք, ձեզի երեք հատ տեղեկանք կտանք...

Գ.- Բայց ախրանան մոտենում է՝ ասում, դու՞ք ով եք, ձե՞զ ով ա ներս թողել, ձեր տեղեկանքներն ո՞ւր են...

Մ.- Վզներից քանած դուրս են շարտում: Միջանցքում լեն-բոլ կրօքերով տիկինն է ու սուրճի բաժակը...

Գ.- Յը, դուրս շարտեցի՞ն, - ասում է ու նայում բաժակի մեջ, - չէ, ձեր վերջը թաղման բյուրոյի տեղեկանքն է: Տո առանց փողի ձեզ ո՞վ մարդատեղ կդմի...

Մ.- Շարունակում է... Բա իմ տողի ջանը քար ա, որ շաբաթը մեկ Սադախը ա գնում, բա գնացեք աշխատեք, մի քիչ էլ ձեր ջանները յուղեք...

Գ.- Ու մեր վրա ա գալիս, հետ-հետ գնալով դուռը բացում ենք ու հայտնվում ենք Սադախը շուկայում...

Մ.- Գործն արագ առաջ ա գնում, էդտեղից ապրանքը վերցնում ենք, դիմացի սենյակի շուկայում բիրիքով սաղացնում...

Գ.- Ու արդեն մի ժամից հազարի չափ տեղեկանք ունենք, բայց մեր ուզածը չկա, մեր ուզածի համար շեֆի սենյակ պիտի հասնենք...

Մ.- Մինչև շեֆը դեռ շատ դրներ կան, հերթով պիտի անցնենք...

Գ.- Բայց էտ ծծավոր կմիկը հա խանգարում է...

Մ.- Յիմի էլ, թե իմ տղեն արուն ա թափում, դուք Սադախը առևտուր եք անում, ինքը հիմա սոված ակոպում նստած ա, ձերպեսները ջիկերով են ֆոֆում...

Գ.- Ու ծծերով մեզ հրում խցկում է մի սենյակ...

Մ.- Ի՞նչ սենյակ, ի՞նչ բան...

Գ.- Պատերազմ ա գնում, սողեսող հասնում ենք մերոնց խրամատներին, հարցնում ենք. կամանդիրն ո՞վ ա...

Մ.- Ծիծաղում են, թե՝ էս գրաժանանկի շորերով տուրիստներն ո՞վ են...

Գ.- Վերջը մեզ մոտենում է, թե՝ կամանդիրը ես եմ, ո՞վ եք, ի՞նչ կա:

Մ.- Ասում ենք՝ տեղեկանքի համար ենք եկել, կամանդիր ջան:

Գ.- Բարկանում է՝ մենք կռվենք, տեղեկանքը ձեզ տանք...

Մ.- Ասում ենք՝ չէ, այ մարդ, մեզ կռվածի տեղեկանք պետք չէ, մեր ուզածը ժեկ-ի տեղեկանք է:

Գ.- Միանգամից փափկում է, ասում է, սրտիս նուրբ լարերին կպաք, մերս ժեկում ա աշխատում:

Մ.- Կերաք մորս իմ անունից կտեսնեք, էս նամակն էլ իրան կտաք:

Գ.- Ու ծեղներս եռանկյուն ծալած տեղեկանք է խոթում...

Մ.- Ասում ենք՝ բա ո՞նց դուրս գանք...

Գ.- Ասում է՝ մտեք, «Վիլիս»-ի շոֆեռս կտանի մինչև շրջկենտրոն...

Մ- Մի կերպ հասնում ենք «Վիլիսին», մտնում ու հայտնվում միջնացքում:

Գ- Դեմներս ո՞վ հելմի, որ լավ ըլմի... կոֆեի պաշկան շպրտում է վրադ:

Մ - Են էլ ես կռանում եմ, քեզ է կպճում...

Գ- Դալալ ա քեզ..

Մ. - Բա հո մի օրվա ընկեր չենք:

Գ. - Լավ, ես էլ են կռանում...

Մ. - Մի խոսքով, կտրոնը ծեռքն ենք խոթում:

Գ. - Կամ կրծքների արանքը...

Մ. - Ասում է՝ ես ինչ է, կաշառու՞ն եք:

Գ. - Գլխով ենք անում:

Մ.- Կաշառելուց գոնե կարգին կաշառեք:

Գ. - Ինչ ունենք, տալիս ենք, ասում ենք, մենակ մեր ուզած տեղեկանքը տուր:

Մ.- Նայում ասում է՝ ծեզ խարել Սադախլոյում վրացական տեղեկանք են սաղացել, սրանցով կարաք մենակ...

Գ.- Մի խոսքով չի վերցնում, անիջում ա, ու ընկնում ենք դժոխք..

Մ. - Մեղա Աստծո...

Գ. - Դա, ինչո՞ւ չէ: Ենտեղ մեզ մեր մեղքերը հավաստող տեղեկանք են տալիս:

Մ. - Չե, ախատեր, գոհ ենք, ժեկն ավելի լավ է...

Գ. - Նայած ում համար՝ ոնց, բայց դու գիտես:

Մ. - Դուրս ենք գալիս, միջանցքի դռներից մեկը երեք անգամ ներսից թակում են, բացում ենք ու...

Գ. - Դագաղը ներս են բերում: Մի հսկայական թափոր, բոլորը մեզ ցավակցում են:

Մ. - Ասում են՝ էն ներ օրով էլի դուք էլի իրան հասնում...

Գ. - Ամորու հետները երկար-բարակ գնում ենք, թափորի հետ հազար ու մի սենյակ ենք մտնում:

Մ. - Բայց դագաղի մեջ մենակ տեղեկանքներ են:

Գ. - Առ այն, որ հանգույցալն ունեցել է 1 մետր 74 սմ հասակ:

Մ. - Եղել է ընկերությանը նվիրված տղա...

Գ. - Մի խոսքով, հանգույցալի կենսագրությունը՝ տեղեկանք առ տեղեկանք...

Մ. - Ընդհուպ մինչեւ նրա երրու գնած ապրանքների կտրոնները:

Գ. - Բայց հաստ ծծավորը դոշը դեմ ա տալիս, թափորի ճանապարհը փակում ա...

Մ. - Թե՛ առանց թաղնան տեղեկանքի ոչ մի տեղ չեք գնա:

Գ. - Մեզ են առաջ գցում:

Մ. - Թե՛ դուք օղորմածիկին եղբոր պես էլք, տեղեկանքի հարցն էլ դուք լուծեք:

Գ. - Ճիշու՞մ եք, թե ծովում ծեր կյանքը ոնց փրկեց...

Մ. - Թե՞ արդեն մոռացել եք...

Գ. - Ուրացել եք...

Մ. - Ու առաջ են հրում:

Գ. - Մի կերպ ծլկում, մեզ գցում ենք մի սենյակ:

Մ. - Տեսնենք ծովափի է՝ հանգստացողներով լիքը...

Գ. - Ու բոլորը տեղեկանք են... էն էլ ինչ տեղեկանք:

Մ - Օրինակ, մեկի վրա գրված է հանգստացողի կրծքի ու հետույքի չափերը...

Գ - Վերջում էլ գինը, գինը վերջում են գրում, որ մնացածը կարդաս:

Մ - Տեղեկանքներից մեկին կապում ենք...

Գ. - Ասում է՝ ես ո՞ւր էլք կորել, յուժնի տղեք:

Մ. - Տանում ենք քյարաբնոց...

Գ. - Բայց շշերի վրա մենակ մսի որակը և համը հաստատող տեղեկանքներ են...

Մ. - Ասում ենք՝ լողնանք նոր ուտենք...

Գ. - Ասում է՝ պրոբլեմ չունեք...

Մ. - Մտնում ենք փոխվելու խցի մեջ ու հայտնվում ենք միջանցքում:

Գ. - Սենյակներից մեկում հեռախոսը զանգում է:

Մ. - Վերցնում ենք, ինչ-որ մեկն ասում է՝ ծեզ մի սենյակ մնաց:

24

- Գ. - Մտնում ենք հաջորդ սենյակը...
Ս. - Քարտուղարուիին ասում է՝ ու՞ն եք ուզում...
Գ. - Ոտքը ոտքին է գցում...
Ս. - Կրծքերը շտկում ու քեզ աչքով է անում...
Գ. - Չէ, քեզ է անում, դու ջահել ես...
Ս. - Բայց աչքի տակով քեզ էլ ա նայում...
Գ. - Սիրուն աչքերիս համա՞ր...
Ս. - Ինչո՞ւ ոչ:
Գ. - Մենակ աչքերս են մնացել...
Ս. - Էլ մի համեստացի...
Գ. - Մի խոսքով, մեր բոլոր տեղեկանքները, որ հավաքել ենք բոլոր սենյակներից, դնում ենք քարտուղարուիութիմաց:
Ս. - Ասում ենք՝ տար շեֆիի:
Գ. - Թե՛ շեֆը տեղում չէ:
Ս. - Բայց ին հարիֆ չենք, անցնում ենք շեֆի սենյակ:
Գ. - Շեֆը բարկանում է՝ ձեզ ով մերս թողեց...
Ս. - Քարտուղարուիին սկսում է արդարանալ...
Գ. - Ալֆրեդ Խաչիկովիչ, իրենք մտան:
Ս. - Ասում է՝ լավ, ի՞նչ եք ուզում:
Գ. - Ասում ենք՝ տեղեկանք:
Ս. - Ի՞նչ տեղեկանք:
Գ. - Ասում ենք՝ ձեր ժեկը ամբողջ օրը ոտքի տակ տվինք, պտի տաս:
Ս. - Ասում է՝ այ մարդ, ասեք՝ ինչ է պետք, ստորագրեն տամ:
Գ. - Ի՞նչ տեղեկանք էր պետք:
Ս. - Ի՞նձ ես հարցնում:
Գ. - Բա ջահելը դու ես:
Ս. - Դու էլ ոչ բարով տարիքովն ես, էսքան նեղություն տեսանք, ակոպներում քիչ էր մնում խփեին, բա դա մոռանալու բան է:
Գ. - Իբր թարմ ուղեղն էլ դու ես, իիմիկվա ջահելության գլխի մեջ թեփ ա:
Ս. - Եղ թեփը ժառանգական ա:
Գ. - Ճիմի էս մարդուն ինչ ասենք...
Ս. - Յեզ, պիտի ասենք՝ հաջող, զնանք տնեցիներից ճշտենք, էգուց էլի գանք:
Գ. - Ես էլ ներվեր չունեմ, ես երկրորդ խմբի հաշմանդամ եմ:
Ս. - Ուրեմն ճակատի գիր ա:

Արժուի

ԿԱՐՃ ՇԱԼՎԱՐ (շարք ինքնակենսագրական)

ԾՆՆԴՅԱՆ ՕՐ

Իմ կենսագրությունը սկսվում է
1988 թվականի օգոստոսյան այն օրը,
երբ ես՝ նորաթուխ ուսանողս,
հետևում թողած դպրոցական տարիների մղջավանջը
և ազգային զարթոնքի շնչով համակված,
անտեսելով վարքութարք ու ադաբներ
և այն, որ վաղուց արդեն մեծ եմ՝
մկրատի երկու հարվածով իմ երկար շալվարը
ենթարկեցի սքանչելի մետամորֆոզի...

Ուահվիրա

Բայց Երևան կոչվող այս հրաշեկ թավայում
համերաշխ տապակվող բախտակիցներս
1980-ականների վերջին, 90-ականների սկզբին
անհանգստացան,
երբ ես, Զոնաթան Լիվինգսթոն ճայի պես,
որոշեցի մի քիչ խելոք տապակվել:
Չե՛, Արլադին Բուենոյիայի պես
ամենամեծ հայտնագործությունն ինձ համար
սառայցը չէր (տվյալ ուսաբում նույնպես փրկարար,
սակայն դժվար կիրառելի),
այլ մի պակաս ռոմանտիկ բան՝
ԿԱՐՃ ՇԱԼՎԱՐԸ:

Տապակվող բախտակիցներիս անդորրը խախտվեց,
և սկսեցին բարոյախրատական ճառեր կարդալ
ինձ՝ բազմամեղիս,
որ խախտում եմ իայ տղայի ավանդական կերպարը,
որ թքում եմ Վարդան Մամիկոնյանի հիշատակին,
և որ ինձ վերջապես սխալ կհասկանամ, ու նման բաներ...
Իսկ քիթ-մռութս ջարդվելու բախտին չարժանացավ՝
հավանաբար ռուս նախապապիս գեների շնորհիվ,
բայց իմ մշտական ուղեկիցը փողոցում դարձան
զանազան անհոդաբաշխ և հոդաբաշխ բացականչություններ՝
«Ապե, իայ ե՞ս... բա էս ի՞նչ ա վիճակի»,
«Չի դգում Երևանում շորտերով ֆռֆռալ...»
բա մեր մայրերը, մեր քույրերը...»,
«Ալլո՞, Մայքլ Ջեքսոն», ու նման բաներ...
Իսկ ես անընդհատ հիշում էի, որ
«Աղվոր կուրօք մը չունեցողները նիայն
decollecteին թշնամի են» (Գրիգոր Զոհրաբ):

www.բնագիր.am

26

Ամցան տարիներ:

Ինձ ռազբիրատի կանչող ապերո դը բուլոները հիմա իրենք են
ամեն ռանգի, զանազան ու զարնանազան կարծ շալվարներով
իրենց մայրերին, իրենց քույրերին ու իրենց կանանց
շոայլորեն ի ցուց դնում իրենց ծուռ ու փրչոտ զիստերը:

Իսկ ես ամեն ամառ ինձ եմ վերապահում
իր յուղի մեջ տապակվող մեր էս թափա-քաղաքում
գոնեն ինչ-որ մի բանի ռահվիրաներից մեկը
լինելու հաճույքը վայելելը...

Խաղաղադարին

Կոտրված, և անհույս, և ցանաքած,
ամայացած հոգով և ծանծնված սրտով,
կերած լյանքի հերթական ապտակը,
խնած ախորժակիս հրանցված հերթական քացախը,
ահա կրկին նստած եմ ես
իմ կործանված երազաշեն դոյակի ավերակների մեջ
որպես մի նոր «Մայր Յայաստան»:

Բայց հյուսքեր չունեմ, որ թափեմ,
ոչ էլ արցունքներ, որոնք դեֆիցիտ են և վերջացել են,
ձայնալարերն անզամ հրաժարվում են հնչել,
իսկ արյունս ասես հոսում է միայն մեկ ուղղությամբ:

Մի քիչ էլ... և աղավնիները համարձակ կնստեն գլխիս,
իսկ անցորդները գուցե ծաղիկ կղմեն պատվանդանիս,
գրոսաշրջիկները կլուսանկարվեն կողքս, քանի որ
կարծ շալվար հագած արձան չեն տեսել...

Աբովյանի պես դուրս գալ-չվերադառնալու չափ
ես ռոմանտիկ եմ անշուշտ,
բայց չէ ուզի հեռուստաէկրանից դեմքս երևար՝
«02» հաղորդման չարագուշակ նվազի ներքո:

Կամուրջնե՞ր... վաղուց դադարել են գայթակղիչ լինել:
Կախված օրորվե՞լ... բա շլինքս կցավի, է՞:

Մնում է նորից հաշտություն կնքել
Կյանք կոչվող այս պատիժ-նվերի հետ,
Եվ մի քիչ բալ, մի քիչ էլ գիլաս առնելով՝
Վերադառնալ ընտանիքի գիրկը՝
Շարունակելու խաղալ կարճատև (բարեբախտաբար) խաղը
Կյանք կոչվող այս պատիժ-նվերի...

Երբ բիծայանամ

Երբ բիծայանամ,
լրիվ քավթառանամ,
լրիվ քաշալանամ,
իմպոտենտանամ,

Վերջապես հանգիստ շունչ կքաշեմ,
ինչքան էլ բանաստեղծն ասի, թե
«ծերանում ենք, սակայն խելքի չենք գալիս»:

Ել փողոցում չեմ նայի այստեղ-այնտեղ,
չեմ փնտրի նոր ու չճաշակած հաճույքներ,
չեմ փորձարկի ատամներիս և մյուս անդամներիս ուժը,
չեմ երազի հսկանդիայի և Օվկիանայի մասին,
հանգիստ շունչ կքաշեմ և գուցե վերջապես
ի զորու կլինեմ թափանցել
կյանքի իմաստի, հոգու հավերժության ու նման բաների մեջ:

Միայն երկու բան չեմ խոստանում չանել:
Երբ բիծայանամ,
մեկ է, կարծ շալվար հագնելու եմ
և գրելու եմ էս տիպի ոտանավորներ...

Սպիտակ ագռավներով

Եթե աշխարհի ողջ երիտասարդությունը...
Ճանրահայտ լողունօ

Եթե մեր էս երկրի բոլոր սպիտակ ագռավները
հավաքվեին, մի մեծ բանակ կազմեին՝
ինքնաբերաբար կրկռոցը կվերածվեր գեղգեղոցի...

Ի՞նչ գեղեցիկ համերգ կլիներ:

Եթե մեր էս երկրի բոլոր սպիտակ ագռավները
հավաքվեին, մի մեծ երամ կազմեին
(բայց ոչ չվելու, ագռավը չի չվում՝
լինի սև թե սպիտակ)
և մեր էս երկրի բոլոր սև ագռավներին
սովորեցնեին ծիշտ թռչելու ձևը...

Ի՞նչ գեղեցիկ երկիր կլիներ մերը:

Երևան

Բարի,
քարի,
ոյնաց սարի,
քաղաքը այս՝
անմարմին գլուխ,
մեր մայրագյուղ:

Փոշոտ,
փշոտ
ու փիփիշոտ,
քաղաքը այս՝
տուֆի մեծ կույտ,
տուֆե ձանձրույթ:

28

Թքով կպցրած,
ղզած-փչած,
քաղաքը այս՝
շեն ու ավեր,
և լույս, և ստվեր:

Եվ հուսահատ ու հուսավառ,
թե սիրելի, թե ասելի,
քաղաքը այս՝
վանող անվերջ...
ձգող անվերջ...

Վատ բառ (հուշ-պատառիկ)

Նոյի թվին (կամ Նոյի կին Նոյենգարի)
երբ դեռ գիսախորիկ և անմեղ մի տղա էի,
մի անգամ բոլորի ներկայությամբ ասացի «բող»:

Եթե ա և Զիզըս Քրայսթ կամ Ռեմեդիոս Գեղեցկուիի
օդ հանքարձվեի՝
այդպիսի ասունային ռումբի տպավորություն չէի թողնի:
Տիկինների հայացքն ասում էր՝
«Եվ դո՞ւ, Բրուտոս ջան»:
Աղջիկների հայացքն ասում էր՝
«Էսպես զնա՝ դու կոֆե էլ կիսես»:
Տղաների հայացքն ասում էր.
«Բարով էկար մեր շարքերը»:

Իսկ ես ընդամենը մի քրջոտ անեկդոտ էի պատմել...

Բայց այդ հայացքները մնացին ինձ հետ,
և դրանից հետո
ես ոչ բոզբաշ էի ուտում
և ոչ էլ տալիս էի նույնիսկ
իտալացի դերասանուիի Լուչիա Բոգեի անունը...

Մի աղջկա օրագրից

«Այսօր վերջապես զնացի,
առանց հստակ իմանալու, թե ինչ է ինձ սպասում:
Երկուսն էին նրանք,
երկուսն էլ ջահել և առնական,
մեկը խաժակ, մյուսը սև, նուշ աչքերով,
մկանուտ, հաղթանդամ, մարզված մարմիններով,
երկուսն էլ ուժեղ, որ ինձ կիսապառկեցրին
և սկսեցին իրենց գործը...
Կարծում էի, թե հարցերս միանգամից կլուծեն:
Մինչդեռ չփիտեմ՝ մե՞կ ժամ տևեց, երկո՞ւ, երե՞ք...
Նրանք չէին շտապում,
անընդհատ տնբացնում էին ինձ,

Երկուսով ընկել էին վրաս
և ես զգում էի նրանց մարմնի ջերմությունը, ծխի և օժանելիքի բույրը
և ստիպված էի քրով շնչել,
քանի որ ստիպում էին բերանս կիսաբաց պահել:
«Յանգի ստ... լավ է, մի լարվիր, թուլացիր»:
Ես երեմն փակում էի աչքերս,
բայց և բերանիս մեջ զգում էի նրանց թաց և պիրկ գործիքները,
որ բանեցնում էին մեծ հաճույքով...
«Մի քիչ էլ... իմաս կավարտենք... լավ է, չէ»:
Ինչևից, ավարտեցինք, ոտքի ելա,
բայց սուտ կլինի, թե ասեմ,
որ շատ գոհ մնացի նրանցից
(նաև փողի տեսանկյունից):
Ու այդժամ ես երդվեցի ինձ,
որ երեք նորից ոտք չեմ կոխելու
այդ երկու ջահել տղաների
ատամնաբուժարանը...»:

Շարքային մի օր, որ չեր հիշվի, եթե չփորձեի վերածել բանաստեղծության

Արթնացա դեմքիս վրա թրմփոցից:
Ին 2,1 տարեկան որդին էր, որ
աչքերիս և ատամներիս վրայով
գնաց մոր մոտ:
Չնախաճաշեցի, ժամանակ չկա:
Ինձ մի կերպ գցեցի երթուղային տաքսին
և ռակոմ պոզայով հասա աշխատավայր:
Staff meeting-ին մեր դյուրագորգիո (բոլոր ինաստներով) շեֆուհին
խմբակային կլիզմա արեց ամենքիս՝
մեր գործած, չգործած և հատկապես՝ գործելիք
բոլոր մեղքերի համար:
Շարվեշարան եկան այցելուները:
Ինչպես միշտ՝ ինչ ռանգի մարդ ասես չեկավ մոտս.
պետական չինովնիկներ և գենդերային տիկնայք,
չկայացած արվեստագետներ և նախկին կուսաշխատողներ,
ավանդարդիստ աղմկարարներ և դղյանած պառվարողներ,
իրար հակակրող վրացական միությունների ակտիվիստուհիներ,
Եհովայի վկայուհիներ և անխոնջ մանկապարտիզանուհիներ,
քժնողներ և արհամարհողներ, օրինողներ և մտքում անիջողներ...
Բոլորը հանճարեղ ծրագրեր ունեն և բոլորը փող են ուզում:
Լանջն անցավ մի քիչ լարված,
բայց վերջում էի միրգ խեղդեցի թոխստիկի հետ,
մի քիչ ծիծաղեցի Գոհարիկի հետ,
մի քիչ լազվեցի Արմուշիկի հետ,
և հայդա՝ էլի էկրանի առջև ճկուելու...
Սուրբ ընկավ, եկա տուն, ճամփին իսկի չշեղվեցի:
ճաշեցի մենակ, հիշելով չամուսնացած ընկերուհուս խոսքը,
որ մենակ ուտելը մենակ քնելուց դժվար է:

30

Չիք տրամադրություն

կարդալու, գրելու և նույնիսկ երաժշտություն լսելու:

Կողակցիս հետ խոսեցինք անցած օրվանից, կյանքի դրվածքից,

Դայաստանի բախստից, դիետա պահելուց և վաղը սպասելիք ճաշից:

Եվ պառկեցի քննելու, ավելի ճիշտ՝ քնել փորձելու:

Այդ պահին մի ժանոթ տիկին զանգեց՝

իր մի պորոյեկտի մասին գիշերվա հազարին ինձ տեղյակ պահելու:

Բարեբախտաբար գիծն ամջատվեց...

Սովորական մի օր:

Ոչ մի ցնցող բան չպատահեց:

Ոչ մի հրաշք չկատարվեց,

որքան էլ որ սպասում եմ այդ անորոշ հրաշքին ամեն օր,

ու թերևս այդ հրաշքի սպասումն է

փոքր-ինչ իմաստավորում այս անիմաստ կյանքը,

թեկուզն այն համառորեն չի գալիս...

28.06.1999

ԱՆԿԱՎ ԵՐԱԳՆԵՐ ԲԱԶԱՆԱԴԱՅԻՆ ԹԵՄԱՅՈՎ

Ավաղ,

Ես չունեմ բաջանադ:

Բայց ինչ լավ կլիներ, թե ունենայի

ալիքածև մազերով և երկնագույն աչքերով մի բաջանադ,

որը լիներ, ասենք, բալերոն, կամ խտալերենի թարգմանիչ,

և կամ, լավ, գոնե ֆագոտահար:

Միասին կգնայինք ծովկ բռնելու,

քոչի բազարից հազվագյուտ իրեր գտնելու,

փետրագնդակ (բաթմինդոն) խաղալու,

երոտիկ շոուներ դիտելու,

և բարի օյինբազություններ կանեինք մեր ընդհանուր զոքանչի գլխին:

Բայց ավաղ,

Ես չունեմ բաջանադ:

Դրա համար երբեք չեմ գնում ծովկ բռնելու,

քոչի բազարում հազվագյուտ իրեր չեմ գտնում,

երբեք փետրագնդակ չեմ խաղում,

երոտիկ շոուներ չեմ դիտում

և ոչ մի օյինբազություն չեմ անում զոքանչիս գլխին:

Որովհետև, ավաղ,

Ես չունեմ բաջանադ:

Հ.Գ. – Ու չեմ էլ կարող ունենալ:

Նարեկ Նիկողոսյան

31

Վիճած սեր

Առավոտ էր: Սերը արթնացավ կեղտոտ անկողնում: Սերը հոգնած էր ու փնթի տեսք ուներ: «Փողդ սեղամին ա», – ասաց Մարդը ու գնաց իր գործերով: «Տեսնես ինչքա՞ն ա թողել», – սկզբում մտածեց Սերը, հետո հիշեց գիշերը, ժպտաց զգվաճքից, բայց ուսկորները ցավում էին, – փոխսվել են»: Յոգոց համեց. «Երևի սոված են: ճիշտ ա, շատ են ուտում, մարմինս տձևացել է, թևերս հազիվ են ինձ բարձրացնում, բացի այդ ոջլոտել են», – քորեց թևերի սևացած բնբուլները ու նայեց խոհանոցի կողմը. օրերի գաօջախի վրա դրված էր ժանգոտած ուղեղ կաթան, որի տակ սերսի նստվածք կար, իսկ կողքերին անմեղ սիրո, իսկական սիրո արյուն էր թափվել՝ եռացել ու վառվել էր, ու այդ ամենից անորոշության հաճույքի ահավոր հոտ էր գալիս: Սերը գիշկաց - բերանից սիրո սուտ խոսքերի համ էր գալիս, իսկ բերանի կողքերին անսեր համբույքի թքի մնացորդներ կային, զգաց այդ. ենո գիշերը իրեն ուրիշ տեղից գնդակահարող հաճելի, բայց ցավուտ ճշմարտությունը շարժող ձեռքի ժամեր հաշվող ու թաղող մատներով մաքրեց դրամը: Սերը մի կողմ շարտեց ներսի կողմից շատ կեղտոտված ամոթխածության վերմակը, որով փաթարվել էր ու մերկ մարմնով ու զգգզված թևերով կանգնեց առօրյա կյանքի նման խառնաշփոթ ու կիսամութ սենյակի մեջտեղում՝ արդարացում հայելու առջև: Սկզբում դողաց, բայց դա էլ մերկ լինելու հաճույքից չէր, նա մրսում էր վերջին մոտիկ լինելու քամուց. տեսավ, տիրեց. իր վրայի սպիտեր շատացել էին՝ ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը սիրո պատճառով ինքնասպանություն էր գործում, նրա վրա նոր սպիտեր էին ավելանում, բայց Սիրոն թվում էր, թե դրանք իր որձի՝ սեր խաղացողի նման ծանր ձեռքի հարվածներից է: Սերը ուզեց զրուցել իր արտացոլանքի հետ, բայց ոչինչ չստացվեց՝ նա չէր հասկանում իր խոսքերը, են խոսքերը, որ չեն ասպում: Նա ինչ-որ ցավ զգաց փորում. Սերը հասկացավ, որ ինքը հիյ է. նա պիտի ծներ վերջապես. հասկացավ ու վերջի ցավը ոռնաց նրա մեջ՝ Սերը դառել էր բռզ, իսկական Սերը մեռել էր են գիշեր, երբ ինչ-որ մեկի Դու-ն նրան ասել էր, որ չի սիրում, երբ ինչ-որ մեկի Դու-ն ուրիշի մեջ էր փնտրել նրան, երբ ինչ-որ մեկի Դու-ին պոկել էին նրանից, երբ ինչ-որ մեկի Դու-ն Սիրո նման հղիացել էր ուրիշից և երբ ինչ-որ մեկը սպանել էր և իր Դու-ին, և իրեն, որ իր Դու-ից ոչ աշխարհի վրա, ոչ էլ իր սրտի մեջ չլինի: «Պետք էր, որ նոր սեր ծնվեր... Բայց...»

Բայց հիյ, փնթի, զգգզված-բռզ Սերը, էն իինը, նստեց անհասկացության, եսասիրության, ես արտաքրոելու համար ծակված արորին ու սկսեց ծալվել ու ուղղվել, ծալվել ու ուղղվել, ծալվել ու ուղղվել: Ծալվել ու ուղղվել ու մտածել. «Չէ, չէ, չեմ ուզում, ինչ պիտի անի իմը՝ Մարդը, այս նոր Սերիկը, ինչպե՞ս պիտի պահի նրան, առանց այն էլ նա մի կերպ հավատ, ողորմություն խնդրելով է ապրում, – ծալվում էր ու ուղղվում, – ես կսպանեմ ու ես էլ կմեռնեմ, իմ աշխարհ Մարդուն սեր պետք չի, ես ծերացել եմ, նա՝ զբաղված է, ես էլ չեմ կարողանում բավարարել աշխարհին՝ իմ Մարդուն, ես տձևացել եմ, ես իմ ու իր բաքուն ասվող խոսքերը չեն լսում... Ես ստվորական բռզ եմ ու վերջ. մի՞թե սկզբում ես ուզում էի այսպիսինը լինել, չէ՛, չեմ ուզում, – ծալվում էր ու ուղղվում ու երգում էր իր վերջին երգը՝ նվոցը, – Ա՛...»:

Ծալվում էր ու ուղղվում, որ վիժի...

Վիժված Սերը ծորաց ներքն, իսկ ես ու Դու խեղդվեցինք դրա մեջ...

Լողված վերջը

«Ինձ տանում են կախելու, կամ վառելու, կամ պատի մեջ ողջ-ողջ թաղելու, կամ գնդակահարելու կամ էլ ինձ կիսինամ՝ արդարացնելով կաքսորեմ: Ուրախ են, որ ինձ մահկան եմ դատապարտում, որովհետև միայն հիմա են զգում, որ ես դեռ ողջ եմ: Բայց ես չեմ ուզում կախվել. եթե ինձ կախեք, հենց որ աթոռը ոտքիս տակից քաշեք, կոկորդս կպայթի, ու նրանց ականջները, նրանց ուղեղի և մնացած մասերի նման, ավագ կդառնան չասված խոսքերի ճշմարտությունից... Այդպես կլինի, որովհետև այդ բաները չեն ասվում, դրանք պիտի թքվեն կամ կուլ գնան, իսկ դու ինձ կախելով ասում ես՝ ասա: Բայց, խոստանում եմ, դու դրանք մի օր կլսես, դու դրան ես սպասում:

Ուզում եմ ինձ վառել, որովհետև ասում են, թե իբր ինչ-որ բաներ մոխիրի նման չեն վառվում... Չէ՞-հա... Ես էլ են նրանց նման պտտվող ու կլոր բաներ հայտնագործել, որ վաղուց վաղը հայտնագործում են, բայց նրանք ինձ այսօր չեն ուզում վառել, ու ստիպված են ինքս այդ անել, որ ստացվի: Ինձ կվառեն իմ վաղուց արդեն չորացների

32

ցախով. ուժեղ ծովս կլինի, ու զզվելի հոտ կգա՝ գոլորշիացող արցունքների ծխի ու ինքնակատարելությունից ներսից փոտո մաշկի հոտ... Դու իմ ինքնահրկիզումը հեռուստացույցով կդիմու ու կնտածես՝ երկի ինչ-որ բանի համար է այդ անում՝ չես հասկանա:

Ուզում եմ ինձ պատի մեջ ողջ-ողջ թաղել, որովհետև այդ պատը ավելի ընդարձակ է, քան լինելունը: Ասում եմ՝ մեռած աչքերին մնում է նրա կյանքի վերջին վայրկյանին տեսածը. Երբ քանդեն մութ պատը, որ իմ դիմակը հանեն, ուրիշին մտցնելու համար, իմ աչքերին կտեսնեք մի ամբողջ միջակ կյանքի աղոտ լույսը. փոշու շորով այդ կարբեն ու աչքերս կփակեն: Դու պատից ներս կնայես ու կտեսնես միջակ մարդու կյանքը, իսկ հետևի կողմից պատին ճանկուտված կտեսնես «առօրյա» բարը: Կողքին կասի՝ սովորական մարդ չէր, չես հավատա, կամ...

Ինձ տանում եմ գնդակահարելու, որովհետև ուզում եմ, որ երրորդ աչքս բացվի: Որ տեսնեմ վերջապես: Ասում եմ, ամեն ինչ սկսվում է մահից: Իմ սկիզբը տեսել եմ, գուցե այդ ժամանակ կիասկանամ՝ ինչի համար է այս ամեն ինչը: Նրանք կյանքի շորերը կիանեն վրայիցս, իսկ ինձ կզցեն նախապես իմ նմանների համար փորված մեծ փոսի մեջ, մեզ՝ եռաչքանիներիս հեռվից մատով ցույց կտան, բայց մենք այդ ժամանակ մեր երրորդ աչքով ուրիշ կողմ կնայենք: Իսկ դու, դու գիտես, մի օր այդ փոսը կլցվի, հողով կծածկեն, վրան ինչ-որ բան կածի, կքաղես-կքաշես մի պահ դու էլ կտեսնես:

Իհնա ամենաշատը ուզում եմ ինձ արդարացնել, որովհետև առանց այն էլ այնքան շատ են անմեղության դերասանները, որովհետև բոլորը մեղավոր են: Այդ ժամանակ ես կասեմ քո ու նրանց ուզածը՝ այն, ինչը երբեք դեռ չի ասվել: Խոսքերը կամուրջ կսարքեն ու առաջինը ես իմ գործերով կանցնեմ նրա վրայով, ու եթե ամուր լինի, դիմանա, կփրկվեն նրանք՝ նրանք ովքեր միայն կարողանում են կամուրջների տակ ապրել: Դու այդ ժամանակ արդեն չես լինի, բայց այս ամենից գոհ կժպտաս քո սպիտակ, գանգային ժպիտով»:

Կգա՞ս...

–Արի՛, քո հետ չե՞մ...

–Ի՞նչ...

–Արի՛, ժամանակն ա...

–Ես վերջն ա...

Իսկ սա մահապարժի ենթարկվածի խցում արյունոտ քթի պատճառով լղոզված հատակի խոսքերն են:
(Լույսի տատանում - էլեկտրական աթոռ):

Յաբեթ Մուրադյան

Փշե պսակ

(Կատարսիս)

Յիմա ո՞ւր տանեմ ինձ,
այս հոտած լեշս ո՞ւր քարշ տամ,
ու՞ն տամ, ո՞ւն նվիրեն ժանտախտի այս բույնը,
լքվող մանկան ո՞ւն դրանը թողնեն,
սարսափելի այս պարզմին ո՞վ է արժանի,
ո՞ւն բախտն է, որ չպիտի բերի...

Պատասխան չունեք;
հեռանում եք հապատապ,
անտեսելով, չտեսնելու տալով ճողոպրում եք,
ցարուցրիվ, դատարկուն փախչում, խույս եք տալիս,
դուք այդ ո՞ւր եք...
այդ ինչո՞ւ եք խույս...

Չէ , ճիշտ որ,
ի՞նչ ունեք գլխացավանքի հետ,
պատուհասի,
անեծքի ու անիծվածի,
հետին աղտեղության հետ ի՞նչ կապ ունեք դուք.
Ճեզ ի՞նչ,
ում ինչ,
թե մեկը փտում հոտում է գետնատարած,
թե սալահատակի վրա մեկն իր ճակատագիրն է
փսխուն
ի տես բոլորին.
Դուք չէ՞ որ չեք կարող նայել,
Դուք չէ՞ որ համոզված եք, որ դեռ սեր ու ճանապարհ
ունեք,
աշխատանք, ընտանիք.
Ուրեմն և ապահով պատյան,
անխոցելի զրահ,
ուր աղտեղությունը չի թափանցի,
ուր վարակը մուտք չի գործի –
ճանապարհ, ապագայի ուրվագիծ, համոզմունք ու
սկզբունքներ
և արժանավայել էլի շատ բաներ՝
զրահի պես կուռ, բերդապարսպի պես ապահով,
անդրսությունների պես անխորտակ...
Իսկ ես,
Ես արդեն իշել ու հավասարվել եմ ցեխերին,
փոշու պես մանրացել, ցածրացել, լարջուն սողացել եմ
գարշ,
կոշիկների տակ գնացող - եկողի մաշվել թափալգլոր.

կարծրացել, կավ եմ դարձել, անհույս կպել եմ գետնից,
գլորվել միշտ վար ու վար,
դեափ ներքև շարունակ, անվերջ հատակը դեափ,
անդունդը,
ընկել ու ընկել եմ.

և անկումս իմն է եղել, որ չեմ ուզեցել,
չեմ կամեցել ոտքի ելնել,
շոկվելս չեմ երազել, -
ինձ այս գունդուկիցիկ, մեկուսի, այս կուչուծիգ
վիճակն է միշտ եղել սիրելի,
թվացել միշտ նվիրական,
նվիրական ու արժանի ինձ պես եզակի տականքին:
Մի ցանցառ թիփ տակ, մի ավերակի անատամ
երախում,
աստծուց ամիծված օրերիս –
օրե գտնելով – օրե լավելով, օրե լակելով,
թափելով ու տարածելով շուրջս ապականությունը –
գաղցության արմատին եմ հասել, գագաթին տիրացել
ստորի.

ուր վերջանում է որոնումը,
պատեպատ ընկնելն ընդհատվում է,
դադարում, իմաստից զրկվում է ամեն մի փնտրտուք...
ի՞նչ փնտրել՝ կորածը սերն է,
ի՞նչ կորուստ, երբ թացրել եմ ձեռքիցս անդարձ,
ել ինչ ապառնի ու ինչ երազանք,
երբ ճանապարհ խճճված ու թնջուկված էր են գլխից,
ժամանակս անցած հենց սկզբից, սկզբից էր սևացած
անունս...

Այս կողմ,
այս կողմ,
տվեք ինձ ձեր ձեռքը, ձեռք մեկնեցեք,
մի թողեք փողոցում մեռնեմ - անարժան մահով.
չէ՞ որ ազնվատոհմիկ եմ,

բարեծի՞ն,
իշխանա...
չէ՞ թեսնում, չէ՞ լսում, չէ՞ կարեկցում, -

բարձրացրեք ինձ,
ես դեռ տրորված չեմ իսպառ,
ընդիշտ փոշիացած չեմ,

կորած խայտառակված, անձեռնմխելի

ապականված չեմ տակավին,-

դեռ հույսեր ունեմ,

անգամ դեռ խաբել ու խարդախել գիտեմ,

հաճոյանալ,

արժանավայել երևալ,

զարմացնել էլ կարող եմ դեռ,

ծառայե՞լ...

դեռ մարմին եմ՝ ոչ փտած դիակ,

դեռ շունչ – շնչավոր եմ, ոչ՝ խրտվիլակ...

34

Տվեք ձեր ձեռքը, մի խորշեցեք անմաքրությունից,
ես անմաքրուր չեմ,
ես ընդամենը թշվառ ոչինչն եմ, մաքրուր ոչինչը,
որովհետև խոստովանում ու մաքրվում եմ դեռ,
դեռ հավատում եմ իմ շտկվելուն,
ձեր օգնությանը, սատար կանգնելուն – հավատում եմ,
որովհետև միակն եմ, որ անկեղծ եմ,
արդար եմ, որ մենակ եմ,
համար եմ, որ ծնկել ու ոտքի չեմ ելնում...
բռնեք, բռնեք ձեռք. Վարակից մի խորշեցեք,
երջանիկ ու մաքրուր սիրահարներ,
իմ ամոթալի ու վտանգավոր ախտերից մի խորշեցեք,
մի վախեցեք,
իմացեք, որ վարակը մեռնում է սիրո մեջ,
այսպիսի սիրո մեջ կասեցվում, կանգնեցվում է, որքան
էլ մոլեգմի,-
բարձրացրեք ինձ,
ու թեև դարձի բերելն ուշ է ինձպեսին,
ոտքի հանելը քար շալակելու պես անօգուտ,
մարդ ու մարդկայինը մեջս արթնացնելն արդեն
ամիմաստ –
ապարդյուն ջանք,-
զի մարդկայինն եմ, որ կամ,
չարությունն ու նախանձն եմ ես,
ձանձիրն եմ, թույլ հաշտվողությունը,
ամենաերևելի տականքն եմ՝
թաքուն խոստովանողների հիացմունքն եմ շարժում,
կամք եմ, ուրեմն ուժի մարմնացում –
ես՝ ընկածս ու տրորվածս,
ճնրթվածս ու անկանոն գրիվ եկածս, -
սովածն եմ,
հենց քաղցն եմ,
որ դեռ համերն է հիշում ազնվագույն ուտեստների,
կույրն եմ, որ լույսի վետվետալն է տնօրինել,
բորոտն եմ՝ միշտ վարդարույրը նախընտրող,
հանիրավի գրկվածն եմ –
ինքս ինձ եմ գրկել,
դուք բոլորդ եք ինձ գրկել,
ինձ ինքն՝ Աստված է գրկել - ես աստծո գրկածն եմ,
որ տեսնեմ ու ճանաչեմ այս գրկանքն համատարած,
որ փառաբանեմ նրան,
որ տիրովանա, չմնա անտեր աշխարհիս երեսին,
խեղճ չմնա,
վիզը ծուռ, թափառական,
հալածական ուրվական չդառնա...
Գեշն են ես, խեղը,
դաժանն եմ, խարդախն ու նենգը,
կավատն եմ, անառակն օրերիս, աշխարհիս ծիվաղը,
միայն ես եմ,

ես բավական եմ աշխարհին,
աշխարհին հերիք են իմ արատները՝
դեռ երկար են հերիքելու.
ես անհաշիվ արատավորն եմ,
բոլորիդ մեղքերն էլ կամբարեմ,
մեջս կամփոփեմ, դժոխիս բաժինը կանեմ,
ներսս կցեմ, ինձանով կանեմ,
կվուտավեմ,
ինքս իմ մեջ կեռամ ու կպղպջամ,
ես ինձ կուտեմ – կազատեմ ձեզ,
ես ինձ կմաշեմ կիղկեմ ձեզ,
ինձ կրայքայեմ – կփայլեցնեմ ձեզ...
և ոչ հանուն ձեզ,
ոչ հանուն նրբավարության,
ոչ սիրույն աստծո ու իր տառապանքի,
և ոչ հանուն ինձ,
ոչ հանուն կաշվի –
այլ հանուն հենց արատների մերոց,
ի սեր զրկանքների ու նենգության աշխարհ զարդարող,
արևը բարձրացնող տառապանքի.
նրանք էլ են ապոել ուզում,
արևի տակ, հողի երեսին՝
նրանք էլ տուն – տեղ, կողակից ու ցավակից են
ուզում...
Սուտեցեք, մոտեցեք խաղաղվելու ու փարատվելու,
թաքուն մոտեցեք.
մեկ առ մեկ,
թող ձեր աջը չիմանա մոտենալը ձեր ահյակի,
և թող ձեր ականջը չիմանա անկեղծանալը ձեր
շուրթերի, -
ամենաապերախտներ ու ամենաստորներ,
ձեզանից ապերախտն ու ստորն եմ ես,
ամենամենգեր ու ամենադաժաններ,
ձեզանից առավել զագիրը ես եմ,
դուք ի՞նչ եք,
ուղղակի հրեշտակ եք դուք, ամեն չարաճիներ,
մանկանտություն ու համակ բարություն եք դուք –
այն ամեն վատթարի առաջ, ինչը ես եմ մարմնացնում,
ինչը շալակել ու կրում եմ ես,
ամենաասուրբն եք, անեղծն ու անբիծը իմ
խայտառակությունների մեջ,
իմ մեծամտության առաջ մարդասերներ են
վիժվածք դահիճներն անգամ,
ժողովուրդների հոգեառները սոսկ մանուկներ են
լուսերեն,
ագահ – կավատները՝ տիկնիկներ բարեժախտ,
անվնաս խամաճիկներ –
իմ գարշելի գործերի առաջ,
իմ խարդախս հաշիվների դեմ ծածկամիտների մի ոհնակ

աշակերտի պես գլուխ է խոնարհելու,-
Ու այս ամենը ես եմ...
Այս բոլորն իմ մեջ են ու ինձ վրա՝ իմ խիղճ չեղածին
ծանրացած,
չարյաց պոչերն իմ տակ են, բոլոր արցունքները՝
բռանս մեջ,
անվանս ու իմ շուրջն է ողջ թուքումուրը.
Ես արժանի եմ այդ թքին,
միայն ես եմ արժանի անարգանքին ու մատնացուց
արվելուն,
լուտանքի, բանադրանքի արժանի այսօր միայն ինձ են
տեսնում.
հայինյեցեք,
անիցեք ինձ աշխարհի բոլոր լեզուներով,
հիշուտեցեք, ծվեն-ծվեն արեք ինձ,
մի սպասեք էլ աստծոն պատժին՝
տրորեցեք անխնա.
հիշեցեք, որ դուք ձեր ամոթն եք տրորում ու ձեր խիղճը,
հիշեցեք, դուք ձեր խայտառակությունն եք տրորում,
ձեր անպատվությունը...
ձեր ազգուտակը,
ձեր տունը, ձեր կանանց ու աղջկներին
անպատվողին,-
ձեր վաստակած խաղաղությունը խաթարողին,
ձեր առաքինությանը կասկածողին,-
մի խնայեք, ուրեմն,
ավելի դաժան ու առավել անխնա.
դուք ձեր թուլությունն ու մաղձն եք տրորում,
ձեր միջի օձը,
ձեր դարավոր թշնամուն,
քաղցկեղը, որ բուն է դրել ձեր մեջ.
առավել սաստիկ, առավել ցավոտ, կտրուկ ու խորն
ավելի,-
աղիքներին հետ թող աղտեղությունս դուրս հորդա,
պայթեմ, արևերես ելնի հոտած թարախն ու թույն,-
տրորեք, սատկեցրեք ինձ,
ինձ հաճելի է այս տանջանքը,
ինձ երջանկացնում է այս ցավը,
այս դաժանությունն ինձ իրոք դուր է գալիս,
սայրերով ծակծկեցեք, բզկտեցեք մարմինս,
փորփորեք, մեծացրեք վերքերս,
թող սև արյունս ու դեղին ջրերս վազեն,
գաղջ թթուներով խաշեք, խարանեք ու ցեց գցեք
մաշկս,
աչքերս դուրս հանեցեք,
պոկեցեք լեզուս, խոցուեք յարդս,
քառատեցեք ինձ, շներին գցեք կերակուր...
Ես ցավ չեմ զգա -
Ես ամոթ չեմ զգա,

Ես կիհանամ,
Ես կաղաղակենմ, որ դուք էլ հիանաք,
դեռ կծիծաղեմ էլ՝
ծեզ անհասկանալի արգահատելի ծիծաղով...
Ես չեմ մեռնի - Ես կվերանամ,
Ես չեմ սատակի - Ես կոչնչանամ;
և դուք կտոնեք ձեր լիարժեք հաղթանակը՝ լիարժեք,
և դուք կցնծաք ձեր ցնծությունը կատարելապես,
իսկ ես հասել եմ իմ վերջին արդեն,
հասել եմ սահմանին այլանդակությանս,
հատակներին հատակին,
անկումներիս անկմանը,
որ բարձրանամ դեռ,
այնտեղ, ուր պսակս է փշեղեն,
այնտեղ ուր ճանապարհս է...
զի դեռ ճանապարհ ումեմ,
Ես դեռ ճանապարհ ումեմ...

36

Վահան Իշխանյան

Կանաչ օդանավակայան

Մի հատ նայի: ծոցագրապանից հանեց անձնագիրը ու բացեց վիզան՝ շենքեն վիզա: Երեկ ուրիշ վիզա էին դրել՝ էմիրաթներ, սխալմամբ: քանի ժամ մնաց, կոստյումի թևքը հետ տարավ, նայեց ժամին: շվեյցարական՝ Franck muller Geneve: մի ամիս առաջ առավ: Երեք հազար դոլար: չորս ժամից հռոմում: ժամը շվեյցարական, երկիրը հռում: կայֆ:

Բայց հիմա մի քիչ քունը տարավ: սեղանին տեղ չկա գլուխը դնի, կեղտոտ ամանները իրար վրա լցված, կետչուախ ու մածունի շշեր: ամանները յուղոտ կարմիր՝ պամիդորի, դեղին յուղի ու կանաչ բորբոսի հետքերը վրան: բաժակները սուրճի՝ փոքր, հատակին մրուրը՝ հաստ շերտով: չդնի բոլորը գետնին, լվացարանն էլ լիքն է, թավա, կաթսա, վրան պամիդորով ձվածեղ են սարքել, կաթսայում ճաշ են եփել՝ լորիով, հետքերից երևում է: մի հատ աման դնի՝ սաղ փուլ կօա: սառնարանի վրա էլ տեղ չկա, ֆեն, վրան մազափունջը, մեղրի կիսատ բանկա, մեղրո դեղին, թե յուղ է մեջը: ու խաղալիքները: փոփոք՝ կարմիր, կոկորիխոսը՝ կանաչ, ավտոն ու ատրճանակը, իրար վրա լցրած: վերը ընտանեկան լուսանկար՝ աղջիկը՝ փոքր, երևի նոր է դպրոց գնալիս եղել, հերը՝ բեղերը բարակ, մերը՝ պոռշները սև, սև չի, կարմիր է, սևուսպիտակին սև է տալիս: աղջիկը մեծացավ-մեծացավ ու կյանքի տրակտորի տակ մնաց:

Գլուխը դնի գոնեն երկու ժամ կը նի: չէ լավ, կեղտոտ ամաններին, յուղոտ-յուղոտ են, մեկ էլ ծեռները չմխտուի: կոստյումն էլ քսվի, յուղի տեղը մնա, խայտառակ: կոստյումը բաց՝ յուղի տեղը մուգ: առանց էն էլ ճնոթվել է: ոչինչ քիչ մնաց: հենց հասնի հռում առաջին գործը մի հատ ջինս կառնի ու թիշրո: հետո հյուրանոցում մի կուշտ կը նի, մինչև կոնֆերանս: իրիկունը նոր պուց:

Մի հատ շոեմ: մտավ գուգարան: ինչքան պիտի սպասեմ սրան: դուրս հանեց ու բաց թողեց՝ շռոռոռո՛: հինգ ժամ, չէ չորս ժամ, չորսը ժամից կրթնենք: շոելը քանի որոպէ: վաննայի տակից չեկչելոցի ծեն լսվեց: էս ո՞վ է: երևի մուկ է: սպասի նայեմ: ներս քցեց, շղթան քաշեց ու կռացավ: իյա, ըստե ինչ ես անում: էրեխտեն է: վաննայի տակ սեղմված պառկած, գլուխը և կողմ: արա խի ես մտել վաննի տակ: ծեն չի հանում: արի, արի տեմամ: ու ծեռը մեկնեց: չէ, թող մնամ ստեղ: խի մնաս: արի, արի քեզ բան ունեմ ասելու: երեխան ծեռը մեկնեց: քաշեց դուրս: փոշու մեջ կորած էր, էրեխն սարդոստայն: թափ տվեց ու ծեռով սրբեց սարդոստայնը: բարի է: երեխային մաքրում է: խի էիր մտել ընդեղ: որտև...: որտև ի՞նչ: երեխան լոեց: ասա, ինձնից մի ամաչի, բա հոպարից կամաչե՞ն: երեխայի դավերիան կստանա: ես քո ընկերն եմ չէ: ընկերս ես: դե որ ընկերդ եմ ասա: որտև. երեխայի աչքերը լցվեցին: էլի չի խսում: էս լացու՞մ ես: որ լացում է ու որտևը ասում է, կասի: բա դու տղանարդ չե՞ս: գրապանից հանեց թաշկինակը ու երեխայի աչքերը սրբեց: շատ բարի է: մի լացի: ասա, որ չլացես: մարդու չեն ասի: որտև էս ինչքան ժամանակ ա մանային քունում ա: ի՞նչ ա անում: քունում ա: էտ ինչեր ես ասում: գլուխը սկսեց շոյել: մամայի ընկերն ա, մաման ինչ ա իրավունք չունի՞ ընկեր ունենա: ամեն օր հազար ընկեր ունենա՞: ամեն օր հազար չի: էն մյուսները ստից են: դե արի գնանք: երեխայի ձեռից թռնեց ու դուրս եկան, մտան խոհանոց:

Էլպես բաներ էլ չմտածես: սիրուն չի: քո մաման ա: էն էլ որիկ հոպարը: երեխան տարուրետկին նստած նայում էր տակից աչքերի մեջ: աչքերը կանաչ: թե շագանակագույն: կանաչ-շագանակագույն: կանաչը սիրում է: շագանակագույնը՝ չէ, ազգայնականների գույնն է, որ սիրի, հռում չի հասնի: հիմար, շագանակագույնը չի, դարչնագույնն է: գույնների մասնագետ չի: պաշտպանել է բիոլոգիա՝ տրիխանանոցի գեներացիան խոզերի մարմնում: սովետի ժամանակ էր, դրա համար՝ մարմնում, բայց ինքը իո գիտեր ինչ է պաշտպանում՝ տրիխանանոցի գեներացիան խոզերի հոգում: էտ հեշ, անցակ, հիմա գիտի՝ կանաչը սիմվոլ է, մայրության, գեղեցկության, պտղաբերության, բնապահպանության, ֆուտրոլի, գարնան ու զարթոնքի: լավ է կարմիր աչքեր չկամ: տեսս հանձնելուց գոեց կարմիրը չի սիրուն ու շենքենի վիզան գրապանում:

Նստեց մյուս տարուրետկին: նայի աչքերիս մեջ: առանց էն էլ նայում էր: էլ տենց բան չես մտածի, չէ՞: Չեն մտածի: ու էտ վաստ բառն էլ կմորանաս, չէ՞: հա: բայց ինչ բայց, ասա, ասա մի ամաչի, ես քո հոպարն են: բայց հայարում ինձ ասում են բոզի տղա: շատ բան են ասում, դա մարդու իրավունքների խախտում է: կոպիտ: ամեն քայլափոխի իրավունք են խախտում: սա որ իրավունքն էր՝ երեխաների, բոզերի, անձի պատվի արժանապատվությա՞ն, խոսքի իրավունքի, չէ խոսքինը հակառակն էր, եթե չասեն իրան բոզի տղա՝ կխախտեն իրավունքը:

որ մյուս անգամ ասեն, ինձ կասես, արձանագրություն կկազմենք: հետո էլ չեն ասի՞: դատի կտանք, էլ չեն ասի:

Երեխան տեղից ելավ ու վզովն ընկավ: հոպարն ա թի:

Ստացվում ա էլի: Երեխաները սիրում են: որովհետեւ բարի է: դե նստի նստի: Երեխան վերադարձակ տարութետկիմ: տանի պահի՝, ինչ անի, դաստիարակի՝: բողի մոտ չքողմի՝, ինչ անի: իրա 2 երեխերի հետ քի մեծացմի՝: կնօան ասի, խեղչ երեխին տիրություն անե՞նք: թե չանե՞նք: բարի մնա, թե չննա:

Ինչի՞ չեն քնում: որտեղ: քո անկողնում, էլ որտեղ: քնած էի, որ չիշիկ արեցի տակս, մաման դուրս արեց սենյակից: պարզ ա: գնա բացատրի՝, ինչ անի, ասի երեխս է, տակը չիշիկ կանի, պիտի բացատրես, որ չիշիկ է անում՝ ջղայնանաս, չխփես դուրս չանես: Երեխայի իրավունքի հարցեր կան, ժողովուրդը անտեղյակ:

Խեղճ երեխին գոնե նորից քնացներ, էլի թող քունվեն: չէ, սպասի, էլի թող սեքսուալ ծառայություն մատուցի: Երեխան նայում էր աչքերի մեջ: ի՞նչ-որ բան ես ուզում: սոված եմ: սոված ես: ինչ անեմ: սրանց տանը բան չկա: ասա գալի քունում ես գոնե հետո մի կտոր հաց բեր: որբ մեղավոր չի, մերն է, եղբան աշխատի, երեխեն սոված մնա:

Սպասի: տեղից ելավ գնաց սենյակ, խոհանոցի դուռը հետևից փակեց: թիսկ թիսկ: թեթև ծեծեց սենյակի դուռը: ինչ ա էլել: ներսից որբ գոռաց: արա մի գոռա, արի բան են ասում: հեսա: ինքը ենտեղ լիներ, որբ էստեղ, երեխայից գլուխ չէր հանի: Երեխային մի բան չանե՞ր հանկարծ: ինքը բարի, որբ չար: որբ հայտնվեց լրիվ տկլոր: անդամը թաց կախ: արա չհոգնեցիր: մի հատ էլ ցավի տանեմ, վերջին անգամ հայրենիքում բա պուց չքունեմ: արա դե եղբան քունեցիր՝ հելի էրանք: իրեք ժամից թշնում ենք: իի ժամը քանիսն ա: իրեքը: լավ իրլը չորսը ժամ կա: մի հատ էլ ու պոժ: Երեխեն սոված ա: ցավի տանեմ, իջի երեխու հետ մի բան առ թող ուտի, դու էլ կոֆե կիսմես մինչեւ պրօնեմ: հեսա կայնցնի, մի հատ էլ մտցնեմ ու էրում ենք, մերնեմ կյանքիդ: լավ:

Վերադաշնում էր խոհանոց հետևից՝ սպասի: ինչ ա: արի ասեմ: հետ եկավ: լի կուզես մի հատ էլ դու քունես: արա չէ, փող չունեմ ծախսեմ: թե՞ ծախսեմ: ունի, բայց ծախսի՝, թե չծախսի, ծախսի տասնինգ հազար դրամ՝ ճռ, ճռ, ճռօնան, իմաստուն թումանյանի ռոժը ուրախ կանաչ դրամի վրայից: թումանյանը բարի, ծախսած դրամը վատ բանի վրա: կանգնեց: ծախսի: թումանյանը բարի, ցանկությունը բնական: ինչ փող, կիսուսամ թեզ ձրի կտա: չէ չէ: ձրի, կլինի ոռի ջերից: ոռի ջերից, ոռի քունած, մի հաշիվ է: չես ուզում դե լավ, որբ դուռը փակեց: ինքը քունի, վրայից ես: չէ, զգվում է:

Երեխան նստած նայում է: գնանք դուրս մի բան ուտես: Երեխան անձեն վեր կացավ, ենթարկվում է: որ ուզի՝ Երեխան հանգիստ կենթարկվի: չհանի՞: չար է: չէ, իո որբ չի: որ ինացվի, հռոմ չի հասնի, դաժե որ հասնի, հռոմում իմացվի, էլ կոնֆերանսին չի մասնակցի: Երկրից կվտարեն: հեռուստացույցով՝ պեղոֆիլը: ցույց կտան: չի անի: պարաֆորիա ունի: թե՞ բարի է:

Գնացինք: դուռը չոխսկ ու աստիճաններով իջան: թեթեւ ցուրտը էրեսին: գարնան շունչը: լուսինը լավ լուսավորում էր փողոցը, հանարյա ցերեկ: լուսինը սիրուն, կլոր դիմացը, փողոցի ծերին: լուսինը դարչնագույն, թե մոխրագույն: ինքը կենսաբան, հասարակական շարժումը կերպարական: իի լուսինը կանաչ չի:

Հիմա որը բաց կլինի: բայիկ, ո՞ր բաց կլինի: Եսիմ: լավ տեսմենք: գիշերը բաց չի լինի՝ լիրիդոն ու բուրդան բաց կլինեն: Երեխան սոված կմնա: լիբիդո չի ուտի, բուրդա կուտի, եթե թարմ լինի: բայց չի լինի:

Խումբ-խումբ վերսից իջնում են: էս չի արծել: մի խումբը ուղիղ դիմացը: մի տասը, տասնինգը հոգի: Երկու ծեր կին, մյուսները ջահել տղերը, մեկի ծերին դրոշակ՝ կարմիր, կապուտ, նարնջագույն: հարցնում է դրոշակովին՝ չիհարեցի՞ք: դրոշը երեխի գլխի վրա ծածանում է: չէ ախպեր, բայց սրանց վերջը էկել ա: դե հաջողություն: Երեխի ծեռը բռնած բարձրանում են փողոցով վերև: որ դրոշը կանաչ լիներ՝ կիսարթեին: վերջը էկել ա, չի էկել՝ ես առավոտ հռոմում եմ: իրար կերեք: պեղեղինտը կրծում է ծեր կնոջ հաստ ոտքը: արտրիտը հո չի ցավացնում: դրոշակովը պեղեղինտի գանգը: գանգը բերձվում է, ու արյունը թափվում դրոշակին, որ յուր ձեռքով գործեցի, գիշերները ես քուն չեղա, որ որբ վերջացնի:

Մի հատ սպասի: Երեխան կանգնեց: տեսմեն տե՞ղն է: ծոցագրապանից հանեց անձնագիրը՝ մեջը տոմսը: նայեմ վիզան: բացեց անձնագիրը: այ թեզ բան, ուրիշ վիզա էր տեղը: էս ինչ վիզա է: կարդում է roland: պոլշայի՞: էս ոնց եղավ: ոչինչ, էլի օք է: հռոմ չի, վարշավա: տոմսը բացեց, մինչեւ վարշավա, բան չկա, կարևոր տոմսն էլ է վարշավա: գնացինք:

Թեթև քամի է: մեկ էլ ուժեղանում է ու թերթերը բերում ուտքերին փաթաթում: էս ինչ թերթեր են: քամին վերսից էլի

30

թերթեր է բերում: օրաթերթերն են: իզվեստիան է ու առավոտը: երևի ամբոխը կրպակներից հանել թերթերը լցրել է փողոց, որ իշխանությունները ավելի վախճանան: թե ժողովուրդը ինֆորմացիա ունենա, տեղեկություն ստանալու իրավունք: սահմանադրության մեջ գրված է, ով չի ուզում ինֆորմացիա ստանա՝ նրա մայրիկին...

դիմացի մայթին լույս է երևում՝ մեռնային լույսով կարմիր փիղ: երեխի խաղալիքից: փողոցը ամցան: բոլոր շենքերը մուլթ, մենակ էս սրճարանը լույս է: փիղը կարմիր: խի՞ կանաչ չի, չես հասկանում: երեխի կոկորդիլոսը կանաչ, փիղը կարմիր: իհմարություն: ներսը մարդիկ են նստած: էստեղ էրե՞ ես: հա, մաման միշտ բերում է: մամա աշխատում է, փողը ջրի բերան չի տալիս, երեխին պոնչիկանոց է տանում: ինչ անում է՝ երեխայի համար է անում:

պոնչիկ շա՞տ ես սիրում եմ: մտան: երկու սեղան ջահելներ են նստած: աղջիկ տղա, աղջիկները կարմիր մազերով տղաները կանաչ: տղերը դուք կանաչների՞ց եք: բոլորը շրջվեցին: մեկը՝ չէ, ինչի՞ եք հարցնում: որ մազերը կանաչ են՝ դրա համար: չէ մերը ռոք խումբ է red & green: ինչ հետաքրքիր է: նստեցին ազատ սեղանին: ինչ եք երգում: բռնության դեմ, հիւսեյնի դեմ, բուշի դեմ: ապրեք:

իսկ դուք հոպար, ինչով եք գրադվում, երևի ցույցից եք գալիս: կարմիր մազերովներից է: չէ, ես կանաչ եմ: պիտի վարշավա թռնեն եկոլոգիական կոնֆերանսի: բա ինչի՞ մազերը կանաչ չեք ներկում: ու՞ր է մազ, թե չէ կներկեի: ու ծիծաղում է: դրա ելքը կա, ուզո՞ւմ եք ներկել, հարցրեց աղջիկը: ինչ սիրուն է, կարծ կարմիր մազերը աչքերը կեսով ծածկած, կարծ հազար բղերը կույսի հաստիլիկ: եթե դու ներկես կուզեմ: ու ծիծաղեց: աղջիկը պարկից հանեց աերոզոլի բանկան, մի ափով ծոծրակը բռնեց: կայֆ, խոնավ ափը ծոծրակին, ու փշեց ճաղատին: ճաղատը կանաչ ներկվեց: երեխան ծիծաղեց: ինչ եղավ, ես ինչ արեց: լավ հանգիստ: ծիծաղեց: մատու քսեց ճաղատին ու նայեց՝ կանաչ: ապրես աղջիկ ջան, իհմա իսկական կանաչ եմ: ուրիշ տեղերդ ներկե՞մ, ժպտալով հարցրեց աղջիկը: ներկի՞ գնան գուգարան ներկի՞: ուրերին փշի՞, հետո ձվերին, փշի՞: հոր՞ն, թե վարշավա: կոստյումն աշանց էն է ճնորվել է: վրան կանաչ թռնի: խի կանաչ կոստյում չառավ: չէ, մեծ հաճույքով, բայց տասը օրից: հի, հի հի, ծիծաղեց աղջիկը: ծիծաղ, բոլորը ու երեխան: կարմիր մազերը, գրեց որ չի սիրում, բայց կապ չունի՝ գույնի ընտրության իրավունք: կգրի չի սիրում, բայց հոգու խորքում էնախ կսիրի, որ երկիրը կարմիր կներկվի:

մատուցողուհին մոտեցավ՝ մի երկու մետրանոց՝ թել: գոգմոցին կարմիր փիղը: քանի՞ հատ կուտես բալիկ: երեք հատ: ուրեմն երեք հատ պոնչիկ մի հատ սուրճ: եղավ, ու մատուցողը գնում էր, հետևից կանչեց, սպասի: ի՞նչ: մի բան հարցնեն էս միշտ ե՞ք էս ժամին բաց: չէ, մենակ էս շաբաթ, որ ժողովուրդը տեսնի իրանց հետ ենք, միասին ենք: պարզ է: բայց ի՞նչ եք կարծում, ժողովուրդը մի բանի կիհանի՞: ով չուզի ժողովորդի լավը: մատուցողուհին՝ թել, ժպիտից ծռվեց: աղջիկ ջան, այսինքն: մեր նշանաբանն է: ռոբի վերջը եկել է: սա ռոբին որտեղի՞ց է ճանաչում: հանկարծ ինքնաթիռը չընկնի՞:

հայելի ունե՞ք: այս: մի հատ բերեք: մատուցողուհին գնաց ու հայելին ծեռը եկավ: ճաղատը կանաչ անհավասար ներկված էր: գոնե հավասար ներկեիր տնաշեն: տենց ավելի լավ է, ոնց որ բռնությունը անհավասար ներկած լինի, ասեց աղջիկը, որ ներկել էր ու ծիծաղում է, ծիծաղը կանգնացնում էր՝ երեկցիա: ինչի՞ չուզեց մի հատ էլ ինքը քուներ: որ հետ գնան կուզի: երեխային կասի մամայի ընկերն են ու փող էլ չի տա: համ երեխային պոնչիկ առնի, համ մորը փողով քունի՞:

լավ թող կանաչը մնա, հռօնում տպավորություն կթողնի: ուրեմն ատղուշի կանաչ է, խաղ չի անում, ճաղատը կանաչ, վկան կանաչ, լուսինը կանաչ, կոկորդիլոսը կանաչ, գարունը կանաչող, կոստյումը կանաչ չի: զգնա՞ն գուգարան աղջիկը կանաչ ներկի: չէ, որ hugo boss-ը մոխրագույն է ներկել, ուրեմն մի բան գիտի:

Ե՞ր կլիմի պոնչիկը: հինգ րոպեից: հայելին առավ ու գնաց: թեքը քաշեց ու նայեց ժամին: շվեյցարիան ժարիտ ա անում: չորսը: երեք ժամից թռնում ենք: սպասի մի հատ էլ նայի անձնագրին: ծոցագրպանից հանեց անձնագրիը: բացեց: վիզան այ քեզի բան: կանաչ վիզա, բայց դեղին չէ՞ր, էս լրիվ ուրիշ նշան է: հնդկաստան: էս հնդկաստանի վիզան որտեղի՞ց: վինտրում է լեհաստանին, թերթում է, չկառւչկա: լավ ոչինչ, հնդկաստան վատ չի: տոմսը բացեց, դելի: կարևորը, որ տոմսն ու վիզան մի երկրի են: կանաչը հնդկաստանի հետ բռնում է: ներքեւ բուդրա կաֆե, միցկահ չի, օրնելլա մուտտի չի: բուդրա: ամեն ինչ իրար բռնում է:

պոնչիկն ու սուրճը բերեց: դե կեր: երեխան կծեց պոնչիկը: համո՞վ է: ըլին: սպասի սիգարետ հանեմ: գրպանից հանեց սուսիքը: մեջը մի հատ էր: էս էլ ծխն ու թարգում են: լուցկի չունի: երեխեք լուցկի չունե՞ք: բա կանաչները

ծխում ե՞ն: մեկ- մեկ: աղջիկը մոտեցավ, կանաչ աղջիկը ու կաթի պես հոգեթև, թե հոգեթով: ու վարիչը չխկացրեց: էլի կանգնեց: տես մի տեղ կարմիրը կանաչ դառավ: աղջկա մազերի գույնը փոխվեց: որ մի բան շատ ես ուզում՝ լինում ա: ուրեմն ես երկրում ամեն ինչ կորած չի: ծուխը քաշեց ներս, շնորհակալություն, չէ հաստատ մի հատ ողբին ասի, թող տա: կամ կվճարի: ռորին մենակ կասի, որ քիչ ուզի, տասնիննգի փոխարեն տասը հազար, երկու թումանյան: իսի, երկու թումանյան, երեք պոնչիկ: երկու թումանյանը երկու պոնչիկի հետ բիտուա, կմնա մի պոնչիկ: մի պոնչիկով սերսուալ ծառայություն: չնայած նա լավն է, բայց կանաչին չի հասնի, սվիտրից ծիծիկների կլորությունը ուրիշ ծահելական է: դու էլ ե՞ս երաժիշտ: ես արտիստ եմ: շալվարի շղթան հես ա կտրաքի:

ծուխը քաշեց ու սուրճի կում՝ քյարփնչի համ, իջավ:

կգա՞ս վերջին զանգիս: երեխան բերանը լիքը հարցնում է: ի՞նչ վերջին զանգ, վերջին զանգը վերջին դասարանցիների համար է: մենք էլ ենք մասնակցում: առաջին դասարանցիներովս հրաժեշտի խոսք ենք ասելու տասերին: ի՞նչ խոսք, դե մի հատ ասա: կգա՞ս: մի հատ ասա, որ իմանամ կգամ թե չեմ զա:

երեխան կանգնեց, ծամեց կուլ տվեց ու գլուխը վեր պարզեց.

ո-ն ոգին է մեր հայկական
ո-ն ոգին է մեր հաղթական
որդիներն են ըմբոստ հպարտ
պայքարի մեջ ոգով անպարտ

կանաչ-կարմիր ծահելները ծափ տվեցին՝ բրավո, բրավո: ապրես: դե նատի: երեխան ուրախ նստեց: կգա՞ս: չեմ կարող, երկու ժամից ողբիկ հոպարի հետ թռնում ենք լեհաստան: երեխան տիսրեց: ոչինչ, մյուս տարվանը կգամ: մյուս տարի էլ չի լինի: կլինի, կլինի:

մենք գալիս ենք՝ ողք խումբը red & green վեր թռան, մենք գալիս ենք հանդեսիդ, ու կերգենք՝ ո-ն որին է մեր հնդկական, ո-ն ոհնակն է բենլադենյան: ուզու՞մ ես: չէ դուք մի եկեք առանց էն էլ ասում են բողի տղա: չենք գա՝ red & green նստեցին:

արդեն կերել էր պոնչիկները: սուրճը խմել էր՝ աղացած քյարփինչ: ինչ իիշողություն, պոնչիկ ու քյարփնչի սուրճ, հայ գիտի սովետ: սիգարետը հանգօրեց: մի րոպե: կանչեց մատուցուիլուն: ինչ պիտի տամ: հինգ հարյուր: հազար դրամ դրեց սեղանին ու դուրս եկան: մյուս 500 չայեվոյ, թող տուն տանի մի կտոր հաց ուտի, որ վրա գա:

փողոցով խմբերը իջնում էին՝ ջրայն ոտքերը ասֆալտին դրիմկ-դրիմ: մոտեցավ: ի՞նչ է կատարվում: ինչ պիտի, որ քո նմանները չմիանան, մեզ կճնշեն: ի՞նչ ա, ճնշու՞մ են: բա ինչ, արդեն երկու հարյուր հոգի բռնել են: իինա էլ ասում են մենքերը փողոց են դուրս գալի, ում տեսնեն տանելու են:

արի գնանք, արի: երեխայի ձեռը բռնեց ու արագ սկսեց քայլել ներքեւ: երեխան չէր հասցնում արագությանը, ու նրան քաշ էր տալիս: ասֆալտը քերում էր երեխայի ոտքերը: դաժան տեսարան: չար է: լավ դանդաղ: բարի է: արագ բարձրացավ երկրորդ հարկ, երեխայի ձեռքը թողել է: ինքնուրույն էսքան տեղը կգա: ու մեջտեղի դուռը չխկչու սկսեց թակել: չին բացում: իյա: ես ուր են: ելի խփեց: դուռը շրջանակի մեջ դղղողում էր: բացող չկար: գժվեց: ոնց կլինի: հետ գնաց ու ուսով տվեց դրանք: ուսով ցավեց, դուռը չրիկաց ու բացվեց, կողպեքը չրիկաց: սենյակի դուռը բաց էր: մտավ՝ անկողինը թափթիված, մեջը մարդ չկար: գնաց խոհանոց՝ ամանները կեղտոտ սեղանին ու լվացարանում: գուգարան, մարդ չկար, վաճանի տակ՝ երեխան: ես դու իսի էլի մտար: մաման չկա: չկա-չկա: հանի, թե չիանի: հանի ինչ անի: թող մնա, եթե իրան ետքեղ լավ ա զգում: ինչ անի: երկու ժամից թռիչքը: դուրս են եկել, ուր են գնացել: հո չի սպասելու: բա կինը ուր է: նատեց տարուրենտկին: մտավ սենյակ: ճամպրուկն էլ չկա: չինի արդեն օդանավակայան է գնացել: բա կինը: երեխան կինանա: գնաց գուգարան ու կրացավ վաճանայի տակը: արի դուրս բան եմ ասում: չէ, չեմ գա: լավ մնա, բայց դու կինանաս մամադ ուր ա: գնացել ա: ինձ ասում էր չեմ գնալու, բայց գնացել ա: ու՞ր ա գնացել: ողբիկի հետ գնացել ա: ի՞նչ ա խոսում:

երեւի ուշացա, ողը գնաց: նատեց մահճակալին: սպասի՞՝ թե չէ: տաքսի որ կանչի, քսան րոպեում օդանավակայանում է: կանչի: հեռախոսը քաշեց 555555, թե 444444, չէ ճճ-ճճ-ճճ, ընենց տառ են դնում, որ արտասահմանցին չկարողանա զանգի, բիզնես անել չգիտեն: ալո, տաքսի ծառայությունն է: օդանավակայան: ֆիքսված գներ են: մաշտոցի վեց: պոնչիկանոցից ներքև: տաս րոպեից: եղավ:

նայի՞ վիզան, թե չնայի: որ լեհաստան չլինի՞: չլինի ոչինչ, հնդկաստան կլինի, վատ չի: լավ մի հատ նայի:

հանեց անձնագիրը: մի հատ նայեմ: երեխան եկել էր: ի՞նչ, քեզ հետաքրու՞մ է: անձնագիր չեմ տեսել: առ նայի: այ էս նայի վիզան: էս ի՞նչ լեզվով է: թուրքերեն: ինչի՞՛: որովհետեւ թուրքիայի վիզա է: բա դու լեհաստան չիր գնում: չէ ինչ լեհաստան: ստամբուլ: տաս րոպեն անցած կլինի, դե տուր ես գնում եմ: ուր ես գնում: էլ ավելորդ հարցեր մի տուր: դուրս էր գալիս տնից, երեխան վազելով եկավ ու կոստյումի թևքից քաշեց: ինձ մենակ մի թող: դժալով լաց է լինում: դե թող կոստյումս: պինդ բռնել է: ինձ մենակ մի թողող: արա դե թող իր փորձանք չես: չի թողնում: պիտի ծծնեի, որ ինանար: քաշում է, ինձ մենակ մի թողող: արա կաստյումն կճես: չի ճի, պինդ կտոր է, hugo boss: բայց կճնորի: ինձ մի թող: լավ չեմ թողնում, չեմ թողնում, հետ եկավ խոհանոց: նստեց տաքուրետկին, երեխան թողեց կոստյումը, նստեց դիմացը:

երեսը թօջվել էր: բաշկինակը հանեց ու երեխայի երեսը սրբեց: բարի է: կոնֆերանս, կանաչներ, մարդու իրավունք: իսի՞ ես լացում, հեսա մամադ կգա: վախենում եմ մենակ մնամ: մի վախեցի, գնա քնի: ելավ, որ գնա, երեխան թևքից էի բռնեց: չղիմացավ, իր չչափալախեց, երեխան փովեց հատակին: արագ դուրս եկավ երեխայի ծայնը հետևից: տաքսին սպասում էր: այրոպորտ: քշեց: եղ գլուխտ ի՞նչ ա էղել: վարորդը հայելու միջից հարցնում է: կանաչների կոնֆերանս եմ գնում հրոմ, կանաչ ներկել եմ հատուկ: այ ախաբեր, ի՞նչ կանաչ, երկիրը ծերից էթում ա: դե մենք էլ միջազգային ասպարեզում ենք ծայն բարձրացնում: որ բարձրացնում եք մի բան կստացվի՞: կստացվի՞ էս իհմարները չեն հասկանում, որ մեզ կայուն զարգացում է պետք: ի՞նչ ասես, տաքսու շոֆեռա էլի:

օդանավակայան չհասած՝ ընկեր կանաչը մուսուլմանի գույնը չի՞: չէ, մուսուլմանը-մուսուլման, մենք կանաչներ ենք, պայքարում ենք որ կանաչը շատ լինի: աչքերը կանաչ, գլուխը կանաչ, բուդղան կանաչ, լուսինը կանաչ, տաքսին կանաչ, կոկորդիլուսը կանաչ, պուտանկան կանաչ, հեռուստացույցի էկրանը կանաչ, երեխայի աչքերը կանաչ: ու երկիրը ունենք կանաչող: պարզ է:

օդանավակայանում սրահի դեմք պահեց: ի՞նչ պիտի տամ: ինչ տալիս ես տուր: չէ քո գինը ասա: ֆիքսված գներ ա: հիմք հազարանոցը-կանաչ տվեց: ու դուրս եկավ սրահ:

մի տեղ էր ռեգիստրացիան: ստամբուլի ռեյսը: հրոմ չէր: վարշավա չէր: դեկի չէր: դուրբայ չէր: ստամբուլի ռեյս էր: ուրեմն ստամբուլ էր: կանաչներ ստամբուլում: ստամբուլու՞մ: մեկ է: կիասնեմ ու ջինս կառնեմ: ու պոնչիկ: կանաչ պոնչիկ կառնեմ: կանաչ պուր, թե կարմիր: կարմիրը հոգու մեջ, կանաչը կլրի ծերին: հերթի ծերին կանգնեց: սպասի: դեմք էն ո՞վ է ռեգիստրացիա լինում: որբ չի՞: որբն է, հետինը ո՞վ է, կինը մազերը կանաչ ներկած: պուտանկեն ա: արտիստը չի, երեխայի մաման: երեխան լաց է լինում՝ մաման ստամբուլ է թօջում: մաման չար, ինքը բարի: էդ ե՞ր հասցեց մազերը ներկի: որբ: կանչում է: որբ: մոտեցավ: էս ձեն չես հանու՞մ: որբ շրջվեց՝ ինչ ես խառնվել: ինչ պիտի, ես խի՞ ես առանց ինձ գալի, չիր կարա՞ սպասեիր: չէ, ու անձնագրերն ու տոնսերը վերցրեց: էս քո հետ ա գալի՞: կմերես ու արագ-արագ կնոջ հետ գնաց անցարահի դուրը: վազեց հետեւից ու թևքից բռնեց: սպասի: ի՞նչ: ու՞ր ես գնում, չե՞ս սպասում: քո տեղը ինքն է գալիս: ոնց: կանաչների կոնգրեսը վերջին պահին տենց որոշեց՝ մի կին, մի տղանարդ ու ծերու քաշեց: հետևից ուզեց գնա, ծեր տոնսը, դրան դիմաց պաշտոնյան՝ կանաչ պիլոտկով, պահեց: հանեց անձնագիրը ու տոմսը: պաշտոնյան նայեց անձնագրին հետո դիմացի թրթին: դուք արդեն անցել եք, ինչ է երկու անգամ պիտի անցնեք: ո՞նց եմ անցել, չեմ անցել: ուզեց անցնի: պաշտոնյան՝ բութ, դոշով պահեց: ես չի էն, կինն էր: մի գոռա կանաչ: իրեց պաշտոնյան: հաջորդը: հագավ պատին, ընկավ: պատը կանաչեց: էս գծել են: նորից մոտեցավ: տոմսը ծեռս՝ ի՞նչ իրավունքով չեք թողնում: յան տուր այ կանաչ: պաշտոնյան հոգ հոգից բռնեց ու շպրտեց: կանաչը լողվեց պատին: կանաչ օդանավակայան:

Ասրինե Գասպարյան

Կուրիզմ

Կնոջ անբնակ արգամղից
Եռանկյուն բուրգի տեսքով
Աշխարհն էր կարծես
Դուրս խոյացել ու այդպէս
Կնոջ որովայնի վրա մնում էր,
մինչև որ...
Դա երազ էր երազի մեջ,
Դա իրական կյանքն էր
Երազացել ու մի քիչ էլ
Վիլսոր Սադրվսկու
Պլակատներից մեկի ննան էր,
Բայց եռանկյուն բուրգը
Վերջինիս մոտ տղամարդու
Դեմքի մաշկից էր դուրս խոյացել:
Կինը լուր էր, բայց բուրգը
Բարախում էր ու ճշում,
Որովհետև այլս այս դառը կյանքը
Չէր կարողանում իր մեջ կրել,
Պահել, զսպել, ուտել, ձգձգել...
Ու ինչպէս պարադ ալլեռում
Թափանցիկ բուրգի մակերեսին
Մերթ լողալով հայտնվում էին
Կախաղաններ, մերթ ճոճարաններ,
Մերթ բժիշկներ ու մերթ
Քաղաքական պարագլուխներ:
Մերթ մանկան ծնունդ
Ու մերթ աղանդներ...
Իսկ այդ կնոջ՝ հակառակի պէս
Լուսավոր ու խաղաղ սենյակի
Պատուհամից ամընդհատ
Ներս էին ցայտում արեգակի
Կաթիլները ու թրջում
Կնոջ սենյակը ամբողջությամբ:
Ու մոտ երեք ժամ տևողությամբ
Վիդեոարտի ցուցադրություն
Յիշեցնող այդ բուրգի
Արարողության ընթացքը
Նկարում էր պահարանին դրվագ
BETACAM ֆորմատի տեսախցիկը
Իր փակ «օրյեկտիվային աչքերով»
Ու կարծես ուզում էր
Մի հետաքրքիր ու արտասովոր
Ուպորտած սարբել ու ներկայացնել
EXCLUSIV հաղորդաշարին
ԱՐՄԵՆԻԱ TV-ի եթերում,

Բայց այդ անսպասելի տեսարանին
Ուշադիր հետևելուց չէր հիշել
Զայնագրող րէց կոճակի մասին,
Ու իման տրտնջում ու զղում էր:
Ոչինչ, այդպէս էլ է պատահում:
Կինը քնած էր և երբ արթնացավ
Ամեն ինչ անհետացել էր:
Նա վեր կացավ, տրորեց աչքերը,
Յագավ խալաթը
(Երևանի որովին ցուրտ էր),
Դուրս նայեց պատուհանից
Ու շտապով գնաց դեպի դուռը
(Երևանի որովին դուռը թակել էր):

Ովքեր են մեռելները

Այս ինչ նվազ է. Երևան նորեկ են բերել:
Տեսմեն ջահել է, թե ծեր,
Բայց երևան ջահել է, տես ինչ
Շնչակտուր են լալիս...
... Վարդեմիներս չորացան,
Գոնե ջրեք, անխիղճներ:
Մոլախոտերն արդեն խանգարում են շնչել,
Շուտով գերեզմանս արտ կդառնա...
... Գիշերը կողքիս գերեզմանից
Լացի ծայն առա, գնացի ծայնի վրա.
Նորեկն էր, որ ցերեկը բերեցին:
Սկզբուն վախվխաց, բայց
Հետո ներս թողեց:
Հարցրեցի ինչու է լալիս, ասաց,
Որ շատ էր սիրում կյանքը,
Չէր ուզում մեռնել, որ
Կարոտել է հարազատներին
Ու չի իմանում ինչպէս պիտի
Ապրի առանց նրանց:
Ես գրկեցի այդ փոքրիկ աղջկան
Ու միսիթարեցի:
Նա ընդամենը մեկ օրվա մեռել էր,
Դեռ սովոր չէր մեռյալների կյանքին,
Այդ պատճառով էլ զարհուրում էր
Դագաղից, գերեզմանափոսից,
Չէր կարողանում շնչել հողի հոտը:
Ինչ իմանար այդ փոքրիկը,
Որ մի օր անպայման կսովորեր
Տեղի կյանքին, իսկ մինչ այդ
Ամեն գիշեր լսվում էր նրա
Աղեկտուր լացը, որին տեղացիները
Աղդեն սովոր էին:
... Մի օր էլ նրա ծնողները

Յանկարծ հայտնվեցին:
Կեսօր էր, ամառ էր ու տոռ:
Գերեզմանաքարի առջև կանգնել էր
Սայրը ու թաշկինակն աչքերին
Անուր սեղմած լալիս էր,
Իսկ արցունքների միջից
Խոսում էր աղջկա հետ, պատմում,
Որ երազներին միշտ երևում է
Ու լալով աղաչում, որ
Իրեն տուն տանեն:
Մայրը չէր կարողանում զսպել
Արցունքների շիթերը,
Քանգստացնում էր նրան:
Աղջկը գերեզմանից
Զայն էր տալիս մորը,
Բայց զուր, նրա բղավոցները
Նույնիսկ ճանճի բզզոցից էլ ցածր էին
Եվ լսելի չէին մոր համար:
Մայրը ողբում էր աշխարհից,
Աղջիկը՝ մահճից: Երկու աշխարհների միջև
Այնքան մեծ վիհ կա, որ տարանջատում է
Մորը մանկանից: Ցավալի է,
Բայց փաստ, որ երկու աշխարհներն էլ
Գոյություն պիտի ունենան
Մինչև աշխարհի վերջը...

Միջատը բարձրանում է սպիտակ թղթի
Կապույտ աստիճաններով,
Թափառում թղթի սպիտակության մեջ,
Աղջիկը արտագրում է բնությունը, հրճվում:
Արեգակի շողերը փորձում են
Տեսնել ստացված պատկերը,
Վարագույրը դիմադրում է նրան,
Բայց զուր: Մասնիկները տրոհվում են
Ու լուծվում օդի տաքության մեջ,
Առաստաղը լուս:

Պարադ ալլե

Մտքում քառու է ու պատրանք.
Սրճով լի գավաթները թափառում են օդում,
Նրանց են միանում թոշող ծառեր
Եվ միասին հորինում մի տարօրինակ վալս:
Ծաղիկները լուսավորում են նրանց
բեմահարթակը,
Թոշումները սողում են, օձերը սավառնում,
Մտքերս փշրվում են կացնահարվածից
Եվ կտոր-կտոր թափվում ոտքերիդ առջև,
Շեռվից նշմարվում է
ճրագներով սնկերի քարավանը,
Անդորրը արձակուրդում է:

Լռությունը սկսվում է,
Անհնար է բղավել,
Եթե բղավես էլ
Այս կիսանա լռության ձայնի մեջ:
Ես կարկատում եմ պատռված շողքս,
Հոշոտված հոգիս, փոշոտված միտքս,
Լվանում եմ միտքս, փռուն
Լվացքի պարանի վրա,
Անխոնջ լռության մեջ բարբառում եմ
Աղոթք դառձած քո անունը,
Մոմը լուսավորում է ալետիա դեմքս,
Ես նետվում եմ ու միախառնվում
Քո հորձանքին, որ է կապույտ երջանկություն:

ճառ՝ արտասանված գրողների փողոցում

1. մի ուրվական է շրջում Հայաստանում, դա դրական կերպարի անորոշ, մշուշոտ, դժվար տեսանելի ուրվականն է, ինչպես գոյություն չունեցող սև կատուն՝ մութ սենյակում:

Մեր ծննդյան փուչ օրից մեզ վրա ոտանավոր են կարդում, ասելով՝ անգիր արա, կարդա-գրիր, արտասանիր, իմ ժիր մանուկ, մեր բարձրաբերձ, բարձիթողի, վանքապատկան, անապական գրքերն անթիվ, գանձերը ծով, հույսի սպիտակ առագաստով հասցրու բաց ծով, արնոտ լեռներում, հայոց լեռներում, վշտի լեռներում, մինչև անարդ մահու սյուն գոռալ-կրկնելով անդադար՝ ազատություն:

Սակայն մի անմեղ սիրո չքոլորած 17 գարուն և ակնթարթ, հասկացա, որ կարդացածս գրականությունն է իմ և միջավայրի հակասությունների պատճառը, քանի որ այդ գիրականությունից հավանաբար անզգուշորեն մեղք էի քամել ուտում, մի մութ անկյունում, մյուսները՝ օծի թույն, կամ էլ «մի կաթիլ մեղո» էին կարդացել, կերել, վախից պառկել ու քննել, մինչդեռ պատգամներ կային երկնքում և պատգամավոր հրեշտակախումք:

Արդյունքը եղավ այն, որ 1968 թ.-ի մարտխապատ մի առավոտ, երբ որպես դիակ դեռ կատարյալ չէի, դալկացած ձեռքս բարձրացավ հրաժեշտի բաշկինակ բափահարելու գեղարվեստական գրականության ընթերցանությանը: Դա փախուստ էր վիրտուալ իրականությունից, բայց ոչ ազդեցությունից, ինչպես տեսնում եք, որի պատճառով էլ այսօր այստեղ ենք՝ գրողների փողոցում, գրողի ծոցում, քանի որ փախուստի մեջ էլ կա մի վերադարձ, շարունակեք ժապավակ:

Ուսման ծարավի պարտադրանքով, ցուազ ձեռքին, փարիզներում, վեճետիկներում դեգերած գրողների ձևավորած միջավայրում է ընթանում մեր կյանքը՝ զագիր ու նանիր, կինո թատրոնով, երգ ու սցենարով, հեռուստառադիրագրողներով, ամենուր շրջապատված նրանց անդուլ հոգատարությամբ՝ մեկի բանաստեղծությամբ սիրում ենք լուսանկովի պես աղջկան, մյուսի սցենարով ատում արնախանձ սարդին, մեկի թատերգությամբ լքում հայրենիքը՝ ցոփ արոտավայր հարուստների գեխ, մյուսի հողվածով ծալովի ցուան էստաֆետային գրպանը դրած՝ վերադառնում ավանդելու ճարպակուտակ հոգիները հայրենաբաղդ, մեր վերջին հույս, խնամարկու, փառքի պատում, լույս գերեզման ու պանթեոն, տուֆից սարքած տուֆտա քաղաք Երևանում:

2

Մեր մայրենի հայերենի ուսուցուիչին ամեն տարի բույն էր իյուսում ու երգում. եթե ծեխաներ, եթե ծեղ որևէ մեկը հարցնի, թե ո՞վ է հայ բնության ամենամեծ երգիչը, անմիջապես պատասխանեք՝ Ռաֆֆին, ու սկսվում էր՝ «տեղ- տեղ քյաֆուր վարդ բաց է արել իր թերթերը», որ հարնում է գանգատուփում, սլանալիս դաշտավայրով Արարատյան, ուր տեսնելով վարդապետի՝ սպասում ես, որ խենթանա, աշնանը միշտ Տերյանի հետ, մանուշակն է Բակունցին, լճակի մեջ հուսահատ Դուրյանին ես քեզ հետ տեսնում նստարանին դպրոցական և սարսափից վեր ես թռչում քո երազում դու հերթական:

Ստացվել է մի փակ շրջան՝ գրողը ծևավորում է հասարակական գիտակցությունը, այն ծևավորում է միջավայր, միջավայրը ծևավորում է հաջորդ սերնդին և սերնդի գրողներին, նրանք ծևավորում են հաջորդ հասարակության գիտակցությունն իրենց պատկեր-նմանությամբ, անվանակոչում գրողներով դպրոց, փողոց, քաղաք, գյուղեր ու ավաններ, տեղադրում արձաններ, կառուցում են թանգարաններ, գրում, կարդում, սրբագրում, տպագրում, հաշիշով օծուն ու բալասանով, գիշերն հեշտագին:

Դայտնի է, որ գրողը, տիսուր ու մոլոր, հավասար քայլով չափելով ճամփան, սնում է յուր կերպարներին գրական յուր ներաշխարհի երակներով հոսող զգիւիչ, բուրումնավետ, արբեցնող կենսահյութով, որի հետևանքով ինչքան բնական և հավաստի են բացասական հերոսները մեր գրողների մոտ, նույնքան լալագին ու մտացածին՝ դրականները:

Եվ ծերունին լուր չարչարանքով բերում է ճիշտ եզրահանգման. մեր գրողներից ոչ մեկն իրեն որպես հումք չկարողացավ օգտագործել դրական կերպարի մարմնավորնան գործնմբացում, այդպիսին չի լինելու պատճառով, որ իրենից բացի ուրիշ զոհ չլինի:

Իսկ բարձրացած հարցին՝ ուրեմն ես գյուղում մի շոքեր կամ տղամարդ չկա՞, ինչում է թույլիկ կա

44

պատասխանը, բայց դա էլ գրողներինը չի, ժողովրդինն է՝ Սասմա Դավիթ թուր կեծակին, որ չլինելով ստախոս կամ խորամանկ, համենայն դեպք ընդգծեց միայն այն պահին, երբ հոր ոսկիներն էին տաճում:

Բայց դա էլ էր մեզ շատ, ու հեռախոսը ֆրոնտից հազար շիֆր, ասելով, որ եպոսը առավոտյան կանուխ, որը շատ կարևոր հանգամանք է հայ նոր գրականության համար, որպես ժամանակի պարագա, դուրս է եկել տնից և չի վերադարձել, հրամայելով մեզ երկար ապրել, գտնողին ու գտնվելիքն էլ համարել անվավեր:

3.

Ուրեմն չի ք, ոենք էլ փոխարինեցինք Թաջ Նազարով, ում նկատմամբ մեր արտիստների ու մտավորականների անշահախնդիր, ողջամիտ, կաթոգին սերը եկվեց, թափվեց, հաշնեց զանց փյունիկ մի կայարան, կայունության սիրո նատյան, հրո ատյան, ժանգոտ պատյան արդարության և հորդորներ տեսողության, թե կույր պետք է լինել դա չտեսնելու համար, իսկ ես ասում եմ՝ եթե կույր լինեիք, ձեզ կներվեր, բայց դուք եք ասում, որ տեսնում եք:

Մեր եպոսի հերոսն այսօր խելառության կոչ է անում, որ հաճ է մեր սրտին, և ինչպես հայտնի գովազդն է ասում. նմանիլ չես կրնար դուն, որը դու չես, բոց անհուն, այսինքն ողջամտությունն ասում է՝ դողդոց է, գույն չունի, մյուսն ալ ըսավ՝ կմեռնի, բացառությանք ոմանց և հատկապես մատենադարանի հարթակին հայտնված ձենով Օհան Դուրյանի, որպես բալասան տրտում ցավերի:

Բայց և ցավոր եպոսի օրինակը բավարար իիմք չէ այս հարցում ժողովրդին ապավինելու համար՝ ժողովրդական հեքիաթների պատճառով, չնայած որ նույն ծաղկից մեղուն մեղու է քամում, օձը՝ թույն:

Ժուկով ժամանակով՝ իննառևականներին, Միրաբոյի կամրջից բավական հեռու, Ռիալտո կամրջի բազրիքին հենված, Երևանի պետիամալսարանի մրահոն մի ուսանողուիհի, Խսահակյանի ջանը խուտուտ տվող դիրքով, «Գարուն» ամսագրում տպված մի աշխատասիրության մեջ անգրորեն համեմատել էր հայկական և անգլիական հեքիաթի հերոսներին՝ հրապարակելով հույժ կարևոր պետական գաղտնիք, այն է՝ հայկական դրական հերոսը կարող է ստել, խորանանկել, վերջնական նպատակ ունենալով մի կճուճ ոսկի գտնել, թագավորի աղջկա հետ պսակել, առօք փառոք ապրիլ, մեռնիլ աննշան, հեք աշխարհի մեկ ոստը գոս:

Իսկ անգլիականը չի ստում, չի խորանանկում, և վերջնական նպատակը, հարիֆի պես, հազար կյանք ունենալու ու հազարն էլ սրտանց, որևէ մեկին օգնել, փրկել, մատաղ անելն է՝ սեփական ծառը ջրելու, շառից փորձանքից հեռու մի անկյունում, հաշտ ու խաղաղ մարդկություն փնտրելու փոխարեն: Եվ իիմա էլ այդ հերոսները շարունակում են իրենց միսիան, մերը՝ մեր, նրանցը՝ իրենց մոտ հեքիաթը իրականություն դարձնելով, մերը ստում է ու խորանանկում, կյանք է խեղում, խլում քշում մատաղ անում, կճուճ տաշում, նրանցը՝ կյանքեր փրկում և փնտրտում արդարություն արդեն աստեղային պատերազմներում:

4.

Անկախ նրանից, թե ինչպես է աշխարհը վերաբերվում ամերիկյան կինոյին և քաղաքականությանը, եկեք մեր միակ փրկություն միասնական հավաքական ուժով արժանին մատուցենք այն գաղափարախոսության, քաղաքականության արժեքային համակարգին, որը, եկորապականի հետ միասին, խարսխված է այդ հերոսի վրա, որը քրիստոնեական է նաև ու բարեբախտաբար պարտադրվում է այլ երկրների, որոնց թվում նաև մեզ՝ գիտակցել տալով, որ 1700-ամյա քրիստոնեությամբ, աշխարհագրական կամ արտաքին տվյալներով չենք ասիացի, եկորապացի, խոլ բեդուին, այլ հերոսի բարոյահոգեբանախոհափիլխոփայական արժեքային համակարգի ընտրությամբ:

Յիշեք Եվրամիտության առջև ստանձնած մեր պարտավորությունների կատարումը անցած ընտրություններում, ուր մեր երկրի ջոջերը, ցուցադրելով պոչերն ու հավատարմությունն իրենց մեր հեքիաթի հերոսներին, ԵԱԽՀ-ի գնահատականներու որակեցին որպես ոտնձգություն՝ ուղղված դարերի խորքից եկած մեր քրիստոնեական ազգային բարեմասնություններին՝ ասելով՝ էտ ու՞մ եք ստի ու կեղծիքի մեջ մեղադրում՝ բա հայոց մեծ ազգին անցումային փոլում չե՞ք ճանաչում, թե՞ իիմա գնամ բերեն կտրեն էն ծառը, որի վրա կապիկություն էիք անում էն ժամանակ, երբ մենք խաչքար էինք տաշում, ջնջում հազար:

Այս երիցս ծիշտ էր Կամոն. «Վտանգավորը նրանք են, ովքեր մեր անունից ոչ ծիշտ բաներ են ասում», և այստեղ արդեն մարգարեացավ Ույանով Վլադիմիրը՝ ասելով — ժողովուրդը դեռ կիհիշի և կգնահատի քեզ, Կամոն՝ Սիմոն Տեր-Պետրոսյան:

Ակնհայտ է, որ դրական կերպարի ներմուծումը, պատվաստումը այլևս ոչ թե ձախողված է, այլ երկիր հայրենին հասցրել է, ասում են, կործանման եղրին, բայց ինչ եզր կործանման և ոչ կործանում, երբ հենց մեր բակուն

անգլիական Յամլետիկն ու Զոնիկը բռնել են մեր Արամիկին, Արթուրիկը միջին խաղեր ա տալիս, որ Ռոբերտիկը մեր Ստեփանիկի գնդակը գողանա, ռուսական Վալորիկն էլ Տիգրանիկի գուլպան է վերցրել պարտքի դիմաց, ու ոչ մի վարդապետ էլ չի խենթանում:

5.

Յերոսը պետք է առաջանա, ինչպես ավտորուսում, հայեցի անվանակոչվի ու գժվի տեղում, իենց մեր հայկական հողի վրա, մանավանդ որ դրա համար ավելի քան բավարար իիմքեր կամ, և գժվողը պետք է լինի գրողն ինքը, ասելով՝ երկիր ես քոնն եմ, բայց ինը չես դու՝ գործը չթողնելով վարդապետներին, որ խեթանան:

Ուրեմն, գրողը ինքը պետք է լինի հերոսը, որ չլինի մասին, նկարագրություն, ինչպես Արովյանի միտն եկած Աղասին, այլ մեծ ալքիմիկոսը՝ Նարեկացին, որն իր բացասականը, խոստովանության միջոցով վերածեց դրականի, որին ասում են իիմա հոգեքերապահա՝ հաստատելով գրողի ազբեցության նշանակությունն ու կարևորությունը ազգային մենթալիտետի ծևավորման շնորհակալ գործում, ի փառ հայրենյաց և ի սարսափ թշնամյաց, գնանք հառաջ մեկ ձախ, մեկ աջ:

Աշխարհն անցիք՝ **88-ի** դեպքերից հետո իշխանության եկած այդքան կտրիծ գրող, քնարի տեղ սուրը ձեռքին, կարգախոսով ու ճակատով լուսապսակ, ոչ ոք չունի: Թողած Կարսում իրենց այգին ժամանակին ու գրականությունը, ինչպես ես, բայց և ուշացած, գրականության ընթերցանությունը և Կարինե Քորանջյանին չասած մնաս բարով, մերժեցին վիրտուուլ իրականության մեջ դրական հերոսի իմացյալ մահը վիճորել-կերտելու բանական գոհաբերության փորձերը, նախընտրելով իրական կյանքի ու գործի միջոցով դուրս գալ և դուրս բերել փակ շրջանից իրենց և մեզ: Զևավորել, կյանք տալու համար նրան՝ սպասումից անշարժացած, անշարժ ցեղին, անշարժ մարդուն:

Ավաղ, արդյունքուն նա, ում սպասում էինք և որ եկել էր, սպանվեց, իսկ մյուսը հետապնդվում և տարաս-բուրայական ջանքերով հասարակությանը ուղենիշեր է ցույց տալիս նորից գրելու միջոցով: Մենք անում ենք այն, ինչ անում էին իրեաները իրենց մարդարեների հետ, հետո նստում թախտին, սպասում մեսիային, իսկ երբ գալիս էր, չեն տեսնում, ինչպես Սիերը ագռավաբարում վաղուց արդեն ավարտված գյուղատնտեսական գենինժեներական աշխատանքների ավարտին է սպասում, մենք՝ Սիերին կամ տրամվայ առանց ռելսերի, Զատկի կղզու արձանները՝ այլմոլորակայինների, մեզ՝ ուրիշը, և պտտվում է ֆերոսի կառը կարուսելը տերյանական արևի շուրջ, ձգել դարձնելով մեր սպասումը մասնագիտություն, հայկական ժողովրդական նկար, Արտաշատի սևաչ խաղող, Գառնու խոյակ, առուն ի վեր փոված փշատ, մառախլապատ մի մոռացում, պարզելով մի նոր սպասում:

6.

Գրողների փողոցը սև խոռոշն է այն, որն իր ծայրով աստանդական, նորերը կիտած, կապված Տոլստոյի հետ, դեմ հանդիման, որն էլ իր հերթին՝ Նար Դոսի, Զարենցի և քաղաքի բոլոր մյուս, հատկապես գրողների անուններով փողոցների հետ, որտեղ գալիս և անհետանում են մեր գրողները, հանց բերմուդյան եռանկյունու քավարանում, սպասելով իրենցով որևէ փողոցի անվանակոչության, արձանի կամ հուշատախտակի:

Յերթով գալիս անց են կենում, անհետանում նաև նրանք, ում կաել է կեծակի պես մայիսյան, «գրողի ծոցը գնաս» անեօքը, լեղապատօք ձեն տվող հայ ժողովուրդը, ծնվող, մեռնող և սուրացող գրողի ծոց շարունակ՝ վերադարձնալով ի շրջան յուր:

Յայերենում թուղը ու գիր նշանակում է հմայություն, ուրեմն, երբ թղթի վրա ես գրում, թուղը ու գիր ես անում՝ դաշնալով գրող, գիրկդ վերածվում է ծոցի՝ ծովածոցի, գրողի ծոցի, և քո տարածը գրողի տարած է, ցավը՝ գրող ու ցավ, բաժին՝ գրողի բաժին:

Յետևաբար քանի փորումն շունչ կա, բերանումն՝ լիզու, ես լեղապատօք ձենս կթոցնեմ քաջ որսկանի գյուլի պես, որ տիեզերքն իր վախճանին կիասնի, և արևը մի բուռ մոխիր կդառնա, եգիպտական բուրգերը՝ կաթի փոշի, բայց մենք առնետների ու խավարաւերմերի հետ ձեռք ձեռքի տված, այս փողոցում, ուր ծնվել ենք, մեծացել ու ջուրը խմել սառնորակ, եղել ենք, կանք ու կշատանանք:

Գրողների փողոց սեպտեմբերի 12, ժամը 13.00, Երևան 2003թ.

(գրական վերֆոնմանս արված հայ-շվեյցարական «Ուտոպիական համդիպումներ»-ի շրջանակներում, սեպտեմբեր 2003)

www.պատկհն.am

46

ՖՈՐՈՒՄ

<http://www.forum.am/groups/lit/>

Բարաջանյանի արձանը

47

Վահան իշխանյան

չորեքշաբթի, 02:02, 9 հուլիս, 2003

բարաջանյանի արձան

ֆորումներից մեկում տեսա բարաջանյանի արձանի քննարկում ու որոշեցի նույն թեման առաջարկել նաեւ բնագրի ֆորումին: միանգամից ասեմ իմ տեսակետը. բարաջանյանի արձանը ընկերական շարժի արձան տարբերակն է, ծաղրադան (ծաղրամկար-արձան), որ որպես ժամը հետարքի է: ընդհանրապես բարաջանյանին երբ ցույց են տալիս հեռուստատեսությամբ, իմ ծիծաղը գալիս է: նրա վակ աչքերով դաշնամառը նվագելը, որտեղ կարծես մեծ դեր է խաղում հսկա քիթը, ծիծաղելի է: Եւ հենց էդ ծիծաղելիությունն էլ շեշտել է քանդակագործը: Բայց արձանը արձան լինելուց բացի նաեւ քողարկիչ դեր է խաղում: որ ամբողջ օպերայի ու կարապի լճի գաղոնները ցեմենտի տակ են առել, փող շինել, կողըն էլ բարաջանյանի արձան են դրել, որ ցույց տան, թե մշակույթ են զարգացնում, քաղաք են զարդարում: այսպիսով բարաջանյանը կոնսայերացիա է գաղոնները սրճարանացնելու համար:

Վահան իշխանյան

Վահե Ավանեսյան

հինգշաբթի, 18:14, 10 հուլիս, 2003

բարաջանյանի արձան

Բարեկամներ, կարո՞՞ն եք այդ նոր արձանի նկարը տեղադրել պատկերասրահում կամ գոնե որևէ հղում առաջարկել, որ պատկերացնենք, թե ինչի մասին է քննարկումը սկսվելու:

Վահե

Վահան իշխանյան

կիրակի, 14:31, 13 հուլիս, 2003

բարաջանյանի արձան

արձանի լուսանկարները կարող եք տեսնել այստեղ www.iatp.irex.am/grants/neoarch/archive/arnobabajanyan/main.htm

Վահան

Մարինե Պետրոսյան

ուրբաթ, 22:56, 11 հուլիս, 2003

բարաջանյանի արձան

Վահեն Երեւի Երեւանում չի, որա համար ա ուզում նկարով Առնոյի արձանի մասին պատկերացում կազմել: Բայց սեփական փորձից ասեմ՝ արձանի նկարն ու արձանը տարբեր բաներ են: Էդ արձանն առաջին անգամ որ դրեցին՝ ենքան արագ աղմուկ բարձրացավ ու տարան «բարեփոխելու», որ ես չհասցրեցի նայեմ, մնացի թերթերում տպված լուսանկարների հոլյսին, ու էդ լուսանկարներով՝ արձանն ինձ դուր էր գալիս. շատ արտահայտիչ էր: Բայց որ երկրորդ անգամ դրեցին ու մի 10 օր առաջ արդեն դրված կենդանի միջավայրում տեսա... արտահայտիչը հայ, էլի արտահայտիչ էր, բայց զգվելի բան կար էդ արձանի մեջ: Էսօր ցերեկը գնացի նորից նայեմ, սրճարանում նստած նայում էի շուրջս, նայում էի արձանին... ու տպավորությունն ծզգութվեց. էդ արձանը Առնոյին շատ ա նման, բայց Առնոն չի, ես արձանի տակը կգրեի. «Նայ արվեստագետը 3-րդ հազարամյակի սկզբին. ինֆանտիլ մազդիսիզմ»:

Մարինե

Գեղա Վարդանյան

երեքշաբթի, 18:11, 15 հուլիս, 2003

բարաջանյանի արձան

Դիմա ինֆանտիլ մազդիսիզմստը Դավիթ Բեջանյանն է Երեւի հա՞: Այսինքն, էդ քանդակը ոչ թե Առնոյին է, այլ Ռոդոյինը:

Ասեմ, որ արձանը ինձ դուր է գալիս, առաջ, մինչեւ եղունգները կտրատելը, ավելի շատ էր դուր գալիս:
Գեղա

40

Մարինե Պետրոսյան

հինգշաբթի, 17:21, 17 հուլիս, 2003

բարձանյանի արձան. առաջարկ

Գեղան, ես ճիշտն ասած Դավիթ Բեջանյանին չեմ ճանաչում, որ կողմնորոշվեմ. ինքն ավելի շուտ ինֆանտիլ մազոյիս՝ ստու ա թե եսօրվա արվեստագետի ինֆանտիլմազոյիստական սիտուացիան պատկերող խորաթափանց ռեալիստը (երկու դեպքում էլ՝ Առնոն արձանի հետ կապ չունի ու ոտի տակ գնացողն ա, ես առունով՝ եղ արձանի հեղինակն ավելի շուտ սադիստ ա): Այ, եթե Նեմեց Ռուբրոն Ռոդոյին նորից փող տար ու պատվիրեր, ասենք իրա՝ Ռոդոյի, կամ էլ թե չէ իրա՝ Նեմեց Ռուբրոյի արձանը, հարցի պատասխանը կարող ա պարզ դառնար:

Մարինե

Վիոլետ Գրիգորյան

ուրբաթ, 13:59, 18 հուլիս, 2003

բարձանյանի արձան. առաջարկ

Բարձանյանի արձանը իսկապես զվարճալի է, ու գուցե էնքան էլ վաստ չի, որ էս խեղճ, որիխոր մարդիկ կողքով անցնելիս մի քիչ ժպտան, ծիծաղեն, ուրախանան... հատկապես Բարձանյանին չսիրողները: Սիրողները չեն ծիծաղում, լաց են լինում: Շատերը մտքում երանի են տալիս իրենց, որ պուճուր վախտ ծնողներին չեն լսել, դաշնամուրի չեն գնացել ու վապչե արվեստագետ չեն դաշել ու իրենց չի սպառնում ապրողների կողմից ետմահու գրտկատերից ներբե էնպիսի հարված ստանալ, որ ոսկորներդ գերեզմանում տժտժան: Եստեղ են ասում՝ քանդակել թողել ա...

Քանդակն հավանողներից ունաճը ասում են՝ քաղաքը լիքը վաստ արձան ա, բայց նրանց վրա չեն խոսում: Կամ՝ ինչ ա պատահել, Փարիզում կամ եսիմ-ուր էնպիսի արձաններ կան: Եթ, հա, բայց էստեղիններից շատերը հենց բացման օրից գնում ծովալում են սոցռեալիզմ՝ աչքին վաղուց սովոր դժգույն զանգվածին, ու հաջորդ օրը կողքից անցնելիս էլ չես նկատում նրանց՝ դեռ հեղացվելիս ու քանդակվելիս արդեն մեռած, մեռելածին գոյությունը: Փարիզում էլ (ենթադրում են, քանի որ ես հասցել եմ ընդամենը մի կարիլ Լուվրից ու Պոնպիդույից տեսնել) կլինեն բազմաթիվ ու բազմատեսակ, արվեստի տարբեր ուղղությունների պատկանող արձաններ՝ տարբեր ճաշակների համար, ինչ է պատահել որ: Բայց հենց էդ շատությունն էլ այդ գործերի եւ դրանց հասարակական ըմբռնան ու արձագանքի բացատրությունն է: Թող երեւանում էլ լինեին տարբեր տեսակների քանդակներ, նրանց մեջ սա էլ գուցե ուտպեր: Բայց խնդիրն այն է, որ եթե երեւանում լիներ այդ ազատ բազմազանությունը, սրա հեղինակները էլ էս ձեւի չին քանդակի, չէ՞ որ գործի ողջ եռթյունը զավառական հավակնությունն է, որ իրեն ուզում է ցուցադրել իբրեւ բացարիկ, եզակի, էլիտար, արվեստ շիասկացող էս զանգվածից շատ բարձր կանգնած, ոչ թե չաղաքի, այլ Փարիզի համար նախատեսված, բայց դաժան բախտի բերումով երեւանի տգետ բնակչներին բաժին հասած մի գլուխգործոց: Եթե անզամ հեղինակների՝ տգետ ամբոխից հալածված, ժամանակից առաջ ընկած ու ժամանակակիցներից շիասկացված հանճարների խոսքերը չեք լսել ու կարդացել, զնացեք նայեք գործը: Յեղինակները երեւի ուզել են Տգեղի, Այլանդակի էսթետիկա բանեցնել, բայց դրա փոխարեն ստացվել է ծիծաղելիի, կոմիկական գրուեսկի էֆեկտ: Կարճ ասած՝ ծաղրանկար, ընդ որում ծաղրված են եւ քիթ-միթը, եւ պոզան, հայ արվեստագետի պոզան՝ աչքերը վակ, աշխարհից վերացած ու բարձրացած, հոգեւոր զմայլանքի եթերում վեհացած... Ոնց որ հնդկական ֆիլմի դրական հերոս:

Վիոլետ

Աննա Բարսեղյան

շաբաթ, 13:39, 19 հուլիս, 2003

առաջարկ

Arajark

Vorjuin sireli Violet

(hush)arzan-qaraq teman karor e darnal

Septemberi 8-14 utopianai kormitz naxatesvor conferans tzutzahandesi arantzneritz meke (namanavand vor naxatesvum e 1mx1m mi tort qaraqi glxavor hatakagzov ev vori vra linelu en bolor arzannere naev vorpes batzarutiu Majrhaiastane (miak kin). Mijotzarume chochapum e hetevjal tematikan. "Jarangabar poxakerpvor marmin ev mijavair" qaraqain taratzqum tzutzahandes ev "marmin ev nra pahanjner@" conferance hamalsaranum, manramasn nael <http://www.utopiana.am/actuality/actualite.htm>

Arajarks! ete kan tzankatzorner masnaktzelu conferancin-nerkaiatznelov orinak- Marmni tematikan hai grakanutjan mej

(quchakitz heto - asenq), kam qaraqe erevanjan grorneri mot, kam vorn e grori dere qaraqum, ev ailn ev ailn. naxoroq asem vor Grigor Catchatrjane handisavor batzumn e anelu "Grori zotze" porotzi.

karor eq dimel Anna Barseghianin ev Nazaret karoianinin
namak@utopianam.am, nare@arminco.com.

Sirov
Anna

Վահան իշխանյան
Երկուշաբթի, 13:54, 21 հուլիս, 2003
առաջարկ

բացի մայր հայաստանից, ելի կան կնոջ արձաններ: Էնպէս որ ձեր տորթի վրա մի մոռացեք մյուս կանանց: հետարքի է, թե «գրողի ծոց» փողոցում կլինե՞ն այն բոլոր մեթոդական կարինետները, որտեղ կսվորեցնեն, ինչպես գրողներից օգուտ քաղել: զի՞ն կարծեմ դրա մեծ վարպետն է:

Վահան

Աննա Բարսեղյան
Երկուշաբթի, 15:11, 21 հուլիս, 2003
առաջարկ

Vahan karor es berel orinakner kin anhatakanutiunneri arzanneri Erevanum.
Isk GX-i varpetutian gartniqnere kisir ir het xndrum em.

Sirov
Anna

Վահան իշխանյան
Երեքշաբթի, 11:39, 22 հուլիս, 2003
առաջարկ

բարաջանյանի արձանի հարեւանությամբ, կարապի լճի շուրջ 2 կնոջ արձան կա, մեկի հեղինակը փարիզաբնակ դավիթ երեւանցին է, որ փարիզում կոմիտասի արձան դրեց: մի արձան կա արովյան փողոցի վրա, լեզվի ինստիտուտի դիմացի մայթին: մի արձան ֆլորայի այգում: չերեմուշկում, կամրջի կողքի այգում թումանյանի անուշի ու կարոյի գրկախառնված արձանն է: բոլոր էս արձաններն էլ մայր հայաստանի չափ, կամ գուցե ավելի անհատականություն են արտահայտում: կանանց հետարքի արձաններ կան թիսմախ գյոլի գերեզմանատանը, որ եթե ուսումնասիրվի, գուցե սրված անհատականություններ դուրս գան: ամեն դեպքում արտաքինից անհատականություն կարելի է համարել: էսքան կանանց արձաններ հիշում են: գուցե կան նաեւ այլ արձաններ: ուրիշ կանանց արձանները հայտնաբերելու համար ժամանակ է պետք:

ի՞նչ ես կարծում, ֆորումում չենք կարող քննարկել արվեստագետների վարպետության թեման: դժվար է ամեն արվեստագետի վարպետության մասին կարծիքը կիսել եդ արվեստագետի հետ: պատկերացրու գնամ գտնեմ բարաջանյանի արձանի հեղինակին ու ֆորումում գրած իրեն ասեմ: ինչ կարիք կա: արվեստագետները զգայուն նուրբ հոգիներ են ու իրենց ստեղծագործության մասին երեսին ասված տեսակետը կարող է խոցել նրանց:

Վահան

Աննա Բարսեղյան
Երեքշաբթի, 12:29, 22 հուլիս, 2003
առաջարկ

Vahan aid arzannere vorontz masin du asum es irakanum batzakanneri tere lratznorner en, dranq representationner en. Asenq aispes, irakanum uremn chkan kin herinakner hai mchakuiti mej, isk ete kan el, apa gerezmanotzum kareli e

50

gtnel. isk endhanrapes xndire ail ter e. Tzankatzaz hasarakakan Patver patasxanum e intch-vor sotzialakan pahanji. ev ailn...tarorinak e vor qez tarorinak che miajn operai motakaiqum derevs qaratzaz "treqi" vernatune.

PS. o la la, inch nrbankat jurnalist es. verjin hachvov jurnalistnere misht el etevitz en asum.

anna

Սարհատ Պետրոսյան

Երեցաբրի, 09:48, 9 սեպտեմբեր, 2003

Violetin

Անշուշտ երեւի թա Վահանը առաջարկվում է Ընդհանուր բաժնում եղած մեր քննարկումը: Այստեղ ավելի հետաքրքրի քննարկում է գնում քան մեր ընդհանուր բաժնի ընդհանուր քննարկումներ: Զգիտեմ Դավիթ Բեժանյան կոմունիստները քանդակ չեն տա քան որ ենքն էլ ասում են տաղանդավոր չի, իսկ քանի որ են ժամանակ սոցութակ չի արե հիմա որ առնոներ քանդակի ոչ մեկ չի ասի թա են վախտ իի էր էդյես անում: օրինակ արա շիրազն է որ մեր գլուկիսը տարավ իրա նոյի թվի քանդակներով: իսկ ժաշիթ բեժանյանը իրեն դա թույլ տվեց.... հասարակությունը չճարսեց.... բայց ես կարծում եմ դա լավ արձան է... իսկ եթե որեւէ մեկի էստետիկական ցանկություններ չի բավարարում, ապա բեջանյանը մեղավոր չի.... է առնոն կարողա էստիտիկ առումով ես իմ ինչ էր.... սա ես ասում եմ խորին հարգանք ունենելառ իրա երաժշտությանը, որոնց լսելիս ես հաճախ փշաքաղվուն եմ.... ուղղական վահանը նորից ջիշտ է նկետալ դա զոռով դրին այդտեղ որ չասեն օպերային կաֆե սարքին բե տեսեք դաժեն նեմեցը մշակույթին հիշում: իսկ քաղաքաշինականա առումով դրա տեղը շատ վատ է ընտրված կարդացեք ընդհանուր բաժնում եթե հետաքրքրի է:

գտնվելու որ աննան լավ առաջարկ է տելիս զարգացնում եմ առաջարկելով բաց մրցույթ հենց թող ուսուայիանայն շրջանակներում առնոյն արվանը եթե չիներ այստեղ ուր լիներ ոնց լիներ.... իսկ դրա տեղում դնել երեւանի գլխավոր ճարտարապետի կիսանդրին... եթե հիմա քիչն են զարկ տվել, այն դեպքում զարկ տան բարնին որ ճոռոն ճոռոն միայն խոսում է.... իսկ հյուսիսիային պողոտայի վրա շինարարաւոյրուն տեղը նարդի են խաղում....

Սարհատ Պետրոսյան

Վահան իշխանյան

Կիրակի, 11:09, 28 սեպտեմբեր, 2003

հարգել հարազատներին

հարգելի սահրատ,

մեծ դժվարությամբ կարդացի տեքստող, քանի որ շատ դժվար է հասկանալ որ ժ գրելով նկատի ունես դ, կամ ջ-ն նշանակում է վ: բայց այնուամենայնիվ հասկացա, որ ինչ սոցութակ չի, ուրեմն լավն է: ես համաձայն եմ, որ առն բարացանյանի արձանը ինչ-որ արժեք ունի, օրինակ, ես կողքով որ անցնում եմ, միշտ ծիծաղս զայխս է: առնոյի երաժշտության երկրպագուներն էլ գուցե սիրեն արձանը, քանի որ նրա ստեղծագործությունների քաղենիական մելոդիկությունը համընկնում է արձանի հորինվածքին: բայց առնոյի ընկերներն ու մտերիմները չեն հավանի արձանը, փոխարենը կվիրավորվեն, որ քաղաքի կենտրոնում անցնող դարձող ծաղրի առարկա է դարձնում սիրելի մասնաւորույնի: առնոյի ազգականները, որդին նույնիսկ կարող են վիրավորվել, որ հոր, պապի եւ այլնի կարիկատուրան դրել են թանաշա:

Ենայս որ սա են արձանն է, որ ամենածայրահետ վերաբերնունքների է արժանանում: սա փաստ է: բայց ես կողմ են հարգել առնոյի հարազատների զգացմունքները, եւ նման արձանով նրանց չվիրավորել:

Վահան

Արծվի Բախչինյան

չորեցաբրի, 12:26, 15 հոկտեմբերի, 2003

ԱՆՐԱՎԱԿՆՈՒՄ ԴԺԳՈՒՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՎԱԿՆՈՒՄ ԲԵԶՈՒՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քսանմեկերորդ դարի սկզբի Երևանի պատմության բնորոշ կողմերից մեկը կարելի է համարել արձանամոլության ախտը: Քաղաքի կենտրոնում միջյանց հաջորդած հայոց մեծերի նոր քանդակների ի հայտ գալը քաղաքը գեղեցկացնելու և այդ մեծությունների հիշատակը հարգելու մտահղորդյանը չէ թելադրված, այլապես դույզն-ինչ

ուշադրություն կդարձվեր դրանց գեղարվեստական արժանիքների վրա: Պարզապես հավանաբար մեր ղեկավար շրջաններին պետք էր որոշ քանդակագործների լավություն անել: Զգիտեմ, ենթադրություն է: Հակառակ դեպքում ի՞նչ կարիք կար քաղաքը լցնել նրա արտաքինին բան չտվող և մինչև անգամ՝ արտաքինը փշացնող արձաններով, որոնց շուրջ ստեղծված դժգոհության ալիքը բնավ էլ անհիմն և անտեղի չել:

Լուսահոգի Այվազովսկին դժգույն, ոչինչ չասող, հիրավի անկապ քանդակային կաղապարի մեջ: Ծով չունենք գոնե ինչոր լին ավին կանգնեցնեին այդ արձանը (ասենք, Երևանյան լին, տարածքն ամերիկացիների սեփականությունը դարձնելու փոխարեն): Լուսահոգի Անդրանիկ զրոյավարը՝ Երկու անհասկանալի հրեշտականի (Կամ ծիահերեների) վրա, որոնք իրու թե Արևմտյան և Արևելյան Յայաստաններու են մարմնավորում (իսկ այդ դեպքում ո՞ւր մնաց Ղարաբաղը. լավ է, որ այդ երկուսի արանքում քանդակագործը չի հղացել մի մտրուկ քանդակել): Լուսահոգի մարշալ Բաղրամյանը. ամենաշարքային մի ծիահրձան՝ անհամաշափ ձևերի մեջ, պնդուկի գլխով: Դեռ հազարավոր մարդիկ հիշում են կենդանի Բաղրամյանին, որ նա լավ էլ մեծ գլուխ է ունեցել: Այս շարքում թերևս փոքր-ինչ տարբեր է մեկ միլիոն դոլար արժեցող սև կատվի քանդակը («Կուլտուրիստ կատուն», ինչպես ոմանք են անվանում), որի չգոյությունից Երևանցիները շատ էլ չին տառապի...

Արվեստում նոր խոսք ասելու մարմացը հաճախ է հանգեցրել ծայրահեղությունների: Վառ վկա՝ Առնո Բաբաջանյանի այնքան չարչորկված արձանը, որի պատճառով շատ Երևանցիներ սկսել են պարզապես ոտք չդնել թումանյան փողոցի այդ հատվածը: («Եթե ես Բաբաջանյանի ազգականը լինեի՝ հաստատ մի օր կպայթեցնեի այդ արձանը», – խոստովանեց ինձ մի ծանոթուիի): Եթե Սուրեն Ստեփանյանը կամ Գերդի Յարայանը մտերմական շարժերով պատկերել են Առնո Բաբաջանյանին՝ ընդգծելով նրա խոշոր քիքը և դաշնակահարի ձեռքերը, ապա նմանատիպ մոտեցումը մոնումենտալ արվեստում միանգամայն անհարիր է: Փոքր ձևի մեջ Առնո Բաբաջանյանի սույն քանդակը կերպարի նման մեկնարանումը թերևս արդարացներ, սակայն այս ձևի մեջ այն պարզապես չի կայացել: Արձանի հեղինակ Դավիթ Բեկշանյանը քանդակագործության մեջ թերևս ցանկացել է նոր ոճ ստեղծել: Եթե կա ծաղրանկար, ինչո՞ւ չի կարող լինել նաև ծաղրաքանդակ:

Ոչ շատ մարդկանցից, բայց այնուամենայնիվ գովեստներ լսել են Առնո Բաբաջանյանի քանդակի առթիվ, իբր թե այն ինքնատիպ է, որ իրենց սրտերն ուրախությունից թթվացել են՝ առաջին անգամ այն տեսնելով: Նրանց մեջ կամ նաև շատ լուրջ մարդիկ, ինչպես՝ արձակագիր Լևոն Խեցոյանը կամ խորնայստեր (նա չի ընդունում խմբավար բառը) Սոնա Շովիաննիսյանը: Ինչպես հայտնի է՝ ճաշակին ընկեր չկա: Սակայն Բաբաջանյանի արձանը դրվատողներից ոմանք պարզապես ցանկանում են իրենք ինքնատիպ երևալ և կամ բավականաշափ չգիտեն (կամ էլ առհասարակ չգիտեն), թե ինչպիսի անձնավորություն է եղել կոնպոզիտորը, որ նրա կերպարն արձանագործության մեջ նաև մեկնարանություն ունենար: Որ իրու թե նման գրոտեսկային մոտեցումը միանգամայն հարազատ է Բաբաջանյանին, «չէ՞ որ նա ինքն էլ գրոտեսկային մարդ է եղել»: Արդյո՞ք այդպես էր սակայն... Առնո Բաբաջանյանը միայն «Յարսնացուն հյուսիսից» ֆիլմի ուրախ-զվարք երգերի հեղինակը չել: Նա խորին դրամատիզմով հագեցած կերպար է եղել, ինչպես վկայում են ժամանակակիցները, ինչպիսի դրամատիզմ որ առկա է նրա «Յերոսական բալլարում»...

Դեյ գիտի Պարույր Սևակ, որ երազում էր Կարապի լիճը վերանվանել Դուրյանի լիճ, իսկ նրա մոտ տեղադրված տեսնել «Լճակի» աննահ հեղինակի մի փոքրիկ արձանը... Այսօր մեր օպերայի շրջակայքը շատ հեռու է բանաստեղծական-գեղարվեստական շնչից: Քաղաքամայր Երևանի այդ յուղալի կտորը դարձել է խոշոր բիզնեսի վայր: Կաղուց արդեն օպերայի շրջակայքում հայտնվել էր շրջակա ճարտարապետությանն անհարիր մի արձան՝ Արամ Խաչատրյանի (իմա՝ Լորիս ճգնավորյանի) քանդակը, որը, մի նկարիչ ժամանությանը, կարծես մի դիմոզավի եկած-կլիկած լինի: Արդեն իսկ օպերայի շրջակայքը լցվել էր շուրջը կակաֆոնիա ստեղծող Երկու տասնյակի հասնող հազարերգ սրճարաններով, իսկ Ալեքսանդր Սպենդիարյանի հավերժ համգուտարանից մի քանի քայլ այն կողմ, գետնի համարյա միւնաույն մակարդակում բացված «Աստրալ» դիսկոյում նաև թուրքական մելեղիների տակ տժում են հայ թինեյշերները (ձեռքս չի գնում հայերեն բառ գրել ամերիկյան արժեքներով մեծացող մեր դեռահասների համար) հաստատ խռովելով Սպենդիարյանի ոսկորները: Արդեն իսկ լուրեր են պտտվում, թե օպերայում սառւնա պիտի բացվի: Եվ այս ամենի ենթատեքստում այնքան էլ անհամահունչ չէ սույն ծաղրաքանդակը՝ մեջքն արած թումանյանի և Սպենդիարյանի հուշարձաններին, ամենական ստեղծագործական ներշնչանք չարտահայտող և Բաբաջանյանին ոչ նման դեմքով, ագրավի ճանկեր հիշեցնող մատներով: Ողջ արձանը կարծես չարություն է ճառագում...

Մի՞թե այս կերպարանքով պետք է մեզ այսօր ներկայանար լուսահոգի Առնո Բաբաջանյանը, կերպարանք, որ եթե չունի վերոհիշյալ Երևանյան քանդակների դժգունությունը և շաբլոն մոտեցումը, ապա օժտված է շատ ավելի բացասական հատկությամբ, որի համար միայն մի բառ (դարձյալ ոչ հայերեն) կարող են գործածել՝ բեջուայություն... Դարձյալ՝ այնքան համահունչ մեր բեջուայա ժամանակներին...

52

Ազգայնականությունը գրականության մեջ

Հարութ Սիմոնեան,

չորեքշաբթի, 07:10, 30 ապրիլ, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

Հնայած արձագանգներ չունեցավ նոր քննարկաշարի հետ կապված իմ առաջարկներս գրականության եւ իր հարակից հարցերի շուրջ, որոնք են ազգայնականությունը, քաղաքականությունը, էսթետիկան, համարելով դրանք խիստ կարեւոր եւ հետաքրքրական ու խանդակառվելով Վիոլետի ու Վահանի հետաքրքրութեամբ այս թեմաների շուրջ ես կը փորձեմ այս ուղղութեամբ Սոնիա -Սանանի հետ բացել մի քննարկաշար:

Նախապէս կ'ուզենայինք մէկընդմիշտ հստակեցնել որ տեքստի մէջ ազգայնականություն բառը նացիոնալիզմի հոնանիշն է:

Իհայ գրականության մէջ ազգային գրականությունը ըստ մեզի առաջացել է կրօնականությունից: Երկար ժամանակ գրականությունը առնջված ա եղել կրօնականության եւ կրօնական թեմաների հետ ու մնացել է այդ կրօնական շղարշի եւ նրա հովանավորության տակ: հետագայում երբ շաղկապված են եղել կրօնականությունն ու ազգայինը մինյանց հետ վերածվել է ազգային գաղափարախօսության, որը պատճառ ա դարձել եւ եկեղեցու, եւ գրականության ազգայնականացման:

Աւելի ուշ ազգային գաղափարախօսությունը իր վրա վերցրեց ռազմաքաղաքական նշանակություն ու այս պատճառով գրականությունը նտապվ քաղաքական մտահոգությունների մէջ խլելով քաղաքական մունետիկների, քաղաքական առաջնորդի եւ սպաների դերը: Այս պատճառով էլ գրողները կորցուեցին արվեստի գլորալ գերխնդիրները ու խրվեցին մարտակոչքերի տեղայնական հարցերի մէջ, հավասարեցնելով գրող-մարտիկ հասկացողությունները: Ահա այսպէս ծեւավորվեց մի գրականություն, որի հիմքում ընկած իշխանական տիրակալման գաղափարը ստեղծեց ստրկամտություն, որը դարձավ ֆետիշ հաջորդող եւ դեռ չծնված սերունդների համար: Ահա այս է պատճառը որ հաջորդող սերունդները չկարողացան զբաղվել այն գրականությամբ, որը պէտք ա ստեղծեր գեղագիտություն, ոչ թէ միայն գեղեցիկի իմաստով այլ գաղափարի իմաստով, որտեղ հակագեղագիտությունը նոյնպէս գեղագիտություն ա:

Սովորական գաղափարախօսությունը որ ուներ բարձր իդեալ, որը փորձում էր ձեռքազատել ստրկամտությունից եւ ֆեոդալականությունից, իհայ գրականությունը կամ հայ իրականությունը չկարողացավ առնջվել այդ իդեալի հետ իր ազգայնականության պատճառով, չնայած ամբողջ սովորական միությունը ինքը չկարողացավ առնջություն ունենալ այդ իդեալի հետ, որովհետեւ ինքը այդ իդեալը դարձրել էր գաղափարախօսություն, ֆետիշ եւ նոր կրօն:

Ահա այն ընդհանուր թեման որ առաջարկել ենք եւ կ'ուզենայինք մեզ հետ ծավալէք ձեր ընդլայնող կամ հակադրվող տեսակետների հետ:

Սոնիա-Սանան եւ Հարութ

Վահան իշխանյան

Երեքշաբթի, 13:16, 6 մայիս, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

այդ ո՞ր իհայ գրողն է կորցրել արվեստի գլորալ խնդիրը: Եւ մեկ էլ, ո՞րն է այդ գլորալ խնդիրը: Եւ այդ գլորալ խնդիրը մի հոգի՞ է կորցրել, թէ՞ բոլոր իհայ գրողները:

այս հարցերը ինձ թույլ չտվեցին որեւէ տող գրեմ: կարծում եմ սոնիան ու հարութը կտան այս հարցերի պատասխանը, որ քննարկումը մի քայլ առաջ բրենմ, եթե ուրիշ բրեռող ինձնից առաջ չընկնի: Միայն մի խնդիր. դուք ասում եք «իհայ գրականությունը կամ հայ իրականությունը չկարողացավ առնջվել այդ իդեալի հետ իր ազգայնականության պատճառով»:

Դաստանակուց ազգայնական (նացիոնալիստ) գրող իհայ գրականության մէջ չեք գտնի, դաստանակին առնչվո՞մ է այդ իդեալին:

Վահան իշխանյան

Սոնիա-Սանան Թիլէճեան

չորեքշաբթի, 01:23, 14 մայիս, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

Վահան սիրելիս, դուն շատ ճիշտ ես այն առումով միայն որ մենք ընդհանրացուցած էինք մեր ըսելիքը. Բայց չէ՞ որ այդ ուներ յատուկ պատճառ: Մեր գրութիւնը քննարկման առաջարկը ըլլալով մենք կը խօսէինք հայ գրականութեան ընհանուր դիմագիծին մասին ու չինք առանձնացներ գրողներ: Այո, կան գրողներ որ արուեստի «գլորալ» խնդիրները կորսնցուցած էին ու անոնց թիւը շատ շատ աւելին էր քան այն քանի նզ գրողները որոնք ունեին արուեստի լուրջ մտահոգութիւններ ու կը շօշափէին իրենց գրականութեամբ այդ «գլորալ» խնդիրները, որը յետանուտ էր գեղագիտական նորութիւններ եւ համանարդկային արժեքներ ներմուծելու հայ գրականութիւն. որոնք դժբախտաբար չունեցան հետեւորդներ, ոչ թէ այն առումով որ իրենց նմանակէին կամ կրկնէին, այլ շարունակէին գրականութեան այն ուղին որ պիտի տանէր գեղագիտական մէկ նուածումէն դէպի միւսը, որ միայն գեղեցիկի անընդհատ վնտշուուքով չէ պայմանաւորուած, այլ նաեւ քանդելով ու նորէն քանդելով ու նորէն վնտշելով: Յետոյ գիտե՞ս ինչ... ինձի համար արուեստի մէջ, այսինքն նաեւ գրականութեան մէջ, համանարդկային արժեք հասկացողութիւնը կաա չունի տարրեր հաւաքականութիւններու ու բոլոր ժողովուրդներուն պատկանող խնդիրներուն հետ, համանարդկային կրնայ ըլլալ «ամենաստից», նեղ անձնական, խոհանոցային կամ անկողնային զգացողութիւնը, եթէ արուեստագէտը կամ գրողը կրնայ զայն իր եսէն վեր հանել ու դարձնել զայն համանարդկային: Հաւանաբար մտածես նաեւ ուրեմն ազգայնական խնդիրներն ալ կրնանք «գլորալացնել» ու համանարդկային արժեքի վերածել, սակայն վստահաբար ես չեմ համաձայնիր, քանի որ երբ կը շօշափէնք նման թեմաներ կինանք ծայրայեղական համակրանքներու, հակակրանքներու եւ գերակայութեան բարդոյթին մէջ, որը հակագեցութիւններէն ու ժխտումէն աւելի ոչինչ կը բերէ:

Սոնիա-Սանան

Յարութ Սիմոնեան

չորեքշաբթի, 02:58, 14 մայիս, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

Վահան, դաստաեվսկին լավ օրինակ չի, եվ ես չեմ համարում իրան ազգայնական գրող, այդ իդէալի հետ ավելի շատ առնջպում ա տոլստոյը իր կոմունայի գաղափարով, որ ուզում էր ստեղծել ուտոպիա քաղաքը: Այդ գաղափարի հիման վրայ բարձրացող իդէալը նկատի ունեմ, որ 20-30 թվականներին տեղափոխվեց Սիբիր եւ հետո բոլորը սպանվեցին: Նաեւ նկատի ունեմ կոնստրուկտիվիստներին այդ իդէալի հետ առնջված, օրինակ ֆիլոնովը, Մալեվչին նաեւ նկատի ունեմ որը մշակոյթի նախարար էր եւ արվեստի միտինգներ շքերթներ էր անում, օրինակ նաեւ երբ որ Սարյանը 10 թվին «Երկնագոյն Վարդ» խմբի մէջ էր, բայց հետո երբ երեւան եկավ փջացավ իր ազգայնականության պատճառով: Սա նկատի ունեի երբ որ ասում էի որ այդ իդէալը տեղ չունեցավ Ուուսաստանում:

Յարութ

Մարինե Պետրոսյան

հինգշաբթի, 22:15, 15 մայիս, 2003

մեղավոր հրեան

Շատ սիրելի Սոնիա-Սանան Յարութ,

«ազգայնականությունից տուժած մեր գրականության» շուրջ այս խոսակցությանը իմ ոչ շատ երկարատեւ (ավաղ) կյանքի ընթացքուն մասնակցուն են բնավ ոչ առաջին անգամ: Ազգայնականությունը, պարզվում է, ննան է հրեայի. մեկ հիմն ծանոթութեան մեջ էլ նոր ընկերութիւնը համար հայտնաբերում են (իրարից միանգամայն անկախ, իհարկե) որ ամեն ինչի մեղավորը հրեան... ներողություն, ազգայնականությունն է: Ես էլ ամեն անգամ մտածում եմ՝ «կարող ա՞», միտք եմ անում՝ տեսնում եմ՝ չէ: Բայց էս անգամ ասեցի՝ միտք անելուց առաջ նի քիչ հանրագիտարան բան կարդան, կարող ա՞ իսկականից «հրեան ա մեղավոր»: Մտա Encyclopedia Britannica ու փնտրեցի nationalism. Ահագին մեծ հոդված էր ու ահագին հետաքրքիր բաներ ինացա, էր բոլորը ծրի ծեզ չեմ պատմի, բայց մի հաստված թարգմանաբար՝ խնդրեմ. «Ազգայնականությունը արդի (modern) գաղափարախոսություն է... իր դիմանիկ կենսունակության եւ համընդգրկուն բնույթի պատճառով այն հաճախ կարծվում է շատ հին երեւույթ... իրականում, սակայն, միայն 18-րդ

51

դարի վերջին էր, որ ազգայնականությունը վերածվեց հասարակական եւ անհատական կյանքը ձեւավորող մտածողության՝ դաշնալով արդի պատմության ամենից որոշչի գործոններից մեկը, եթե ոչ ամենաորոշիչը... Աներիկյան եւ Ֆրանսիական հեղափոխությունները կարելի է համարել ազգայնականության առաջին հուժկու դրսեւորումները... Ժան-Ժակ Ռուսան հոդ էր նախապատրաստել ֆրանսիական ազգայնականության վերելքի համար՝ շեշտը դնելով ժողովրոշի ինքնիշխանության, ազգային կամքի ծնևավորման համար անհրաժեշտ՝ ընդհանուրի համագործակցության վրա, ինչպես նաև հասարակ ժողովրոշի համարելով քաղաքակրթության իսկական կրող»:

Մեջքերումը վերջացավ, իինա վերադառնաք մեր հայրենի ազգայնականության ու ձեր վարկածին: Դուք ասում եք. «հայ գրականության մէջ ազգային գրականությունը ըստ մեզի առաջացել է կրօնականությունից : Երկար ժամանակ գրականությունը առնջված ա եղել կրօնականության եւ կրօնական թենաների հետ ու մնացել է այդ կրօնական շղարշի եւ նրա հովանավորության տակ: հետագայում երբ շաղկապված են եղել կրօնականությունը ու ազգայինը միմյանց հետ վերածվել է ազգային գաղափարախօսության, որը պատճառ ա դարձել եւ եկեղեցու եւ գրականության ազգայնականացման»: Երեւի ինքներդ էլ տեսնում եք, որ այնքան էլ հստակ չեք արտահայտվել: Միայն մի բան ա պարզ, որ հայ ազգայնականությունը կրոնականի հետ եք կապում, ինչը որ ամիկմն դատողություն ա: Խոսքն էն մասին չի, որ ազգայնականությունը երբեք կրոնական բնույթ չի ստանում: Յաճախ ստանում ա, եւ դրա ամենացայտուն օրինակը ռուսական սլավոնաֆիլությունն ա: Բայց հայ ազգայնականությունը կրոնական չեր, պահպանողական չեր, այն ազատական էր (լիբերալ), որովհետեւ նրա առանցքային գաղափարը հայ ժողովրոշի եւ հայ մարդու ազատությունն էր: Իսկ ինչ վերաբերում ա ազգայնական գրականությանը, ապա դրա սկզբնավորողը Ռաֆֆին ա... stop! Ես հասկացա, որտեղ ա քաղված շան գլուխը: Սոնիան ասում ա՝ հայ գրականություն, բայց ամենից առաջ իհարկե հասկանում ա արեւմտահայ գրականություն, ու էստեղ Ալիշանը կա, միմիթարյան ավանդույթը, որ իսկապես կրոնա–ազգայնական ա ու մինչեւ իհմա էլ.. չէի ասի՝ կենդանի, բայց լրիվ մեռած էլ չի (սփյուռքում երեւի արհեստական շնչառություն են տալիս): Բայց ես որ ասում եմ ազգայնական գրականություն, հասկանում եմ, ամենից առաջ, Ռաֆֆի (պիսալ եմ անո՞ւմ): Իսկ Ռաֆֆին իսկապես ազատական էր եւ նրա գերխնդիրը (հայ) ժողովրոշի ազատությունը եւ այդ ժողովուրդը կազմող (հայ) մարդու ազատությունն էին: Եվ դուք, եթե անգամ ասեք, թե Ռաֆֆին կարգին գրող չի (ես, օրինակ, եր կարծիքին չեմ, բայց չվիճենք), միեւնույն ա՝ չեք կարող պնդել, թե նա գերխնդիր չունի. ազատությունը հենց գերխնդիր ա:

Ես էստեղ երեւի կանգ առնեմ, որովհետեւ թեր դեռ էլի ահագին բան ունեի ասելու, բայց էսքան երկար նամակ գրելը ոնց որ արդեն անպատշաճ ա ստացվում: Սակայն մեղավորը նաև դուք եք, որովհետեւ էլի թող թենան լիներ «գրականություն +ազգայնականություն», բայց կարող էք եթե ոչ կոնկրետ հեղինակ, գոնե կոնկրետ ժամանակաշրջան վերցնել (էլ չասած որ կա արեւմտահայ գրականություն եւ արեւելահայ գրականություն): Ու մեկ էլ - Շատ սիրելի Սոնիա եւ շատ սիրելի Յարութ, ծեզ իգուր ա թվում, թե եթե դուք մի նամակ եք գրում՝ ուրեմն նույն բանը եք ասում: Դուք իրականում լրիվ տարբեր բաներ եք ասում, ու ես հասցրի միայն ծեզանից մեկի մի մտքին պատասխանել, էն էլ՝ մասամբ: Յարութի համար ոչ տեղ մնաց, ոչ ժամանակ: Ավաղ:

Մարինե

Յարութ Սիմոնեան
իինգշաբթի, 02:40, 22 մայիս, 2003
չունի «շանս»

Սիրելի Մարինե

առաջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել քեզ Մարինե, քննարկաշարին լուրջ վերաբերվելու համար: Եւ հետդ համաձայն եմ, որ թենայի մէջ երեվի պետք էր թվականներ նշվէր եւ այդպիսով կոնկրետացվէր թենան: Ուղղակի մենք մտածեցինք, որ թվականները նշելով կը խուսափէինք մեր գրութեանը հոտվածային տեսք տալուց: Ինչ վերաբերվում ա ազգայնականության մասին Britanicajig վերցված քո օրինակին, դա վերաբերվում ա մի հեղափոխութեանը եւ մի ժամանակաշրջանի, որը պայքարում էր Մանարխիայի դէմ, որտեղ ազգայնականությունը հետեւանքն էր հասարակական եւ դասակարգային պայքարի, այդ պատճառով էլ ազգայնականությունը անխուսափելի էր:

Իսկ ինչ վերաբերվում ա մեր թեքսթի առաջին հատվածին. այստեղ մենք նկատի ունեինք Յայ Միջնադարը եւ դրանից հետո ինկող ժամանակահատվածը, որտեղ եկեղեցին էր հայի տեսակը պահպանողը որպէսզի չխանվեն հայերը ուրիշ ազգերի հետ, ի տարբերություն ռուսականին, որի գերխնդիրը իմբերյան էր որը փորձում էր ամբողջ

Կովկասը միացնել մի հմբերյահ տակ:

Մարինե, ես դեմ եմ ազգայնականությանը, չնայած իրականության մէջ ես ավելի դեմ են քան երեվում այս քննարկաշարի մէջ, մի շատ պարզ պատճառով, որ ժամանակակից կոնտեքստում ինքը չունի որեվէ «շանս» լինելու:

Հարութ Սիմոնյան

Մարինե Պետրոսյան

ուրբաթ, 20:52, 23 մայիս, 2003

1600 տարվա մենություն

Հարութ ջան, խնդիրը ազգայնականությանը կողմ կամ դեմ լինելը չէր, խնդիրը, եթե հիշում ես, գրականությանն էր վերաբերում. դուք ազգայնականությունը համարել էք մեր գրականության թուլության պատճառ, ես էլ առարկում էի: Եվ առարկում էի ոչ թե այն պատճառով, որ կողմ են ազգայնականությանը (ազգայնականությունը կարող առ ունենա ամենատարբեր դրսեւումներ, ոնց որ տեսար, իմ վերաբերմունքն էլ դրանց նկատմամբ տարբեր ա), այլ որովհետեւ սխալ պատճառ նշելով՝ երբեք չես նկատի իրական պատճառը եւ միշտ կհանգես սխալ եղրակացությունների: Նախ՝ հայ գրականությունը բոլորովին էլ թույլ գրականություն չի, հայ գրականությունը, անենից առաջ բանաստեղծությունը, չարժեքավորված գրականություն ա, ու ես միշտ խուսափել եմ ես խոսակցությունից, որովհետեւ վիրավորանքն ու ջղայնությունը ես մասին խոսելիս ինձ խեղդում են... Դրա համար էլ կարծ ասեմ՝ հայ գրականությունը ոչ ազգայնականության պակելցուկ ունի, ոչ էլ գեղարվեստականության պակաս, ինքը պարզապես միայնակ գրականություն ա, այսինքն ոչ մի մշակութային համակարգում լիարժեքորեն չկա, ինչն էլ անհնար ա դարձնում դրա արժեքավորումը ու հայ մտավորականի մեջ ծնուն ա թերարժեքության խորոնիկ գգացում: Իսկ էդ մշակութային մենությունը անխուսափելի հետեւանքն ա քաղաքական մենության եւ կվերանա միայն այն ժամանակ, երբ Հայաստանը դառնա քաղաքական որեւէ մեծ համակարգի լիարժեք անդամ: Եսօր վերջապես էդ խնդիրը լուծելու շանս կա, ու էդ շանսը իրականություն դարձնելու հարցը քաղաքական խնդիր ա՝ ազգային խնդիր: Դրա լուծումից ա կախված հայ գրականության վաղվա օրը, դրա համար էլ ինձ խելամիտ չի թվում ազգային-քաղաքական հարցերին բոյկոտ հայտարարելը:

Մարինե

Հարութ Սիմոնեան

շաբաթ, 20:35, 24 մայիս, 2003

ոչ միայն 1600 տարի

Մարինե,

Ես լրիվ համաձայն եմ «1600 տարի մենություն» քո խորագրի հետ, քանի որ այս խորագրով լիովին ամփոփում ես հայ գրականության «ոդքախսության» պատճառը: Նաեւ հետո լիովին համաձայն եմ որ Հայաստանը հիմա ունի «շանս» այդ դժբախսությունը վերացնենք ազգային «տոմինանատ» խնդիր: Ազգայնականության տոմինանտ խնդիրը լինելը կարծում եմ օլիխաւոր պատճառներից մէկը կարող ա լինել. որ Հայաստանը ընդգրկվի քաղաքական մեծ համակարգի մէջ ու մնա իր մենության ամրոցի մէջ:

Իսկ ինչ վերաբերվում ա քո էն կարծիքին որ մեր գրականության մէջ ազգայնականության ավելցուկ չկա եւ ոչ էլ գեղարվեստականության պակաս, եղբան էլ համաձայն չենք: չե՞ս կարծում եթե մի շրջանի գրողների մօտ ազգայնականության ավելցուկ զգացվում ա, գեղարվեստականության պակասը բնական հետեվանքն ա այդ ավելցուկին, ինչպիսին էին օրինակ Պատկանեանը, Շիրազը եւ Սփիտքի մէջ կեղծ հայրենասիրության քարոզիչները... Անշուշտ մենք կուգենք այստեղ ավելացնել նաեւ այն, որ երբ իսկապէս գրողների մօտ եղել ա գեղարվեստականության բարձր նվաճումներ, ապա եղել ա այն գրողների մօտ, որոնց մօտ բաձարցակապէս չի եղել ազգայնականության խնդիր. ինչպիսին ա Մեծարենցը, կամ էլ եղել ա գեղագիտականացված ազգայնականություն, ինչ որ արեցին Նավասարդի եւ Մեհենի շուրջ հավաքված գրողները:

Մարինե մենք ուզում ենք քննարկաշարը փակել, որովհետեւ էս թենայի շուրջ դժբախսարար բոլորը խօսում են, վիճում են, կատաղում են, բայց վախենում են ինչ որ բան գրել, ու ստացվում ա այնպիսի երկխօսություն որ կարծես թէ ապացուցի, որ միայն մենք ու դու ես խփնված այս թենայի վրա, մի թեմա որ համաճարակ ա ստեղծել մեր իրականության մէջ, որի պատճառով սպասվում է Հայաստան ամրոցի դրները փակելու մի ուրիշ դարաշրջան:

Իսկ ինչ որ մի տեղ, ինչ որ մէկը եթէ մտածում ա որ մենք չափազանցեցնում ենք էս թեման, ապա էն պատճառով որ վերջապէս ինչ որ մի տեղ բացայայտվի ազգայնականության համաձարակ լինելու հանգանաքը, քանի որ հիմա երբ ամբողջ աշխարհը փորձում ա վիզը ազատել այս մահացու հիվանդությունից, ապա մենք ինադու, մեր պատմությունը չկորցնելու համար խրվում ենք ավելի ու ավելի այդ հիվանդության մէջ:

Եվ վերջապէս էս երկրում ապրելով պէտք ա զգալ այս երկրի քաղաքացի ու ոչ թէ հայ, ու էս պատկերացմանը միայն կարող ա այս քաղաքում ապագայում լինեն քաղաքացի նաեւ օտարազգիներ, ոչ թէ հայ օտարազգիներ, այլ օտարազգիներ բարին բուն ինաստով:

Սոնիա-Սաման, Յարութ

Մարինե Պետրոսյան

Կիրակի, 15:35, 25 մայիս, 2003

Դառնամ ողորմի տաճ քննարկաշարին, որ ավարտվեց

Սիրելի Սոնիա-Սաման Յարութ, շատ տխուր եմ որ ուզեցաք փակել մեր խոսակցությունը հենց էս ժամանակ, երբ որ այն սկսել էր ինձ շատ հետաքրքրել: Ի՞նչ ամենք որ երեքովս կինք մասնակցում խոսակցությանը, մասնակիցների փոքր թիվը երբեմն կարող ա նույնիկ օգտակար լինել, մանավանդ որ՝ մենք քիչ ենք, սակայն բազմազան. 2 գործողացող + 1 երեք զգորդուացող, 2 female + 1 male, Յայաստանի 2 քաղաքացի + Սիրիայի 1 քաղաքացի, բանաստեղծությամբ 2 գրաղվող + արվեստով 1 գրաղվող, 3 ազգությամբ հայ: Դու տեսա՞՞ր, Յարութ, որ մեր միակ ընդհանուր հատկանիշը ազգությունը դուրս եկավ, ազգություն՝ հենց էն «ազգայնական» ինաստով, որ էս բառի տակ հասկանում են հայերը, հենց էն ինաստով, որ քեզ ջղայնացնում ա, ազգությունը՝ ոչ քաղաքացիությունը: Երեւի էր ջղայնությունն ա պատճառը, որ ծեր նամակի վերջում գրել եք ծկնակապաննան մի նախադասություն, որից, եթե ուզեն բան հասկանալ, սարսափելի գլխացավ ա առաջանում. «Էս երկրում ապրելով պէտք ա զգալ այս երկրի քաղաքացի ու ոչ թէ հայ, ու էս պատկերացմանը միայն կարող ա այս քաղաքում ապագայում լինեն քաղաքացի նաեւ օտարազգիներ, ոչ թէ հայ օտարազգիներ, այլ օտարազգիներ բարին բուն ինաստով»: Յարութ, «հայ օտարազգին» ո՞վ ա, չլինի՝ Սոնիան ա: Այսինքն օտարազգի ա, որովհետեւ օտար քաղաքացիություն ունի, ազգություն = քաղաքացիություն: Լավ, ընդունենք, բայց էր դեպքում ովքե՞՞ր են օտարազգիները՝ բարի բուն ինաստով: Ուն որ թե ուզում եք ասել՝ ոչ հայերը: Բայց եթե ոչ հայն ա բուն ինաստով օտարազգին, ուրեմն ազգություն (=> օտարազգի) բարի բուն ինաստը քաղաքացիությունը չի, թե չէ Սոնիան էլ կլիմեր բուն ինաստով օտարազգի:

Սոնիա ջան, Պատկանյանն ու Շիրազը ազգայնականության ավելցուկի վարկածը չեն ապացուցում, որովհետու շատ թեթեւ են կշռում՝ 1600 ամյա հայ գրականության ընդհանուր ֆոնին: Իսկ «Սփիւռքի մէջ կեղծ հայրենասիրության քարոզիչները» շատ ավելի խոսում են, որովհետեւ ցույց են տալիս քո առաջ քաշած վարկածի հոգեբանական արմատները, որ սփյուռքահայ իրականության մէջ են: Դու խոսում ես ազգայնականության վտանգից, որովհետեւ սփյուռքահայ գրականության մէջ էր Վտանգը կա ու իրողություն ա, բայց Յայաստանի գրականության մէջ էսօր նման խմորի չկա: Կրիվը՝ Շիրազի ու Կապուտիկյանի դեմ, դեռ՝ է՝ Հովհաննես Գրիգորյանի սերումն ա տվել՝ անցած դարի 60-ականներին, մանրամասն կրիվ ա տվել ու հաղթել, շիրազ-պատկանյանական գիծը վաղուց արդեն Յայաստանի գրականության մէջ չի շարունակվում, պատկերացրու՝ հակապատկանյանական կզտնես (Արփին, օրինակ), պատկանյանական՝ ոչ: Էտ ինչ տարօրինակ վիճակ ա, կասես դու, էր հակապատկանյանականությունն օդո՞վ ա սմվում: Ուր էր թե օդով սմվեր, հենց պատկանյանականությամբ էլ սմվում ա: Ես որ ասում էի՝ գրականության մէջ պատկանյանականությունը հաղթահարվել ա, դու մտածեցիր՝ գրականությունը Յայաստանի իրականության վրա էնքան հզոր ազդեցություն ունի, որ պատկանյանականությունը գրականությունից չքվեռվ, հայ իրականությունից էլ ա չքվե՞լ: Ավաղ՝ ինչ էլ չի չքվել, դրա փոխարեն՝ էսօրվա հայ գրականությունն ա Յայաստանի քաղաքացու գիտակցությունից համարյա լրիվ չքվել. գոյություն չունի: Ու գիտե՞ս պատճառը որն ա: Պատճառը, կարծ եթե ծեւակերպեմ, էն ա, որ Յայաստանի գրականությունը, Յ.Գրիգորյանի սերնդից սկսած, գնում էր ծիշտ էն ճանապարհով, որ դուք եք հիմա առաջարկում որպես փրկություն՝ էսթետիզացիայի (գեղագիտականացնան) ճանապարհով: Ու հասավ էսօրվա օրվան՝ երբ որ ազդեցություն չունի ոչ միայն երկրի գարգացումների, այլեւ հայաստանցու լեզվամտածողության վրա: Մի խորպով՝ հայտնվել ա սեւ խորոշում (ականջի կանչի, Նազարեթ):

Որ նանակս նորից գլոբալ չափեր չընդունի՝ էստեղ էլ ավարտեն: Ու եթե վերջին նամակն ա, դառնամ ողորմի տաճ քննարկաշարին, որ վատը չէր:

Մարինե

Վիոլետ Գրիգորյան

Երկուշաբթի, 12:19, 26 մայիս, 2003

դառնամ ողորմի տամ քննարկաշարին, որ ավարտվեց

Այ ժողովուրդ, զժվեցի՞ք, յաններդ լրիվ տարել ա, եղ խի՞ ու ո՞նց եք քննարկումը փակում, կարո՞ղ ա վրեն էլ կողպեք դնեք, իս ... Մեկը փակում ա, մեկն էլ ողորմի ա տալիս: Դուք ուզում եք խոսեք, խոսեք, չեք ուզում՝ մի խոսեք, բայց փակելս ո՞րն ա: Կարող ա մեկը մի ամիս հետո ա գրում, մարդիկ գրադատ են, են էլ եսօր՝ ընտրությունների թեժ վախտ, համբերություն չունե՞ք, այ ավարաներ, այ գրադպողներ...

Դուսով եմ, նամակս ծեր գրույցի լուրջ տոնայնության վրա չի ազդի: Մի երկու բան էլ ես ասեմ: Երեկ ընկերուիիս զանգել էր Փարիզից ու պատմում էր, թե ինչպես են շոֆերներով Ֆրանսիան կաթվածահար արել: Ես կարծում են այդ գործադուլի ակտիվ «մասնակիցներից» է նաև ֆրանսիական գրականությունը՝ իր սերմանած հայացքներով, արժեքներով եւ այլն: Ցավոք, Յարութ ջան, ոչ ֆրանսիական գործադուլը կարող ենք ներմուծել, ոչ էլ՝ ֆրանսիական գրականությունը (նկատի չունեմ թարգմանությունը): Ստիպված ենք մեր գրականությունն ու մեր գործադուլը ստեղծելու: Մարիննեն ուզում ա դա անել, դու ուզում ես միանաս նրանցինին, բայց իրանք քեզ չեն նկատում ու չեն ճանաչում, որովհետեւ նրանց իրենց կրկնությունը հետաքրքիր չի, իրանց ախորժակը քո բերած, մարդկության ընդհանուր դազանի մեջ զցած սեփական անկրկնելի համուհուտն ա գրգռելու:

Ստիպված եմ խոսքս կիսատ թողնել, ժողովուրդ, կողպեքը հանեք, այ խալիս, ջարդեք շղթաները, օն, անդր, առաջ ի տակ դալի...

Վիոլետտոտտոտտա

Աննա Բարսեղյան

հինգաբթի, 01:33, 29 մայիս, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

Իմ կարծիքով այս քննարկմանը կարելի է ներգրավվել մի քանի գրաքննադատների, գրականագետների: Ես համամիտ չեմ ընդհանրապես նիվիլիրացմանցը, ուերուկցիոնիզմին, կամ մի տեսակ գլոբալ զնահատականներին, կարծում են ազգային գրականությունը տարբեր է իր ենթատետեքստով, ազգայնական գրականությունից. Ազգային գրականությունը բնորոշ է 18-19-րդ դարի իդեալօգիաներին, նկատելի է եվրոպական գրականության մեջ եվս. Եվ կարելի է ասել, որ հակադրվում է կրոնականությանը, քանի որ լուսավորչական մտքի ազդեցությունն է կրում-այս առումով հետաքրքիր է կարդալ ֆուկոյից - լուսավորչական մտքի մասին”

Կներեք հայերեն նոր եմ գրու դեր վարժված չեմ ...

Բարեւ զեզ...

Աննա

Վահան իշխանյան

կիրակի, 17:40, 1 հունիս, 2003

գրականություն եւ հարակից հարցեր

ո՞րն է ազգային գրականությունը: Եթե ազգային բարը հանենք, ու ասենք հայ գրականություն, ապա վիճելի է, որ հայ գրականությունը առաջացել է կրոնականությունից: Նայ գրականությունը մշտապես որեւէ իշխող մշակույթի ազդեցությամբ է ձեւավորվել. մինչ քրիստոնեությունը գերակշռել է հելլենիստական ազդեցությունը, միջնադարում բյուզանդական ու պարսկական ազդեցությունները (նաև կրոնական գրականություն մեջ): 19-րդ դարում համաձայն են, արդեն արեւմուտքի գաղափարական հոսանքների ազդեցությամբ է ձեւավորվում հայ գրականությունը (ու՞ր մնաց կրոնականությունը): Տարբերությունը այն է, որ եթե արեւմուտքում ձեւավորվում էին ազգ-պետություններ, որոնց գաղափարական արժեքները արտահայտվում էին գրականության մեջ, ապա հայերը պետություն չունեին ու ձգուում էին պետություն ստեղծել (հայ մտավորականները) եւ գրականության մեջ որոշ չափով գերակշռում էին ազգային-ազատագրական գաղափարները, որոնք արեւմտյան գաղափարներից էին ծնված (ազգային-ազատագրական էլ արեւուտքից էր գալիս: Եթե ազգային ազատագրական թեման որեւէ մեկը բնորոշի ազգային գրականություն արտահայտությամբ, ապա դժվար թե կարողանա ապացուել, որ այդ ազգային գրականությունը առաջացել է կրոնականությունից: Օրինակ Նալբանդյանի գրած մեր հիմնը՝ իտալացի աղջկա

50

երգը, իտալական ազատագրական պայքարի ազդեցությամբ է գրված եւ ոչ թե կրոնականությունից է առաջացած): Միայն այդ գաղափարները հայերի մեջ (չեմ ասում հայաստան, որովհետեւ հայաստանը միայն տարածք էր) ուշացումով էին հասնում, քանի որ հաղորդակցությունը դանդաղ էր:

բալգակը ու վերլենը ֆրանսիայում, հիսուն տարի անց շիրվանգաղեն ու տերյանը մեկը մոսկվայուն մեկը բարվում: ո՞ր հայ գրողն է կրոնականությունից առաջացել եւ ինչից է երեւում, որ ամբողջ հայ գրականությունը կրոնականությունից է առաջացել: հիմնավորնան համար օրինակները չեն խանգարի:

Վահան իշխանյան

Աննա Բարսեղյան
չորեքշաբթի, 12:29, 4 հունիս, 2003
գրականություն եւ հարակից հարցեր

Հարգելի վահան իշխանյան

իմ նամակը սկսվում է “Իմ կարծիքով”-ից, վերը նշվածը կրոնականության մասին ես ընդգրկել եմ նամակումս դրան անդրադառնալու կարգով, այն գրականություն եւ հարակից հարցեր վերնագրով արդեն վաղուց կար ֆորումում, ես ուղղակի նոր եմ մտել ֆորում:

Աննա Բարսեղյան-Utopiana

Վահան իշխանյան
հինգշաբթի, 09:51, 5 հունիս, 2003
գրականություն եւ հարակից հարց

հարգելի աննա, չի հասկացել որ դու ցիտատ ես բերել, քանի որ խոսքը անմիջապես ցիտատից հետո էր սկսվում: կրոնականության մասին գրել էին հարութեն ու սոնան մի ամիս առաջ: ցիտատը որ կարդացի, կարծեցի նույն տեսակետը եւս մեկն էլ է գրել: Կներես:

քո տեսակետի հետ, որ «Ազգային գրականությունը բնորոշ է 18-19-րդ դարի իդեալօգիաներին, նկատելի ե Եվրոպական գրականության մեջ եվս» լիովին համամշտ եմ:

միայն մի առարկություն. «ռենուլցիոնիզմ» տերմինը կարծում եմ շռայլություն է այս քննարկման սահմանների մեջ:

Վահան իշխանյան

Գրաքննություն

Վահան իշխանյան
երեքշաբթի, 17:50, 3 հունիս, 2003
գրաքննություն

կարեն ղարսյանի «X կադր/վայրկյան» գիրքը (բաղկացած է վեպից եւ այլ տեքստերից) 2 գրահանութ հետ են տվել ու հրաժարվել են վաճառքի համել ոճի, բառապաշտի եւ սեռական նկարագրությունների պատճառով (այդ մասին հոդվածս, որ հրապարակվել է «հայկական ժամանակում» եւ www.armenianow.com -ում տեղադրում են քննարկման մեջ):

առաջարկում են քննարկել գրաքննություն թեման:

Վահան

Աննա Բարսեղյան
չորեքշաբթի, 15:42, 4 հունիս, 2003
գրաքննություն

Վահրամ Մարտիրոսյանը ժամանակին հաղորդաշար ուներ իհարկե քաղաքական գործիչների հետ: հնարավոր չէ ստեղծել մի նոր հաղորդաշար, որը կներկայացնի ամսական կամ ԲԻԱՆՍԱԿԱՆ թե գրական գործեր եվ թե արվեստի, հրավիրելով հեղինակներին, կամ փոքր ակնարկներով խստել գործի, նրա նշանակության մասին եվ այլն.... կարծում

Եմ որ հեռուստացույցը մեծ հեղինակություն է ամեն հայ ընտանիքում եվ դուրս եկող ինֆորմացիան կարող են ազդել տարրուների սկզբում հարցադրման եվ այնուհետ հաղթահարման վրա.

Աննա Բարսեղյան

Վիոլետ Գրիգորյան

շաբաթ, 23:08, 7 հունիս, 2003

Արդեն նկատվում է, որ շուկայի շունչը հայ գրողին էլ է հասել: Գրքի գովազդից բացի ոմանք նաև տեղական մասշտաբի սկանդալիկներ ու արիեստական «դեֆիցիտ» էլ են սարքում, վաճառքի «ուեկորդային» ցուցանիշներ կովացնում: Տեսնելով, որ համարձակությունը գիրքն օժտում է «որակի նշանով», որոշ գրողներ սկսել են թափով սուր ճոճել, բայց... հատուկենտ, անշառ բաների դեմ, օրինակ, կամ վաղուց մերած-հառնած ու նույնիսկ համբարձված Յիսոս Քրիստոսի, կամ՝ հայ գրականության մասին անգամ չլսած, բանից բնիսարար միջազգային դիտորդների ու Բուշի դեմ: Անգամ ննան ծամծնված թեմաների մեջ էլ մեր քաջնազարները խիստ զիջում են նույնիսկ երկու դարվա ողորմածիկ Լեռ Տաքսիլին ու ժամանակակից Զորջ Մայքլին (Ակատի ունեն քլիփը): Սուր են ճոճում նաև նախկին (միշտ՝ նախկին) իշխանությունների դեմ: Առաջարեն գրողները սուր են ճոճում նաև ռարիզների, գեղցիների, հետամնացների դեմ: Սուր ճոճելիս, բնականաբար, օգտագործում են որոշակի բառապաշար, հատկապես, քֆուր-քյաֆար: Նման գրքեր այսօր կարելի է գտնել մեր գրախանությներում...

Դուրս է գալիս, որ միայն սեռական բառերի ու պատկերների պատճառով չէ, որ որոշ գրքեր չեն հավանում շատերը կամ նույնիսկ գրախանությները վաճառքից հանում են (օրինակ, Կարեն Ղարսյանինը): Ավելի խորը պատճառը հայերենի հանդեպ արմատացած պահպանողական վերաբերմունքն է, վայ-վայ, ոսկեղենիկի խաթրին կաչող չինի: Ուկեղենիկով խոսելն էլ ավելորդ է, նրանով պիտի միայն աղոթել:

Յանձայն եմ Աննայի հետ, որ պետք է հեռուստատեսության պես հզոր ուժը օգտագործել: Բայց ես օգտակար եմ համարում ոչ միայն արվեստի գործերի կամ գրքերի մասին էլիտար հաղորդաշարը, այլ նաև էնպիսի հաղորդումներ, որոնք պարզ, հանրամատչելի, կյանքային ու կենցաղային օրինակներով ուսուցանեին մարդու ազատության անհրաժեշտությունը: Որ մարդկա ընկալեն՝ իրենց չիավանած գիրքը պետք չէ անիծել, շարտել, կարող է ինչ-որ մեկն ուզում է կարդալ: Թող տասնինգ հազար մարդ թունայան ու Պուշկին կարդան, մի հոգի՝ կարեն Ղարսյան: Ինչ-որ մի հարցում էլ կարող են իրենք հայտնվել փոքրամասնության մեջ, դու՞ր կգա, որ իրենց էլ անիծեն: Տեսնու՞ն եք, ինչ պարզ շարադրեցի, եթե շարաթվա մեջ երկու նման հաղորդումներ լինեն, որ պարզ, իրական օրինակների վրա ցույց տան ազատության օգտակարությունը, մեր հասարակությունն էլ կփոխվի:

Շատ երկար խոսեցի, դաժեւ Մարինեց անցա, կարծ եմ կապում՝ իրավիրելով մեր լրագրողների, հատկապես հեռուստալրագրողների ուշադրությունը:

Վիոլետ

Վահան իշխանյան

երկուշաբթի, 16:38, 9 հունիս, 2003

Ֆրանսիացի փիլիսոփա Ժակ Ռերիդան «կրքեր» էսսեում գրում է. «չկա դեմոկրատիա առանց գրականության, չկա գրականություն առանց դեմոկրատիայի... եւ ամեն անգամ երբ որեւէ գրական ստեղծագործություն ենթարկվում է գրաքննության, դեմոկրատիային վտանգ է սպառնում»: (Ներքեւում դրել եմ եղ էսսեի թարգմանությունը): Յայաստանում դեմոկրատիային տարրեր վտանգներ սպառնացել են ու քանդել: Իինա երկրի քաղաքական կառույցն էլ ոչ թե դեմոկրատական է, այլ՝ պատրանքային դեմոկրատական (ընտրությունների պատրանք, խոսքի ազատության պատրանք):

Դեմոկրատիան քանդողներից մեկը գրաքննությունն է մամուլի նկատմամբ (Ա1+ հեռուստատեսության փակելը, մյուս հեռուստատեսությունները վերահսկողության տակ առնելը գրաքննության ձեւեր են): Գրականության գրաքննության դեպքեր ես չեմ հիշում:

Սակայն եթե գրականությունը չի ենթարկվում գրաքննության, սխալ կլինի եզրակացնել՝ ցենզուրա չկա, ուրեմն դեմոկրատիա կա: Գրաքննության բացակայությունը այլ եզրակացություն է ենթադրում՝ եթե գրաքննություն չկա, ուրեմն գրականություն չկա: Եւ իսկապես չկա:

Յայաստանում գրականությունն էլ, դեմոկրատիան էլ չկան, երկուսն էլ պատրանքային են: մի տարբերությամբ՝

դեմոկրատիայի պատրաճը ընդդիմությունը ճղել է, իսկ գրականության պատրաճի շղարշը անվնաս մնում է: Վիլուետը հակադրության մեջ է գցում դարսյանին ու մյուս գրողներին, որոնք «քֆուր-քյաֆարով» են գրում: Ես էլ կուտը վերցնում են ու թեման շարունակում (հ՞նչու կուտը. որովհետեւ ով ինչպես ուզում է, թող գրի, բայց որեւէ մեկը չորոշի՝ ինչ տպվի, ինչ չտպվի, ինչ վաճառվի, ինչ չվաճառվի):

2-րդ գրախանութուն աշխատակիցը ինձ ասում է. «Վահրամ սահակյանի վեպում էլ կան հայույանքներ: բայց իմաստ կա: Դարսյանի գրում իմաստ չկա»: Ու որոշում է՝ «հմաստ ունեցողը» վաճառի, «չունեցողը» չվաճառի: Սովորի ժամանակ արգելված էին ոչ միայն հակասովետական գրքերը: Գրաքննությունը մերժում էր կան նույնիսկ գրաքննության չեղ հասնում ոչ միայն հակասովետական, այլև ոչ սովետական գրականությունը. որվլատովը, լիմոնվը, սակալովը, վենեդիկու երոֆենը եւ շատ ուրիշներ հակասովետական չեին, ինչպես սոլժենիցին էր, այլ ոչ սովետական, այսինքն, նրանց գրածները «հմաստ չունեին»:

Գրաքննությունը գրականությունը մերժում է ոչ միայն եւ ոչ էնքան ոչ ցենզուրային բառապաշտի պատճառով: Էսօր տպվում եւ վաճառի են հանվում գրքեր, որոնց մեջ հատուկենտ, բայց կարելի է գտնել «Վատ բառեր»: բայց էդ գրքերը «հմաստ ունեն», «հայկական են» (նախկինում՝ սովետական) վիլուետի ասած՝ սուր են ճոճում բուշի դեմ ու միջազգային դիտորդների դեմ, նախկին իշխանությունների դեմ, ռարիզների, գեղցիների, հետամնացների դեմ: Այսինքն սուր են ճոճում ճնճելիի, անվտանգի դեմ, բաներ, որ մեր հասարակությանը չեն առնչվում: Սակայն նրանց դեմ «Վատ բառերով» գրած տեքստերը նաեւ իշխանության պատրաճը են ստեղծում, հետեւաբար՝ նաեւ գրականության, (կարող են սուր ճնճելուց բացի այլ օրինակներ բերել պատրաճային գրականության, բայց էս քննարկման մեջ չեմ ուզում հակադրություններ շատ սրել): յուրաքանչյուր ոչ ցենզուրային արտահայտություն կամ բաց սեռական տեսարան շատերի համար անընդունելի կարող է լինել: բայց էդ դժգոհությունները սուր ճոճիզմի դեմ հեշտությամբ կոտրվում են, քանի որ էդ գրողները հենարան ունեն, պսեվդոազատականությունը, որ հայ քաղենիության մնածողությունն է՝ անվնաս-ազատական: Կարեն դարսյանը ակամա պրովլեմացիայի ենթարկեց գրաքննությունը: Եւ պարզեց, որ գրականությունը հայաստանում գրաքննելի է: այդպես կրկին ակամա պրովլեմացիա արեց գրաքննություն լինել չլինելը նաեւ վիլուետը 2001 թվին գրական թերթում: Ու գրողների մի բազմություն տեռոր սկսեց նրա դեմ, նրանց բողոքները պեղկինենտի սեղամին հասան: գրաքննություն ահարեւկչության ճանապարհով: Եւ վիլուետը եւ կարենը, կրկնում են, ակամա արեցին պրովլոցիան, մտածված չեր: Նրանք չգիտեին, թե ինչ հարձակում կլինի իրենց դեմ:

Ու եթե կա հայաստանում գրականություն, ապա են չափով, ինչ չափով գրաքննության է ենթարկվում, այսինքն, մի երկու գրախանութուն չվաճառելու մակարդակին, այսինքն, համարյա չկա (կամ համարյա կա): գրականության պատրաճի շղարշը աննկատելի, փոքրիկ մի երկու անցք է տվել:

Ժակ դերիդայի «կրքեր» էսեեց այս հատվածը թարգմանել են ռուսերենից, շատ չեմ մշակել ու կարող են 1-2 անճշտություններ լինել, կարեւորը միտքն ա

Հաճախ ինձ անհրաժեշտ է լինում այնել, որ տարրերակի գրականությունը թերեւ ժամրի արծակից (թելետրիստիկա) կամ բանաստեղծությունից: Գրականությունը հանդիսանում է ժամանակակից հայտնագործություն, այս մտնում է պայմանագրերի եւ ինստիտուտների հիմնական մասի մեջ, որոնք իրենց ուժով ապահովում են նրա իրավունքը՝ ասել սկզբունքորեն ամեն ինչ: Գրականությունը, այսպիսով, իր ճակատագիրը կապում է որոշ ոչգրաքննելիության, դեմոկրատական ազատության տարածության հետ (տպագրության ազատություն, տեսակետի ազատություն եւ այլն): Զեկա դեմոկրատիա առանց գրականության, չկա գրականություն առանց դեմոկրատիայի: Միշտ էլ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որի ժամանակ ոչ մեկի, ոչ մյուսի պահանջարկը չկա, եւ ամեն հասարակարգ հանգիստ յուած է գնում առանց նրանց: Լիովին հնարավոր է չգիտել ոչ մեկը, ոչ մյուսը որպես բացարձակ բարիք եւ անկապտելի իրավունք: Բայց ոչ մի իրադրության մեջ նրանց հնարավոր չի բաժանել: Ոչ մի հետազոտություն ի վիճակի չէ դա անել: Եւ ամեն անզամ, երբ որեւէ գրական ստեղծագործություն ենթարկվում է գրաքննության, դեմոկրատիային վտանգ է սպառնում, – սրա հետ չի կարելի չհամաձայնել: Գրականության հնարավորությունները, հասարակության կողմից նրան տրված իրավունքը, նրա նկատմամբ տեռորից եւ կասկածանքից իրաժարվելը, – այս բոլորը ուղեկցվում է քաղաքական իմաստով ցանկացած հարց դնելու անսահմանափակ իրավունքով, դոգմատիզմի որեւէ արտահայտության չվստահելով, քննարկելով բոլոր նախապայմանային դատողությունները անկախ նրանց, վերաբերում են դրանք բարոյականությանը կամ պատասխանատվությանը քաղաքականությանը:

Բայց այդ թույլտվությունը՝ ասել ամեն ինչ եւ ամեն ինչի մասին, պարադոքսալ կերպով հեղինակի վրայից հանում է որեւէ մեկի նկատմամբ պատասխանատվությունը, նույնիսկ ինքն իր նկատմամբ, այս բանի համար, որ իր ստեղծագործության մեջ ասում են կամ անում հերոսները կամ գործող անձինք, այսինքն՝ այն բանի համար, որ հեղինակը թույլ է տվել իրեն գրել: Այդ «ձայները» խոսում են, թույլ են տալիս կամ ստիպում են այցելել նույնիսկ այն գրական ստեղծագործությունների մեջ, որ չկան հերոսներ եւ գործող անձինք: Այդ ազատությունը՝ ասել ամեն ինչ եւ ամեն ինչի մասին («Սուրբեկտի» հիմքերապատասխանատվության իմաստով, որ ուղեկցում է դեմոկրատիային), ընդունում է իրավունքը՝ միանշանակ չպատասխանել այնտեղ, որտեղ խոսք անգամ չի կարող լինել պատասխան տալու, պատասխանելու հնարավորության, կամ պատասխանելու պարտավորության մասին: Այդ չպատասխանը ունի առավել բնական (նախնական) եւ բարնված բնույթ, քան հնարավորության եւ պարտավորության կատեգորիաները, քանի որ ներկայացնում է տարասեռային վերաբերմունք նրանց նկատմամբ: Այստեղ մենք գործ ունենք դեմոկրատիայի չափազանցված պայմանի հետ, որը թվում է հակասության մեջ է որոշակի պատճականորեն սահմանափակ այդ նույն՝ դեմոկրատիայի կոնցեպցիայի հետ, կոնցեպցիա, որ կապում է նրան սուբյեկտ հասկացության հետ՝ կանխատեսելի, հաշվարկելի, պոտենցիալ մեղադրյալ, պատասխանատու եւ պարտավոր պատասխանել եւ ասել ծշմարտությունը, պարտավոր վկայել օրենքի առաջ՝ համապատասխան երդում տալով («միայն ծշմարտությունը, ոչինչ բացի ծշմարտությունից»), պարտավոր բացահայտել գաղտնիքը, բացի մի քանի բացառությունների՝ սահմանված եւ նախատեսված օրենքով (խոստովանություն, բժշկի, հոգեվերլուծողի, փաստաբանի մասնագիտական գաղտնիք, պետական անվտանգության գաղտնիք կամ պետական գաղտնիք ընդհանրապես, արտադրական գաղտնիք կամ արտադրության գաղտնիք եւ այլն): Այս հակասությունը որոշում է նաև ապագա դեմոկրատիաների խնդիրները (մտածողության խնդիրները, նաև տեսության եւ գործնականի խնդիրները):

Վահան իշխանյան

Աննա Բարսեղյան

Երեցաբբի, 02:07, 10 հունիս, 2003

<Որ ասում են <ինքն իրա շուրջից հուշտ է լինում> դա հայ էլիտային է վերաբերվում, որին հավանաբար ծանոթ է Զ.Մազոյսը:

և կարծես մտքում համարում է թէ 68-ի սեբսուալ հեղափոխությանը մասնակից է եղել նաեւ իր ժորովուրդը, ինչպես որ առաջին ու երկրորդ համաշխարհայիններին, ու երր հանկարծ այդ ժորովուրդը ցույց է տալիս իր իրական գիտակցությունը,,, իհարկե էլիտան

<հուշտ է լինում>

Աննա

Վիոլետ Գրիգորյան

Երեցաբբի, 19:58, 10 հունիս, 2003

Յարգելի Վահան եւ Աննա,

անդրադառնում են երկուսիդ նամակին: Յարգելի Վահան, իմ նամակում ոչ մի կուտ էլ չկա, բայց եթե դու կուտ ես կերել՝ քո ինանալիքն է: Ես կուտ չեմ գցել, քանի որ առհասարակ չեմ վիճարկում որեւէ գորի տպվել-չտպվելու հարցը: Չնայած կարծիք հայտնելու իրավունք ունեմ, բայց նույնիսկ խոսք կարծիք չէ որեւէ գորի մասին, այլ գրական դաշտը բնութագրելու փորձ, որն անելու համար ստպված էի հենվել որոշ օրինակների վրա: Մնացած հարցերում համաձայն են քո եւ Շերիդայի հետ:

Յինա ուզում են խոսել մի այլ խնդիրի մասին. Աննան գրում է.

« Որ ասում են ինքն իրա շուրջից հուշտ է լինում դա հայ էլիտային է վերաբերվում ... կարծես մտքում համարում է թէ 68-ի սեբսուալ հեղափոխությանը մասնակից է եղել նաեւ իր ժորովուրդը, ինչպես որ առաջին ու երկրորդ համաշխարհայիններին, ու երր հանկարծ այդ ժորովուրդը ցույց է տալիս իր իրական գիտակցությունը,,, իհարկե էլիտան հուշտ է լինում »:

Ենթադրում են Աննայի եզրակացությունը՝ որ հայ արվեստագետը բացարձակ գաղափար չունի, թե ինչ հասարակության մեջ է ապրում: Սակայն հաճախ ոչ թե հասարակությունն է ընդվզում արվեստագետի դեմ (հայ գրող-արվեստագետին թվում է, թե հասարակությունը ուշի-ուշով հետեւում է իր ստեղծագործական երկունքին ու

62

պրոդյուկտին), այլ ճիշտ հակառակը՝ իր ասած էլիտան, գրական էլիտան: Ես համաձայն են Վահանի հետ, որ հայ արվեստագետը մեծ մասամբ քաղքենի է եւ պսեղոպազատական: Իսկ մեր հասարակության որակն ու տեսակը հենց հայ արվեստագետ – մտավորականի աշխատանքի անպտղությունն են ապացուցում: Մի անգամ արդեն գրել են՝ ֆրանսիական շոֆերների էսօրվա գործադրությունը, առհասարակ, ֆրանսիական հասարակության ազատամտությունը ֆրանսիական արվեստի եւ նշակույթի արդյունքն է:

Ես իհարկե չեմ կարծում, որ սեռական հեղափոխությունը միանգամից եւ մեկընդմիշտ փոխել է արեւանտյան մարդուն: Բազմաթիվ արեւանտյան կինոներում, էականողիկ տեքստերում լսած կիխնեք, թե ինչպես են ծաղրում հոմոսեքսուալիստին, հրաժարվում անուսանալ «ակտիվ» անցյալով կանանց հետ եւ այլն: Ամենուրեք կան տարբեր մտածողությամբ մարդիկ: Ուղղակի սեռական հեղափոխության շնորհիվ արեւանութքում վերացել է հոմոսեքսուալիստին քրեական հոդվածով հետապնդելու, ոչ կույս հարսնացուին հոր տուն ետ ուղարկելու պրակտիկան: Ընդամենը մի քանի տարի առաջ նկարված «Ֆիլատելֆիա» ֆիլմում Թոն Յանքսը քյալլա էր տալիս իր մարմնավորած գոմիկ հերոսի իրավունքների համար, իսկ նրա փաստաբանին բարում ծաղրում ու գոմիկ էին անվանում, ինչ է թե՝ գոմիկի աղվակատ է: Սեռական հեղափոխությունը ոչ թե հիմնովին հեղափոխել է մարդու մտածողությունը, ոչ թե հաղթել է հետադիմությանը, այլ հաղթել է իրավական իմաստով: Որ, ինչ խոսք, շատ կարեւոր է: Սեր հասարակության մեջ սեռական հեղափոխության եւ, առհասարակ, մարդու ազատության խնդիրները արվեստագետներին լրջորեն չեն հետաքրքրում, այդ հարցերով քչից-շատից զբաղվում են հասարակական մի երկու կազմակերպություն կամ մի քանի դեպուտատ՝ մասամբ պաշտոնի բերումնվ, մասամբ գրանթի սիրույն: Արեւանտյան ինտելեկտուալները եւ արվեստագետները հասարակությանը կրթում-դաստիարակում են, մերոնք կամ իրենք կրթվել-դաստիարակվելու ենթակա են, կամ նախընտրում են եվրոպական կառույցներին ինտեգրվել... անձամբ: Սեր հասարակության արատները մեր մտավորականության արատներն են, կարելի է ասույթը հարմարեցնել. «Դայ արվեստագետը արժանի է հայ հասարակությանը»:

Վիոլետ

Աննա Բարսեղյան

Հորեցաբերի, 22:18, 10 հունիս, 2003

Hamazain tchem vor Սեր հասարակության մեջ սեռական հեղափոխության եւ, առհասարակ, մարդու ազատության խնդիրները արվեստագետներին լրջորեն չեն հետաքրքրում, Arvestagethnere tchen dadarum pttvel aid temaneri churj, mi ban e pakasum, intchpes durs gal arvestagethneri shrjanakitz, hentz ais problemn el marmnavorum er naxkin namaks. Erb arvestagethnere tzutzahandesner ein anum hamenain deps grornere mi mase zbarvaz ein qaraqakan karieraiov.

Sirov

Anna

Վիոլետ Գրիգորյան

Հորեցաբերի, 02:32, 11 հունիս, 2003

Ես երեւի չեմ կարողացել մտքերս հատակ արտահայտել, էնպես,որ նույնիսկ թվացել է, թե ես գրողներին ու արվեստագետներին զատում են, ընդ որում, գրողներին՝ շահեկանորեն: Կրկնեն ֆորումի նշանաբանը, որ Սոնիայի հորինածն է՝ բոլորն էլ նույն զագն են:

Էլիտայի մասին էի ասեմ՝ առհասարակ համաձայն չեմ, թե հայ էլիտան գաղափար չունի, թե ինչ հասարակության մեջ է ապրում: Ես պուճուր երկրում, որ սադ թիթ-թիթ են ապրում, ուղղակի վարիհանտ չկա տեղյակ չինելու: Դետո սաղիս ընտանիքներում էլ էդ հասարակական ըմբռնումները մի քիչ ավել-պակաս արտահայտվում են, ին այլ մոլորակներից չենք եկել, որ խաբար չլինենք: Ոմանք ուղղակի ինքնահաստատվում են իրենց եւ հասարակության հակադրությունն ընդգծելով՝ ամբոխն ու հանճարը:

Ենպես որ՝ ես խոստովանում եմ – գոնեն իմ ծնողները սեռական հեղափոխությանը չեն մասնակցել ու, պատկերացրեք, չեմ էլ ուզում նրանց տոգորել էդ հեղափոխականությամբ, որովհետեւ լավագույն ելքի դեպքում անգամ, որ, ասենք ինչ-որ հրաշքով, համոզվեն էդ լավ բան ա՝ պիտի գիտակցեն իրենց տանու տված, իզուր կորցրած կյանքը: Ես իմ գործը չեմ համարում հասարակության հետադիմական ըմբռնումները փոխելը, այլ էդ ըմբռնումներից ազատագրվածների հետ էդ մասին խոսելը: Ավելի պարզ ասեմ՝ ես չեմ ուզում իմ ծնողներին փոխել, ես ուզում եմ իմ

փոխվելը հասկանել, գիտակցել, վերլուծել:

Ես կարծում եմ, որ ամեն հեղափոխություն մարդուն ավելի երջանիկ դարձնելու հնարավորությունն է փնտրում. ին ծնողներին սեռական հեղափոխությունը այլևս երջանիկ չի դարձնի: Բայց երեսպաշտությանք իբրև թե հասարակական ընթանումները, այսինքն՝ մեր ծնողների բարոյական ընթանումները մեզնից պաշտպանող ու դրանով ինքնահաստատվող մտավորականների դեմ կռիվ տալ արժե: Արվեստագետի գործն էլ, էպատաճի մասով (կրկնում եմ՝ էպատաճի մասով), ուղղվելու է երեսպաշտ մտավորականությանը, քաղքենի ու քաղքենացման եզրին օրինաչափորեն ամեն պահ հայտնվելու վտանգին ենթակա էլիտային, ոչ թե խեղճ ժողովրդին:

Վիոլետ

Արտակ Ալեքսանյան

Երեքշաբթի, 23:30, 10 հունիս, 2003

գրել հակիրծ

Ես հասկանում եմ, որ սա գրական կամ գրականագիրական քննարկում է, բայց «գրվում է» չափազանց երկար, այնքան երկար, որ հոգնում ես քեզ ուղղված պատասխանը կարդալուց: Առաջարկում եմ ընդունել մի ծեւաչափ բոլորի համար՝ մեկ պարբերություն, միշտ 10 նախադասություն / պարզ համառոտ / կամ մի այլ: Ինքներդ որոշեք: Մյուս թեմաներին կմիանամ ավելի ուշ

Արտակ

Մարինե Պետրոսյան

չորեքշաբթի, 13:27, 11 հունիս, 2003

Հեղափոխության մասին

ԴԵՍՈԿՐԱՏԱԿԱՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ էս իմ նամակը երկար առ պարզ համառոտ չի գրած, եթե պարզիամառութասեր եք, իզուր չսկսեք կարդալ, որ չհոգնեք:

Համաձայն չեմ քեզ հետ, Վահան, գրաքննությունը կապ չունի, հեղափոխման կարիք ունեմ՝ հասարակական ընթանումները: Վահանը դեմոկրատիայից ա խոսում ու U1+ ի փակման հետ զուգահեռներ անցկացնում, դու էլ, Վիոլետ, գրական «Էլիտայի» դեմ քո ջղայնությունն ես պարպում, ու երկուսդ էլ խճում եք հարցը: Են մտավորականը, որի դեմ դու էլքան զայրացած ես, պարզապես պահպանողական մտավորականն ա, ինքը գտնում ա, որ հայ ժողովրդի մտածելակերպը («ազգային ավանդույթները») փոխել պետք չի, հակառակը՝ պաշտպանել ա պետք տարբեր ոտնձգություններից, այդ թվում՝ քեզանից, որովհետեւ դու, Վիոլետ ջան, հեղափոխական մտավորականն ես: Ու եթե ինքը քո դեմ ա պայքարում, հեզ պարտադիր չի, որ դու էլ քո էներգիան իրա դեմ վատնես: Դու ավելի լավ ա ժողովրդին հեղափոխիր: Յանկարծ չասես՝ ժողովուրդը առանց էլ հեղափոխական ա: Ժողովուրդը քաղաքականապես հեղափոխական ա, բայց մտավոր առումով հեղափոխված չի: Խսկ առանց մտավոր հեղափոխության՝ քաղաքական հեղափոխությունը Յայաստանում մի անգամ արդեն ձախողվել առ հա ձախողվելու ա: Էդ մտավոր հեղափոխությունն էլ դու ես անելու (մի երկու օգնող կգտնվի): Բայց դու Վահանին մի լսի, ու ամբողջ հույսդ դեմոկրատիայի վրա մի դիր, թե չէ քեզ կարող ա, Սոկրատի նման, դեմոկրատական ճանապարհով մի բաժակ թույն տան: Ես կատակ եմ անում, չվախենաս, ուզում եմ ասեմ՝ որ հեղափոխությունդ կարողանաս իրագործել, խնդիրը հստակ ծեւակերպի ու խնդրի դժվարությունը նախորդը պատկերացրու. դու հո գիտե՞ս, որ ժողովուրդն առայժմ քո կողմը չի:

Մարինե

Վահան իշխանյան

հինգշաբթի, 14:12, 12 հունիս, 2003

մտավորական եւ էլիտա

Կարեւոր է դաշնում, որ քննարկման մասնակիցների համար տերմիններն ու հասկացությունները նմանատիպ իմաստ ունենան: Ակզրի համար 2 բառ հասկանանք՝ էլիտա եւ մտավորական: Վիոլետը գրում է «Արեւմտյան ինտելեկտուալները եւ արվեստագետները հասարակությանը կրթում-դաստիարակում են, մերոնք կամ իրենք կրթվել-դաստիարակելու ենթակա են, կամ նախընտրում են ելլուպական կառույցներին ինտեգրվել... անձանք»: Կարծում են

64

կրության հարցերով պիտի զբաղվի գիտության եւ կրթության նախարարությունը, որ համաձայն եմ, շատ վատ է եդ գործը անում: իսկ մտավորականը ամեն մեկը իր բնագավառում պիտի փորձի բացահայտել անհայտը, երեւույթները, օրինաչափությունները եւ այլն, որը կարող է մեկ ուրիշի համար նույնիսկ հակադաստիարակչական լինել, օրինակ կլոնավորումը (մեկ այլ տեսակետ էլ կա, որ մտավորական է ցանկացած մարդ, որը ֆիզիկական աշխատանքով չի զբաղվում: Էս տեսակետի հետ էլ են համաձայն): ինչքան հայ մտավորականները զբաղվեն ազգ կրթելով էնքան քարի համը դուս կգա (հետո էլ զբաղվում են ազգ դեկավարելով, ու քարը ջրի հետսից էլ չի հեռանում): ուրիշ բան, եթե մտավորականը հրապարակայնորեն ներկայացնի հասարակական խնդիրների վերաբերյալ իր տեսակետները, որի արդյունքով որեւէ մեկը կը դիմում էլ չի կրթվի, այլ հաղո՞ւ: կրթությունն էլ ամեն մեկը մի կերպ է պատկերացնում՝ դաշնակի համար կրթված մարդը դաշնակն է, որ բյուրոյի հանձնարարությանք առանց ձեռքը դողալու կսպանի ցանկացած մարդու, ու կեղծի ընտրությունները մեկ ուրիշի համար՝ օրինակ հայտնի մտավորական հենրիկ հովհաննիսյանի համար որբերտ քչարյանը, որին ըստ նրա ավելի կսպագեր ամն պրեզիդենտ լինելը:

հիմա էլիտան. աննան ասում է «...և կարծես մտքում համարում է թէ 68-ի սերուալ հեղափոխությանը մասնակից է եղել նաև իր ժորովուրդը, ինչպես որ առաջին ու երկրորդ համաշխարհայիններին, ու երր հանկարծ այդ ժորովուրդը ցույց է տալիս իր իրական գիտակցությունը,,, իհարկե էլիտան «հուշտ է լինում»: աննան էլիտա է համարում ինչքան հասկանում եմ, արեւմտյան ազատական գաղափարներն ընդունող հայ արվեստագետներին: մեկ ուրիշը ազգի էլիտա է համարում դարաբաղյան պատերազմում զոհվածներին, էլիտայի մեջ տեսնում է զոհաբերվելու կարողությունը: լսել եմ այսպիսի արտահայտություն «ազգի էլիտան առաջինն է դուրս գալիս ամենավտանգավոր գիծ»: հայերեն էլիտա բառը թարգմանում են ընտրախավը: էլիտա գաղափարը շատերին է զայթակղում եւ շատերն են ուզում էլիտայի մեջ լինել՝ լինել ընտրված: ժամանակին հաճախ են լսել «ուզում են մի էլիտար ժուռնալ տպել», տպում ես ու դառնում էլիտա: արեւմտյան արժեքներ ես ընդունում հետը պերֆորմանս անում ու դառնում էլիտա: Ես ուզում են մեջ բերել փիլիսոփա երկի աթայանի խոսքը, որ կարծում են ճշգրիտ է բնութագրում էլիտան «էլիտան, երբ գիտակցում է իր էլիտա լինելը, դադարում է լինել էլիտա»:

վիոլետն ու աննան էլիտա ու մտավորական հասկացությունները նույնացնում են եւ էլիտային ու մտավորականությանը տալիս առանձնահատուկ շնորհներ՝ կրթելու, անդունք հեռացնելու եւ այլն: մյուս մահկանացուները քաշվան:

Էլ շնորհները վաղուց են տրվում հայաստանում, որի ձեռն էլ քարն ենք ընկել. որեւէ մեկը դառնում է մտավորական, մտնում է էլիտայի մեջ, ունենում կապիտալ՝ շնորհ (էլի հենրիկ հովհաննիսյանից՝ մտավորականը մտքի սեփականություն ունեցողն է) եւ էլ կապիտալով, էլ սեփականությամբ իշխանությունների հետ քազար է անում, կապիտալը ծախսում է իշխանությանը սատարելու վրա, տեղը ստանում բյուջեից իր ծրագրերի ֆինանսավորում, բնակարան, տարածք՝ գաղոնի վրա կաֆեի, խանութի կամ գալերեայի տարածք, զավակների համար անհետապնդելի բիզնես եւ այլն: մտավորականների մյուս մասն էլ, ով չի խորդում իրեն իշխանության համար, կապիտալը ծախսում է գրանտներ ստանալու վրա՝ նախկին կոմսոմոլի պրոպագանիստը դառնում է խոսքի ազատության քարոզիչ ու 5 տարում մի միլիոն դոլար ջերումդ, ինչ տարբերություն, թե քարոզադի ինչ է, կարեւոր փող տան:

Էնպես որ մտավորական լինելը ու էլիտայի մեջ մտնելը շահավետ բիզնես է:

վահան իշխանյան

Աննա Բարսեղյան

հինգշաբթի, 16:35, 12 հունիս, 2003

մտավորական եւ էլիտա

es elita i nkti unei ais «էլիտան, երբ գիտակցում է իր էլիտա լինելը, դադարում է լինել էլիտա»: Hakarak depqum kasei avangard.

Anna

վահան իշխանյան

ուրբաթ, 23:55, 13 հունիս, 2003

պատասխան Մարինեին

մենք գրաքննությունը տարբեր կերպ ենք հասկանում: քեզ համար գրաքննություն է, երբ պետական ինչ-որ մարմին որոշում է որ գիրքը տպվի, որը չտպվի, կամ տպվելուց հետո որը ծախսվի, որը ոչ: պետական գրաքննությունը

գրաքննության ամենաբացահայտ եղանակներից է: գրաքննության սահմանները ավելի լայն եմ վերցնում. երբ հեղինակը հալածվում է գրած տողի համար ու պաշտպանություն չի գտնում, ինձ համար գրաքննություն՝ հասարակական գրաքննություն, երբ գրախանութիւ վարիչը գիրքը վաճառքի չի հանում, քանի որ իր ճաշակով չի, ես գրաքննություն եմ համարում՝ լոկալ՝ գրախանությային մակարդակի, երբ հաճախորդները բողոքում են որեւէ գրքի դեմ ու եդ բողոքի հետեւանքով գիրքը հանվում է վաճառքից, ելի գրաքննություն է ինձ համար: Չոկի՞՞ր: գրաքննություն է, մանավանդ, երբ ընթերցողների բողոքից, գրողների սադրանքներից ու «մատնություններից» պաշտպանված չի հեղինակը: գրողեն մահարու այրվող այգեստանները տապանեց, չէ՞ 66 թվին, ոչ որ չարգելեց, չէ՞ գլավլիստով անցել էր, չէ՞ բայց եդ խեղճ մարդուն էնքան հալածեցին, որ ինքը գիրքը փոխեց, հարկադրված գրաքննությամ ենթարկեց (մահարու ծեռօրվ գրաքննություն արեց հասարակությունը, ավելի որոշակի, մասնավորապես գրողները), հարմարեցրեց հասարակության ճաշակին ու մեռավ: Ել գրաքննությունը պողով-պոջով ա լինում: (վիոլետը նույնը արեց ավելի փոքր մասշտարում մի նախրի դառնամ ... -ը փոխեց, դարձրեց՝ մի տեռորիստ դառնամ ես է...): Խօր գրողների միության քարտուղար հովիկ հովեյանը կամ բանաստեղծ արմեն մարտիրոսյանը մի քիչ ավելի հարօգեն նույնը կրեեն վիոլետի ու կարենի գլխին: ու բացառված չի, որ հարօգեն: ու եդ հարօգելու վտանգը, արդեն եղած ահաբեկչությունը, ու գլխին կախվելիքը, երբ մարդ գգում է, որ պաշտպանված չի, երբ ազատ մտածում է ու գրում, նշանակում է դեմոկրատիա չկա: քո պատկերացումները դեմոկրատիայի մասին սահմանափակ են, երեւի միայն համարում ես դեմոկրատիա ընտրելու ու ընտրվելու ազատությունը: մտցրու մեջը փոքրամասնության իրավունքը, մինչեւ առանձին ամհատի, մենակ, խմբի մեջ չմտնող, որն իրավունք ունի ազատ մտածել եւ ազատորեն ստեղծագործել, մասնավորապես գրական տեքստեր գրել ու քո դեմոկրատիան մի քիչ ավելի կամքրոջանան: Եթե մենքին ամխոչընդոտ ահաբեկում են գրած տողի համար, մի ուրիշն էլ կվախենա «անհանդուրժելին» մտքով անցկացնելը, միտքը կապանքներից ազատելուց: իսկ երբ մարդիկ վախենում են մտածել, ընդ որում այդպիսիները շատ են հայաստանում (օրինակ, երբ հայ բանաստեղծները սեռական ձգտումները թաքցնում են աստղագարդ երկնքի նկարագրություններով, իսկ ընտանիք պահելու պրոբլեմը խաչքարների նախշերով, ազատ մտածելու վախից է), ուրեմն երկիրդ դեմոկրատական չի: մտքով անցկացնել՝ ահա թե ինչ է տալիս դեմոկրատիան: գրականությանը, ահա այն միակ տեղին դեմոկրատական երկրում, ուր կարող ես ցինել մտքով անցկացրած (այս թեմայով տեղադրել եմ մեջբերում դերիդայից): մտքով անցկացրածը գրականության մեջ լցնելու ազատությունը հնարավորություն է տալիս մարդկանց, ոչ գրողներին նույնպես, մտքով անցկացնել անանցկացնելին, ու եդ ազատության արդյունքում արեւմուտքում, հատկապես ամերիկայում, սրբաց զարգացան նոր տեխնոլոգիաները: մարդիկ մտքներով անցկացրին, պատկերացրեցին այլ իրականություններ ու ստեղծեցին, ինչպես վերտուալ իրականությունը: մարդու մտքով անցկացնելիքը, երեւակայությունը անսահման են, ու իրագործնան հնարավորություններն էլ անսահման, միայն անհրաժեշտ է ազատություն:

հայաստանում չկա մտքով անցկացնելու ու եդ անցկացրածը գրականություն դարձնելու ազատությունը, մարդկանց ուղղեները բանտված են տարբուներով, վախով, գրուզիրիլով: դրա համար էլ հայաստանը բանտ է: ուղղեների ու մտքի բանտ: ի՞նչ է մնում անել գրողին. կամ(1.) պիտի մտքիդ ազատություն չտաս, մտքովդ չանցկացնես, կամ(2.) մտքով անցկացնես, բայց չգրես, կամ (3.) մտքով անցկացնես գրես, բայց չտպես, կամ (4ա.) մտքով անցկացնես տպես ու հալածանքի տակ ընկճվես ու վախենաս կամ(4բ) պայքարես, կամ(5.) գնաս հայաստանից ու ինչ ուզում ես մտքով անցկացնես, ինչ ուզում ես գրես, ինչ ուզում ես տպես: ամենաբանական երկրից գնալն է. ինչ իմաստ ունի պայքարել ազատության համար, եթե այն կա մեկ այլ երկրում: արեւմուտքում մարդիկ պայքարել են ազատության համար, շատերը կյանք են տվել, քանի որ փախչելու տեղ չեն ունեցել: հիմա կամ շատ փախչելու տեղեր, գրետ տակ վօլոն ոդիշես չելօվեկ:

Բայց բացի հալածողներից ու հալածվողներից միշտ կա նաև մի երրորդ կողմ, որ կասի՝ ոչ մի ցենզուրա էլ չկա, պահպանողականների ու հեղափոխականների կրիվ է:

Վահան իշխանյան

Մարինե Պետրոսյան

շաբաթ, 17:38, 14 հունիս, 2003

Երրորդ կողմի դիտարկումներ

Գրաքննության քո ասած լայն տարրերակը որ վերցնում ենք, Վահան, եդ երեւույթը, որ դու գրաքննություն ես անվանում, գալիս հանգում ա հենց են հասարակական ըմբռնումներին, որոնց փոփոխելու անհրաժեշտության մասին ես խոսում էի: Ես դեմոկրատիա ասելով բոլորովին էլ միայն ազատորեն ընտրել-ընտրվելը չեմ հասկանում (թե

66

որտեղից հնարեցիր՝ եդ էլ դու գիտես), այլ ամենից առաջ՝ որ որոշումներ ընդունելիս որոշիչ ա լինում մեծամասնության կարծիքը: Քանի դեռ Հայաստանում հասարակական ըմբռնումները են են, ինչ որ են, եթե, օրինակի համար, իսկապես ազատ հանրաքվեով որոշվի, ասենք, գրաքննություն մտցնելու հարցը, մեծամասնությունը, ինձ թվում ա, կարող ա միանգանայն ազատորեն քվեարկել բարոյական գրաքննության օգտին (մի բաժակ թույնի մասին կատակս սրան էր վերաբերում): Իսկ հասարակական ըմբռնումները փոխելու համար նաև պետք ա դրանք հասկանալ, հասկանալու համար էլ՝ երեւույթները բնորոշելիս խուսափել զգացնունքայնությունից: Իմ գտած բնորոշումը պահպանողականն էր, որ ես հակադրում էի հեղափոխականին: Դու իմ դիրքորոշումը համարում ես երրորդ կողմի դիրքորոշում: Լավ՝ քող լինեմ երրորդ կողմ, ես, որպես երրորդ կողմ, հիմնական կողմերից մեկին բանալի էի առաջարկում: Ինչու հանկարծ մտքովս անցավ առաջարկե՞լ: Որովհետեւ Վիոլետի նախորդ բազմաթիվ նամակներում եր միտքը՝ բանալու անհրաժեշտության մասին, հստակ տեսել էի: Այնինչ դու, քո զգացնունքային մոտեցնամբ, բախումը փաստորեն հանգեցնում ես հալածող–հալածյալ հակադրության: Գտածը լուծումն է երկրից գնալն ա: Բայց ես մի հարցում էլ հաղթած դեմոկրատիայի եւ իրագործված ազատության հանդեպ նամակական հավատող կարող ա զլիսի չար խաղալ. լավ իիշի՝ քեզ էնքան հարազատ Բուկովսկու համար է Ամերիկան էր բանտ:

Մարինե

Վահան իշխանյան

Կիրակի, 09:13, 15 հունիս, 2003

Երրորդ կողմի դիտարկումներ

մարինե, որ ասում էի դեմոկրատիայի մասին պատկերացումներդ սահմանափակ են, կարծում էի տասնիններորդ դարի սահմանների մեջ են, քարը տրաքի քսաներորդի առաջին կեսում լրվել են: պարզվեց սխալվել են, 2500 տարի առաջվա աթենքի դեմոկրատիայի սահմաններից պատկերացումներդ մի չոթ չեն անցել: սոկրատի հետ մեկ էլ ստրուկներին հիշեիր, որ փոքրանասնություն լինեին թե մեծամասնություն որոշումներ չեն կարող ընդունել, որովհետեւ նրանց մարդ չին համարվում:

խնդիր տամ զբաղվիր, ու ենթօգիադ ծախսիր. մեծամասնության որոշումներով են ստեղծվել չինաստանը, իրանը, սիրիան, այսինքն ըստ քեզ սրանք դեմոկրատական պետություններ են: բանաձեւը եթե ճիշտ լուծես կմոտենաս 21-րդ դար, սխալ՝ 2500-ից էլ հետ կզնաս, կհասնես 5-րդ հազարամյակ ու ականատես կլինես, թե ինչպես են հայերը առաջացել եւ կսկսես ավելի խորը հասկանալ պահպանողականության պատճառները: տենց հեշտ կլինի փոխել հասարակական ըմբռնումները:

Վահան

Մարինե Պետրոսյան

Կիրակի, 11:24, 15 հունիս, 2003

աթոռները մի ջարդիր

Վահան, պատկերացրու դու շատ նման ես Կամարի Տոնոյանին, եթե չես ճանաչում՝ ասեն որ գրող ա՝ սոցռեալիզմի անկեղծ ջատագով, ես իրա Գրական թերթում տպված մի հոդվածին պատասխանել եի, միության միջանցքում ինձ տեսավ՝ սկսեց մարքսիզմ լենինիզմից հարցաքննել: Խնդալուն էն էր, որ իրա հարցերի պատասխանները ես իհարկե գիտեի, բայց մարդը էնքան զայրացած էր ու ձեռքերը էնքան անկեղծ էին դողում, որ բան ասելն իմաստ չուներ:

Մարինե

Աննա Բարսեղյան

Կիրակի, 14:15, 15 հունիս, 2003

Երրորդ կողմի դիտարկումներ

<մեջքերում Վահանից>—մտքով անցկացրածը գրականության մեջ լցնելու ազատությունը հնարավորություն է տալիս մարդկանց, ոչ գրողներին նույնպես մտքով անցկացնել անանցկացնելին, ու եդ ազատության արդյունքում արեւմուտքում, հատկապես ամերիկայում, սրբաց զարգացան նոր տեխնոլոգիաները: մարդիկ մտքներով անցկացրին, պատկերացրեցին այլ իրականություններ ու ստեղծեցին, ինչպես վերտուալ իրականությունը:

Վահան այդ վիրտուալ իրականությունը իեզ էլ մարդկանց մտքով անցածը չէր, եղան անմեղ, եթե չլիներ ամերիկյան ռազմավարական իդեոլօգիան, ապա ընդհանրապես այսպես կոչված

նոր տեխնոլօգիաները չին առաջանա. Ես քնություն եմ հանձնել

Advanced Virtual Reality Systems and TelePresence-ից, համել!

իսկ քո ասած դեմոկրատիան այն կլիներ որ երկրի բյուդշետը ավելի շատ օգտագործվեր մշակույթի եվ ոչ ռազմամթերքի արտադրության եվ հետո ցուցադրության վրա՝ պատերազմի ծևով.

Աննա

Վահան իշխանյան

Երկուշաբթի, 09:38, 16 հունիս, 2003

սեբս գրականություն վիրտուալ

աննա, համաձայն կլինես, որ ռազմական իդիալոգիան երկնքից չի իջել, մարդն է հորինել: Վիրտուալ իրականություն հասկացությունն էլ մարդն է հորինել, ոչ զինվորական, գիտնականը (թեեւ դա եական չի) հենց ամերիկայում, իենց քո իիշած սեքսուալ հեղափոխության ժամանակներում 60ից 70 թվերին, երբ գրականությունը վերջնականապես ազատագրվում էր տարրեր արգելվներից՝ դատերից, գրի վաճառքի դժվարություններից եւ այլն:

իսկ «քո դեմոկրատիան», որ ասում ես, իմ դեմոկրատիան ո՞յն երկրի բյուջեն պիտի մշակույթի վրա ծախսեր: Ես նկատի եմ ունեցել արեւմտյան դեմոկրատական համակարգերը, ներառյալ եւ հատկապես ամերիկան: որու նկատի ունես, որ ամերիկան մշակույթի վրա՝ ծախսի բյուջեն եւ ոչ թե ռազմարդյունաբերության, չի ծախսու՞մ մշակույթի վրա: Ծիշոն ասած, կարծում եմ, հարցը, թե ամերիկան իր բյուջեից ինչքան է ծախսում մշակույթի վրա եւ ինչքանը ռազմական արդյունաբերության, չի առնչվում դեմոկրատական ազատությունների ու գրականության մասին գրածիս: իհարկե, գիտեմ, որ հակագլորալիստ ու հակամերիկյան լինելը հիմա մողայիկ է: ասեն, որ ես համակրում եմ հակագլորալիստական շարժումները: շատ հետարքիր թենա է գլորալիզացիան, որ առանձին քննարկման նյութ է: առանձին թենա է նաեւ մշակույթին բյուջեից գումարներ հատկացնելու խնդիրը, որը տարրեր երկրներում՝ հայաստանում, ամերիկայում, եվրոպայում, տարրեր հարցեր է լուծում: կարծում եմ սա նույնպես առանձին քննարկման թենա է: հույս ունեմ, որ գլորալիզացիային եւ պետության մշակույթի նկատմամբ քաղաքականությանը առանձին քննարկաշարով կանդրադառնանք:

Վահան

Աննա Բարսեղյան

Երկուշաբթի, 12:05, 16 հունիս, 2003

Երկրորդ սեբս- գրականություն վիրտուալ

Վահան! կարծում եմ որ շատ գիտնականներ կան որ շատ լավ բաներ են մտքներով անցկացնում, բայց ամեն գիտական նախագիծ չէ որ ֆինանսավորվում է, սա է իմ ասածը, որ գիտության հեզեմնիկ դերը շատ կոնկրետ է. Ամերիկայում մշակույթային բյուջեն պետության բյուջեյի հետ կապ չունի, այն հիմնականում մեծ մեսենատների վրա է, ի տարրերություն եվրոպայի.

Ես պարզապես չեմ համարում դեմոկրատական, որ մի երկրի ռազմական տարեկան բյուջեն եսպես սինվոլիկօրեն կազմում է մի քանի տասնյակ երկրների տարեկան բյուջեների գումարը.

ու որ դա մեկը մյուսի հետ կապված պրոբլեմ է, նամանավանդ հակագլորալիստների պնդումով. Ես չեմ կարծում որ հակամերիկյան եմ, սակայն չեմ կարծում նաեւ որ եթե հավանում եմ, ամերիկյան արվեստը ուրեմն պետք է ամեն ինչ աչքափակ ընդունու.

չմոռանամ ասել որ անցիալ տարի գլորալիզացիա եվ մշակույթ խորագրով, կոնֆերանս-քննարկում էինք կազմակերպել, երեվանում, խոսեցին նաեւ կրեօլ մշակույթի մասին, կարող ես տեքստեր նայել Ուսուպիական հանդիպումներ 1,

http://www.utopiana.am/rencontres02/grp_rencontres02.htm

այս սեպտեմբերին էլ կլինի Ուսուպիական հանդիպումներ 2,

մարմին եվ նրա պահանջները թեմայով, գուգահեր մարմին եվ միջավայր նախագծին.

Եվ հետո ինչու ես բարկանում գրուցում եմք չէ.

Աննա

69

Վահան իշխանյան

Երկուշաբթի, 16:38, 16 հունիս, 2003

Երկրորդ սերս- գրականություն վիրտուուալ

չեմ բարկանում, հակառակը, ինձ թվաց թե դու ես մի քիչ բարկացել, որ տեքստիս մեջ ամերիկայի անունն ես կարդացել: Ճեր ուսուպիական հանդիպումների վերջին օրը եղել եմ, պատահական: Զալոյանն էր խոսում, մեկ էլ լավ ռոմ էին բաժանում: Կարծեմ ռոմը մի քիչ հասանելիքից շատ խմեցի՝ մեջը քանած կանաչ լիմոն: Էր օրը հիշում եմ, լավ ժամանակ անցկացրի:

սայթը թեթև նայեցի, կնայեմ էլի: իսկական քննարկման թեմա է՝ 1-ին ուսուպիական հանդիպումներ: Կարծում եմ վատ չէր լինի առաջարկեիր որպես նոր քննարկում: մանավանդ էնտեղ տես աշոտ մանուչարյանի խոսքը:

Վահան

«ԲՆԱԳԻՐ հանդեսը որպես փորձարարության տեղ» քննարկաշարի շարունակությունը (սկիզբ՝ ճախորդ համարում)

Յարութ Սիմոնեան

Երկուշաբթի, 06:16, 21 ապրիլ, 2003

Վթարային ալեկոսություններ

կարծում եմ որ միակ ինֆանտիլը ես եմ ըստեղ, քանի որ բոլորդ վթարային վիճակում էք, իսկ ես փորձում եմ անդրադառնալ Հրաչի վերջին տեքստին եւ շարունակել մեր քննարկումները, չնայած չգտայ իր գրածը որի հիման վրայ շարունակէի...

մի խօսք ինֆանտիլի մասին, չնայած որ փակել էիք ես թեման:

Կարծում եմ որ շատ ավելի լավ ա որ «միջին» սերունդը ինֆանտիլ լինի կամ կրի այդ պիտակը, քանի որ վախենում եմ 90ականների սերունդը, ի հարկէ ոչ բոլորը, մնա էնթեցիլ եւ չհասանի նոյնիսկ իր հասունության ֆազային...

ինչքան յիշում եմ առաջարկված էր խօսել փորձարարությունից :

Ես համամիտ եմ Հրաչի հետ որ փորձարարությունը կապված է դէկոնստրուքցիայի հետ, բայց համաձայն չեմ որ հեղինակը ինքը կարող ա դէկոնստրուքցիայի ենթակել իր իսկ գործը, դա ավելի շատ նման ա ինտերպետացիայի քան դէկոնստրուքցիայի, ինչպէս հոգեբանը չի կարող իրեն մեկնաբանել ու դիմում ա ուրիշ հոգեբանի: Ես կարծում եմ որ փորձարարը դէկոնստրուքցիայի ա ենթակում ոչ թէ նախապէս արած իրա գործը, այլ ամբողջ գրականությունը՝ արժեքագրկելով գրականության հաստատվածը եւ արժեվորելով չայտնվածը գրականության մեջ, քանի դէկոնստրուքցիայի հանեց փիլիսոփայության դաշտից եւ տեղադրեց կերպարվեստի մեջ, եւ կերպարվեստը ի շնորհիվ իրան չենք հասկանում միայն կտավ եւ յուղաներկ: ինչպէս ռեբեկա հորնը Պոեզիան հանեց թղթի վրայից ու տեղադրեց ցուցարակի պատին, ինչպէս քեյճի էսպատիմենտը երաժշտութեան մեջ ու Սերգ Քրոնինկիեմինը բալետի մեջ, որի շնորհիվ գոյություն ունի ժամանակակից պար. էլ խօսքը չի գնում սյուրիհալիստների էքսբերիմենուի մասին, որոնք արվեստի տարբեր ասպարեզները համատեղեցին իրար:

Եւ վերջապէս փորձարարությունը սկսնակների խառ չի, որ հետո մեծանան ու «իսկական» «գրականության» հետ գործ ունենան, այլ նա մտածողություն ա, որ կամ կամ չկամ:

Հրաչ համաձայն չե՞ս հետու?

Յարութ Սիմոնյան

Հրաչ Բայադյան

Երեքշաբթի, 21:01, 22 ապրիլ, 2003

Վթարային ալեկոսություններ

Պետք է ներողություն խնդրեմ բանախմբի անդամներից «վթարի» համար (հատկապես Սոմիա Սամանից, քանի

որ կարծեմ բոլորից ավելի իրեն բարկացրեց այս վթարը), որի պատճառը մասամբ իմ անզգուշությունն էր, մասամբ էլ ֆորումի միջավայրի որոշ հատկություններ, որոնք անսովոր էին ինձ համար հատկապես այլ ֆորումների համեմատությամբ եւ անսպասելի հետեւանքներ ունեցան: Ինչեւէ, հիմա արդեն կարող եմ ասել, որ հույս կա, թե հնարավոր է վերականգնել վթարված քննարկաշարը, իսկ եթե՝ ոչ, ապա կարծում եմ ընդհանուր ջանքերով վերականգնված նամակները եւ առանձին երկխոսություններ թույլ կտան առանց դժվարության շարունակել քննարկումը:

Նորից վերադառնալով Ֆորումի տարածք՝ շատ հուզիչ իրադրություն գտա. մի կողմից՝ ինքնապաշտպանության եւ ճգնաժամը հաղթահարելու աներեր վճռականությունն ու հնարամտությունը, իսկ մյուս կողմից՝ Սայտակի՝ 1988-ի երկրաշարժից հետո քանդված քաղաքը հիշեցնող մի տեսարան. կործանված շեմքերի կողքին՝ ինքնաշեն կացարաններ, աճապարանք ու հախուրն փրկարարական աշխատանքներ...

Պատասխանելով Յարութի՝ ինձ ուղղված հարցին: Լիովին համաձայն եմ քո բոլոր ծեւակերպումներին եւ ուրախ, որ մի տարբեր ծեւով եւ տեղին օրինակներով դու նկարագրում ես փորձարարությունը ավելի մանրամասնորեն եւ դիպուկ, քան ես արել էի: Ժամ-Ֆրանսուա Լիուտարը «Պատասխանելով հարցին. ի՞նչ քան է պոստնոդեռնիզմը» հոդվածում այդպես էլ նկարագրում է ստացած ժառանգությունը կասկածի տակ առնելու արվեստագետի մղումը: Սեզանի ոտնձգությունն ուղղված էր իմպրեսիոնիստների «տարածության» դեմ, Պիկասոին ու Բրաքինը՝ առարկայականության: Իսկ Դյուշանը խզում է կապը այն նախադրույթի հետ, թե նկարիչն անպայման պետք է նկար նկարի...

Ծիշտ է սակայն եւ այն, որ քո մեկնաբանության մեջ ի վերջո փորձարարությունը վերստին դառնում է շատ ավելի արմատական եւ հեղաշրջող-փոխակերպող մի քան, քան ես կցանկանայի տեսնել իմ սկզբնական հարցադրման մեջ:

Յրաք Բայադյան

Հ.Գ. Մինչ ես կգրեի այս նամակը, քննարկաշարը մասամբ, բայց վերականգնվեց, գուցե հետագայում ավելի բարելավվի...

Աննա Բարսեղյան

հինգշաբթի, 14:36, 12 հունիս, 2003

Արվիին

ամբողջ տեքստից պահել եմ ինձ հետաքրքրող հատվածը եվ անում եմ մի փոքր ակնարկ Արվիին.

<<Մարդ հազարամյակներ շարունակ մնացել է, ինչպես կծեւակերպեր Արխստոտելը <<<Ապրոլ մի կենդանի + ընդունակ existence politique- ի >>> Modern <պատմական նշանակությամբ> մարդը մի կենդանի է, որի POLITIQUE-ում իր կյանքը հարցադրման մեջ է>>> մեջբերում Maurizio Lazzareto-ի :

ահա թե ինչու մարդը միայն հզոր լինելով, իշխանություն ունենալով է, որ կարող է անել կամ չանել, հաջողել կամ ոչ, իրեն կորցնել կամ ոչ, մարդը միակ կենդանին է, որի կյանքում երջանկությունը գերնպատակ է. Այսինքն քաղաքական կյանք նշանակում է մարդկային կենսակերպը ուղղել դեպի երջանկության իդեան.

- Հիմա ուր է գրականության կամ արվեստի տեղը. գրողն ու արվեստագետը պատասխանատվություն ունեն հասարակության մեջ հանձն առնելու ինչ-որ խնդիրներ??? թե մնում է նարսիսիկօգերանական մղումներին զարկ տալով հասնեն իրենց անհատական իշխանությանը???

Աննա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Սամվել Յավոյան</i> <i>Բանաստեղծություններ</i>	3
<i>Գոհար Նիկողոսյան</i> <i>Պատուղը հորինված տղերքի ու անհորին անձրևի ճամփին</i>	5
<i>Սամվել Մկրտչյան</i> <i>Բանաստեղծություններ</i>	9
<i>Վահրամ Մարտիրոսյան</i> <i>Գրելու արվեստը</i>	10
<i>Գ. Գրիգորի</i> <i>Բանաստեղծություններ</i>	14
<i>Գագիկ Կիլիկյան և Մհեր Բեյլերյան</i> <i>Փնտրվում է</i> <i>Տեղեկանք առ այն...</i>	18 21
<i>Արծուի</i> <i>ԿԱՐՃ ՇԱԼՎԱՐ</i>	25
<i>Նարեկ Նիկողոսյան</i> <i>Վիժված սեր</i> <i>Լողոված վերջը</i>	31 31
<i>Դարեթ Մուրադյան</i> <i>Փշե պսակ</i>	33
<i>Վահան Իշխանյան</i> <i>Կանաչ օդանավակայան</i>	36
<i>Կարինե Գասպարյան</i> <i>Բանաստեղծություններ</i>	41
<i>Գրիգոր Խաչատրյան</i> <i>ճառ՝ արտասանված գրողների փողոցում</i>	43
Ֆ Ո Ր Ո Ւ Մ <i>Բաբաջանյանի արձանը</i> <i>Ազգայնականությունը գրականության մեջ</i> <i>Գրաքննություն</i> <i>«Բնագիր հանդեսը որպես փորձարարության տեղ» քննարկաշարի շարունակությունը</i>	46 51 58 68